# ԱՅԲ. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006-2015

ԱՅԲ. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006-2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



# «ԱՅԲ» ԱԿՈՒՄԲ

Ինչու | **Առաքելություն** **12**

Ինչպես | **Համայնք և օրինակելի կրթական միջավայրեր** **14**

Ովքեր | **«Այբ» ակումբի անդամներ** **16**

**Միջոցառումներ** **28**

**Ուշագրավ փաստեր և թվեր** **34**

**Կարևոր իրադարձություններ** **36**

# «ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ


Ինչու | **Նպատակ** **40**

Ինչպես | **Օրինակելի կրթական միջավայրեր** **42**

Ովքեր | **Հոգաբարձուների խորհուրդ և թիմ** **44**

**Ծրագրեր** **46**

«Այբ» կրթական հանգույց 48

- «Այբ» դպրոց 56
- «Այբ»-ի մենտորության ծրագիր 70
- Ֆաբլաբ 74
- Գիտության և տեխնոլոգիայի կենտրոն 80
- Սբ. Թարգմանչաց եկեղեցի 84

Դիլիջանի կենտրոնական դպրոց 90

Կրթության գերազանցության ազգային ծրագիր 94

Դպրոցական մրցույթներ 112

- «Կենգուրու» մաթեմատիկական մրցույթ 116
- «Ռուսական արջուկ» ռուսերենի մրցույթ 122
- Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար 126
- «Մեղու» հայերենի մրցույթ 132
- Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա 138

«Այբ» տնտեսական ֆորում. AybEF 144
Ազգային երգ ու պարի ակադեմիա 148
Կրթաթոշակներ լավագույն բուհերի ուսանողներին 152
«ԱյբԼաբ» 156
Առարկայական խորացված դասընթացներ 168
Վարպետության դասեր 176
Ամառային մեդիադպրոց 184
Ծաղկունքի բաց դպրոց 186
«MIT OpenCourseWare» հայելային կայք 188
**Ուշագրավ փաստեր և թվեր 190**
**Կարևոր իրադարձություններ 192**

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑ

Ինչու | **Առաքելություն** **196**
Ինչպես | **Կրթության ճարտարապետություն** **200**
Ովքեր | **Հոգաբարձուների խորհուրդ և համայնք** **212**
**Նվաճումներ** **232**
**Ազդեցություն** **250**
**Ուշագրավ փաստեր և թվեր** **258**
**Կարևոր իրադարձություններ** **260**

# ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ


Ինչու | **Առաքելություն** **264**

Ինչպես | **Կրթության ճարտարապետություն** **266**

Ովքեր | **Հոգաբարձուների խորհուրդ և համայնք** **280**

**Նվաճումներ** **288**

**Ազդեցություն** **292**

**Ուշագրավ փաստեր և թվեր** **296**

**Կարևոր իրադարձություններ** **298**

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Այբ» կրթական հիմնադրամ** **302**

**«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ («Այբ» դպրոց)** **308**

**«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ** **316**

Ում շնորհիվ | **Աջակիցներ** **318**

Ինչպես միանալ | **Դարձի՛ր կրթության բարերար** **336**



# «Այբ» ակումբ

2006-2015 թթ.

ԻՆՉՈՒ

# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այբ» ակումբի առաքելությունն է՝ միավորել մարդկանց, ովքեր գիտակցում են կրթության առաջնային դերը Հայաստանի վերափոխման գործում և ձգտում ստեղծել որակյալ, բազմաբևեռ, օրինակելի կրթական համակարգ մեր երկրում: «Այբ» ակումբը զարգացնում է կրթության մեկենասության գաղափարը և ստեղծում կրթության աջակիցների համաշխարհային հզոր ցանց, որի համակարգված ջանքերի և ներդրումների շնորհիվ կկերտվեն ուսյալ, առաքինի, ապագայի տեսլականով երիտասարդների նոր սերունդներ՝ պատրաստ վերափոխելու աշխարհը դեպի լավը:

«Այբ» ակումբը, սահմանելով ամբողջ «Այբ» կրթական շարժման գաղափարային բովանդակությունն ու զարգացման ռազմավարությունը, իր առաքելությունն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամի գործունեության միջոցով:

# ՄԱՐԴԻԿ,

ովքեր միավորվել են Հայաստանը կրթությամբ վերափոխելու և նոր սերունդներ կերտելու գաղափարի շուրջ

Ոչ պաշտոնական

# ԿԱՌՈՒՅՑ

(գլխավոր գրասենյակը՝ Երևանում),

որն իր առաքելությունն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամի միջոցով

Այբ ակումբ

**«Այբ» համակարգում գերագույն ղեկավար մարմին**

ԻՆՉՊԵՍ

# ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

Երկիրը կրթությամբ վերափոխելու գաղափարի իրականացման համար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ կրթության, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտում: Հենց դպրոցում է երեխան ձեռք բերում ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ, այլև անձի ձևավորման և արժեհամակարգի ու աշխարհընկալման հիմքերը: Եվ «ո՞վ է սահմանում կրթության նպատակներն ու տալիս կրթության զարգացման վեկտորը» հարցի պատասխանը միանշանակ է՝ ոչ նախարարությունը, ոչ դպրոցի տնօրինությունը, ոչ էլ ծնողը, այլ հասարակությունը՝ իր լայն իմաստով: Հասարակությունը պետք է սահմանի կրթության զարգացման ուղենիշները, ավելին՝ հասարակությունը պետք է անմիջականորեն ներգրավված լինի զարգացման գործընթացում: **Այս մոտեցումը «Այբ»-ի առաջին սկզբունքն է՝ ձևավորել մարդկանց համայնք, ովքեր պատրաստ են իրենց պատասխանատվության ներքո վերցնել երկրի կրթական համակարգի զարգացման խնդիրը:**



Հասկանալուց հետո, թե ո՛վ պետք է տեր կանգնի կրթությանը, հարց առաջացավ, թե ինչպե՛ս իրականացնել կրթական բարեփոխումներ: Այս հարցի պատասխանը նույնպես հստակ էր՝ օրինակելի կրթական ծրագրերի միջոցով, որոնք օրինակ կդառնան և կբազմապատկվեն՝ բերելով համակարգային փոփոխություններ երկրի կրթական ոլորտում: **Այս մոտեցումն էլ դարձավ «Այբ»-ի երկրորդ հենքը՝ ստեղծել և բազմապատկել օրինակելի կրթական միջավայրեր:**

Առաջին սկզբունքի իրագործման նպատակով ընտրվեց ոչ պաշտոնական հասարակական կազմակերպության մոդելը՝ «Այբ» ակումբը:

Երկրորդ սկզբունքի իրագործման համար հիմնադրվեց «Այբ» կրթական հիմնադրամը:

ՈՎՔԵՐ

# «ԱՅԲ» ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Հիմնադրումից (2006 թ.) մինչ օրս «Այբ» ակումբն աճել է ավելի քան հինգ անգամ և այսօր միավորում է 44 անդամի*, ովքեր մշտապես աջակցում են «Այբ»-ի բոլոր ծրագրերին:

## ՀԱՅԱՍՏԱՆ



Արամ Արամյան
Երևան
Հիմնադիր,
«Նոր Զովք» խանութների ցանց



Արամ Մեհրաբյան
Երևան
Տնօրեն,
Դիլիջանի կենտրոնական դպրոց,
«Փրինթինֆո» հրատարակչություն



Արամ Փախչանյան
Երևան
Տնօրեն,
«Այբ» դպրոց,
Փոխնախագահ,
«ABBYY» ընկերություն



Արսեն Ղազարյան
Երևան
Գլխավոր տնօրեն / Միության նախագահ
«Ապավեն» ընկերություն,
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն



Դավիթ Փախչանյան
Երևան
ՀՀ ՊՆ տեղակալ - ՊՆ ռազմարդյունաբերության պետկոմիտեի նախագահ



Մանուկ Հերգնյան
Երևան
Կառավարող գործընկեր,
«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ,
«Գրանատուս Վենչուրս» ՓԲԸ

* «Այբ» ակումբի անդամների թիվը ներկայացված է տպագրության պահի՝ 2017 թ. հունիսի 1-ի դրությամբ:



Մեսրոպ քահանա Արամյան
Երևան
ՀՀ նախագահի
խորհրդական



Նատալյա Ռիժկովա
Երևան
Գլխավոր տնօրեն,
«ARK Media» ընկերություն



Սամվել Դովլաթյան
Երևան
Տնօրեն,
«Մելինեթ» ՍՊԸ



Յուլիա Դանիելյան
Երևան
Գործարար

## ՌՈՒՍԱՍՏԱՆ / ՀԱՅԱՍՏԱՆ



Ավետիք Չալաբյան
Մոսկվա / Երևան
Ավագ գործընկեր,
McKinsey & Company



Աշոտ Ասլանյան
Մոսկվա / Երևան
Հիմնադիր,
«Աէրոսիբսերվիս» ՍՊԸ



Արտաշես Շիրիկյան
Մոսկվա / Երևան
Տնօրենների խորհրդի
նախագահ,«Puro Noble»,
«Elenex», «ARK Media»
ընկերություններ

# ՌՈՒՍԱՍՏԱՆ



Անահիտ Ադամյան
Մոսկվա
Գործընկեր,
«Ի-Վի Քոնսալթինգ»,
Ռուսաստան



Արեգ Ջաքոյան
Մոսկվա
Գլխավոր տնօրեն,
«Բեսթ-Տելեկոմ» ՓԲԸ



Արմեն Կազարով
Մոսկվա
Գլխավոր տնօրեն,
«Սպեցտորգ» ՓԲԸ



Արսեն Գալստյան
Մոսկվա
Հիմնադիր,
«Մեդանկո» ՍՊԸ,
«Գեմոստատիկ» ՍՊԸ



Արտակ Հովհաննիսյան
Մոսկվա
Գլխավոր տնօրենի՝
բիզնեսի զարգացման գծով
տեղակալ,
EPAM Systems Inc



Արթուր Ալավերդյան
Մոսկվա
Գործարար, ընկերության
սեփականատեր
ProfHolod ընկերություն



Արթուր Ջանիբեկյան
Մոսկվա
«Գազպրոմ Մեդիա
Հոլդինգ» ԲԸ ժամանցային
հեռուստաալիքների
սուբհոլդինգի ղեկավար
Comedy Club Production-ի
հիմնադիր



Աշոտ Թումասյան
Մոսկվա
Հիմնադիր,
«Կրասստյաժմաշ» ՍՊԸ



Վարդան Բաբիկյան
Մոսկվա
Գլխավոր տնօրեն,
«ՄԿՖ Պրոդէքս խումբ» ՍՊԸ



Վիկտոր Ակուլյան
Մոսկվա
Գործընկեր,
«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ»
Ռուսաստան և ԱՊՀ



Կարո Սարգսյան
Մոսկվա
Հիմնադիր,
«Սպեցտորգ» ՓԲԸ



Ռուբեն Հարությունյան
Մոսկվա
Գլխավոր տնօրեն,
«Henderson-Ռուսիա»
ընկերությունների խումբ



Սարգիս Բադալյան
Մոսկվա
Հիմնադիր,
«Սիմս-2» ՍՊԸ



Սուրեն Հարությունյան
Մոսկվա
Խորհրդատու,
McKinsey & Company

## ԱՄՆ



Արա Հայրապետյան
Չիկագո, Իլինոյս նահանգ
Հետազոտող,
Citadel Securities



Արմինե Առուստամյան
Նյու Յորք, Նյու Յորքի նահանգ
Ֆինանսական տնօրեն,
Ecohealth Alliance



Արսեն Մամիկոնյան
Բոստոն, Մասաչուսեթսի
նահանգ
Գործարար



Արթուր Բերդ
Նյու Յորք, Նյու Յորքի նահանգ
Հիմնադիր,
General Quantitative,
Wealth Technologies



Վահե Ամիրբեկյան
Սան Ֆրանցիսկո,
Կալիֆոռնիայի նահանգ
Ռիսկերի կառավարման
գծով փոխնախագահ,
Signifyd Inc.



Դավիթ Յան
Սան Ֆրանցիսկո,
Կալիֆոռնիայի նահանգ
Հիմնադիր,
ABBYY, iiko, Platius



Կարեն Մուսաելյան
Նյու Յորք, Նյու Յորքի նահանգ
Հիմնադիր,
HiQu capital



Լևոն Ղազարյան
Գրինվիչ,
Կոնեկտիկուտի նահանգ
Ներդրող



Լևոն Ֆրնջիբաշյան
Շելթոն, Կոնեկտիկուտի
նահանգ
Տնօրեն,
UBS



Ռուբեն Սիմոնյան
Իրվին, Կալիֆոռնիայի
նահանգ
Նախագահ,
Simonian & Associates
Consulting Inc.



Սահակ Պետրոսյան
Ջերսի Սիթի, Նյու Ջերսիի
նահանգ
Փոխնախագահ,
Goldman Sachs Asset
Management



Սերգեյ Ստեփանյանց
Վաշինգտոն, Կոլումբիայի
շրջան
Ղեկավար,
Amazon

## ՌՈՒՍԱՍՏԱՆ / ԿԻՊՐՈՍ



Աշոտ Մկրտչյան
Մոսկվա / Լիմասոլ
Նախագահ,
«Վիզա Կոնկորդ» ՓԲԸ



Մարտիրոս Մինասյան
Լիմասոլ
Տնօրեն,
Egard Management

## ԲԵԼԱՌՈՒՍ



Արմեն Խեչոյան
Մինսկ
Գլխավոր տնօրեն,
«ԱՆԻՎ» հայագիտական
հետազոտությունների
զարգացման և աջակցության
հիմնադրամ, «ԱՆԻՎ» ամսագիր

## ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ



Արտյոմ Գրիգորյան
Լյուքսեմբուրգ
Գործադիր տնօրեն,
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ
Լյուքսեմբուրգ» ՓԲԸ

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ



Արթուր Թովմասյան
Լոնդոն
Հիմնադիր, ընկերության նախագահ
«International Food Technologies» LTD

«Այբ» ակումբը միավորում է մարդկանց, ովքեր գիտակցում են մեր երկրի կրթական համակարգի կատարելագործման կարևորությունը երկրի զարգացման գործում ու համակարգված ներդրումներով ձգտում լայնածավալ ազդեցության փոփոխություններ բերել ոլորտում: Ակումբի անդամները, լիովին կիսելով կառույցի առաքելությունն ու նպատակները, կամավոր պարտավորություն են ստանձնում մասնակցելու ինչպես «Այբ» ակումբի ամենօրյա կյանքին և աշխատանքներին, այնպես էլ «Այբ»-ի մյուս կառույցների՝ «Այբ» կրթական հիմնադրամի, Երևանի «Այբ» դպրոցի, Դիլիջանի կենտրոնական դպրոցի գործունեությանը՝ ներգրավվելով դրանց կառավարման համակարգում:

«Այբ» ակումբի ամեն անդամ իր մասնակցությունն է բերում «Այբ»-ին մասնավորապես երկու ճանապարհով.

**ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ**՝ հանդես գալով «Այբ»-ի ղեկավար մարմիններում, կայացնելով որոշումներ, ներգրավվելով «Այբ»-ի մենտորական ծրագրում և սեփական օրինակով, խոսքով ու գործով հոգ տանելով երիտասարդների մասին, հաղորդակից դարձնելով նրանց սեփական փորձին, ձեռքբերումներին, գիտելիքներին, օգնելով առաջին քայլերը կատարել կարիերայի կառուցման ու կյանքում կայացման գործում.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ**՝ տարեկան անդամավճարների միջոցով ապահովելով «Այբ» հիմնադրամի ֆինանսական կայունությունն ու կենսագործունեությունը և նպաստելով «Այբ»-ի ծրագրերի իրականացմանն ու առաջխաղացմանը:


Այբ

ՈՎՔԵՐ | «ԱՅԲ» ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

«Այբ» ակումբի օպերացիոն կառավարումն իրականացվում է «Այբ» ակումբի վարչության կողմից, որում ակումբի անդամների փակ քվեարկությամբ ընդգրկվում են ակումբի 5 անդամներ: «Այբ» ակումբի լիազորությունների ժամկետը երեք տարի է:

Կառավարելով ակումբի ընթացիկ գործունեությունը՝ վարչությունը ստեղծում է այնպիսի մեխանիզմներ ու միջավայր, որոնք նպաստում են յուրաքանչյուր ակումբի անդամի ներգրավվածությանը թե՛ ակումբի և թե՛ «Այբ» համակարգում գործող բոլոր կառույցների գործունեության մեջ:



Արտաշես Շիրիկյան
Նախագահ
*Հայաստան/Ռուսաստան*



Ավետիք Չալաբյան
*Հայաստան/Ռուսաստան*



Արմինե Առուստամյան
*ԱՄՆ*



Ռուբեն Հարությունյան
*Ռուսաստան*



Սամվել Դովլաթյան
*Հայաստան*

«Այբ» ակումբի անդամները ձևավորում են՝

- «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների՝ վեց անդամից բաղկացած խորհուրդը, որը կազմվում է հերթագայության սկզբունքով և իրականացնում «Այբ» հիմնադրամի գործառնական կառավարումը երկու տարվա ընթացքում.
- «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի կազմը՝ առաջադրելով թեկնածուներ թե՛ ակումբից, թե՛ համայնքից և թե՛ տարբեր մասնագիտական ոլորտներում ու հասարակական կյանքում ճանաչված անձանց շրջանակից, ովքեր ունեն իրենց հստակ դերակատարությունը դպրոցի կառավարման համակարգում («Այբ» դպրոցի ՀԽ-ի կազմը հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ-ի կողմից).
- ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ՝ Դիլիջանի կենտրոնական դպրոցի հոգաբարձուների խորհուրդը՝ կրկին առաջադրելով համապատասխան թեկնածուներ (ՀԽ-ի կազմը նույնպես հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ-ի կողմից).
- «Այբ» ակումբի հանձնաժողովներ և հանձնախմբեր, որոնք համակարգում են ակումբի գործունեության տարբեր ոլորտները, ինչպես նաև նախագծային կոմիտեներ, որոնք ակտիվ ներգրավված են հիմնադրամի նախագծերի իրականացման գործընթացում՝ կայացնելով նախագծերի զարգացման վերաբերյալ ռազմավարական որոշումներ.
- 2006 թ.-ից ի վեր (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) գործում է 15 կոմիտե, որոնցում ներգրավված է ակումբի անդամների 50%-ից ավելին:



# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տարին երկու անգամ՝ Սրբոց Թարգմանչաց ամառային և աշնանային տոների շրջանում, «Այբ» ակումբի անդամները աշխարհի տարբեր անկյուններից հավաքվում են Հայաստանում, որպեսզի հարգանքի տուրք մատուցեն մեր երկիրը համաշխարհային մշակութային ասպարեզ դուրս բերած մեծերին՝ սբ Մեսրոպին, սբ Սահակին և մյուս սուրբ թարգմանիչներին, ովքեր համախմբվեցին կրթության գաղափարի շուրջ և կառուցեցին Դպրոց՝ թարգմանելով մարդկային մտքի համաշխարհային գանձարանի անհամար նմուշներ:

Անդրադառնալով մեր ակունքներին՝ մենք միավորվում ենք Հայաստանում, որպեսզի մեկ անգամ ևս վկայենք մեր կապը մեր մեծ նախնիների հետ, մեր խորին հարգանքն ու խոնարհումը նրանց առջև, հաստատենք կրթվելու և կրթելու մեր պատրաստակամությունը՝ պահպանելով ժամանակների ու սերունդների միջև կապը:









Եռօրյա ավանդական միջոցառումները, որոնք տեղի են ունենում «Այբ» ակումբի վարչության ընդլայնված նիստի շրջանակում, ունեն տարբեր ձևաչափեր: Միջոցառումներն ընդգրկում են՝

- **աշխատանքային նիստեր**, որոնց ընթացքում քննարկվում են «Այբ» համակարգին վերաբերող ռազմավարական հարցեր և կայացվում որոշումներ.
- **հանրային միջոցառումներ**, երբ հասարակությանը ներկայացվում են մեր ձեռքբերումներն ու նվաճումները, նոր նախագծերն ու ծրագրերը՝ հանրային քննարկումների և լսումների միջոցով, և վարպետության դասեր՝ հետաքրքիր ու արդիական թեմաներով՝ ակումբի անդամների ու բարերարների մասնակցությամբ.
- **ընտանեկան հավաքներ ու համայնքաշինական միջոցառումներ**, որոնք միտված են ջերմ և անմիջական միջավայրում ակումբի անդամների շփմանը, համայնքի ամրապնդմանն ու համախմբվածությանը, ինչպես նաև ընդլայնմանն ու զարգացմանը:





«Կիլիկիա» նավի վրա, նավապետ Կարեն Բալայանի հետ:



Ազգային պարի «վարպետության դաս»՝ անձամբ Գագիկ Գինոսյանի կողմից, Դիլիջանում՝ ընտանեկան հավաքի ժամանակ



«Այբ»-ի համահիմնադիրներից վեցը՝ ձեռքներին պահած ութ տարի առաջ նույն կազմով մի նկար՝ արված 2006 թ. փետրվարի 5-ին, երբ որոշվեց հիմնադրել «Այբ»-ը:



«Այբ» դպրոցի տնօրեն Դավիթ Սահակյանը հանձնում է ավարտական հավաստագիրը «Այբ» դպրոցի շրջանավարտ Անի Ալավերդյանին:



«Այբ» ակումբի անդամներն այցելել են «Այբ» հիմնադրամի գրասենյակ՝ ծանոթանալու թիմին և ծրագրերի ձեռքբերումներին:



«Այբ» դպրոցի շրջանավարտ Դավիթ Գրիգորյանը իր մենտորի տիկնոջ Մայա Բելուբեկյանի (ԱՄՆ) հետ:



«Այբ» ակումբի անդամները՝ «Այբ» տարրական դպրոցի օծման արարողությանը (2014 թ.):



«Այբ» ակումբի անդամ, «Այբ» դպրոցի ներկայիս տնօրեն Արամ Փախչանյանը խորհրդանշական կախազարդն է փոխանցում մենտորության ծրագիր մուտք գործող Սերգեյ Հովակիմյանին:



# Ուշագրավ փաստեր և թվեր

2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ



36

**ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄ**

6

**ԵՐԿՐԻՑ**

*Ակումբի առաքելությունն է՝ կերտել ուսյալ, առաքինի, ապագայի տեսլականով երիտասարդների նոր սերունդներ՝ պատրաստ վերափոխելու աշխարհը դեպի լավը*

4 362 864

**ԱՄՆ ԴՈԼԱՐ**

*ներդրել են միայն «Այբ» ակումբի անդամները Հայաստանի կրթության ոլորտում՝ «Այբ»-ի ծրագրերի միջոցով*

# «Այբ» ակումբ

## ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2006 թ. փետրվար**
Մի խումբ ընկերներ, մտահոգված մեր երկրի ու մեր երեխաների ապագայով, համոզված լինելով, որ իրենց անձնական և մասնագիտական հաջողությունների հիմքում ընկած է լավ կրթությունը, ցանկանալով համատեղ ջանքերով ինչ-որ կարևոր և մնայուն բան ստեղծել, որոշում կայացրին հիմնել «Այբ»-ը:

**2006 թ. դեկտեմբեր**
«Այբ» ակումբի հիմնումից հետո որոշում կայացվեց հիմնադրել «Այբ» կրթական հիմնադրամը՝ իրագործելու համար «Այբ» ակումբի առաքելությունը:

**2007 թ. օգոստոս**
«Այբ» ակումբի գործունեությանը և առաջին ութ հիմնադիր անդամներին սկսեցին միանալ նոր համախոհներ՝ ընդունելով «Այբ»-ի առաքելությունն ու գաղափարախոսությունը: 2007-2015 թթ.-ին ակումբը մեծացել է գրեթե հինգ անգամ՝ միավորելով 36 անդամի (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

**2008 թ. հոկտեմբեր**
Այս պահից և ամեն տարի երկու անգամ՝ ամռանը և աշնանը՝ «Այբ»-ի ոգեշնչումն ու օրինակը հանդիսացող Սրբոց Թարգմանչաց կույս տոների օրերին, «Այբ» ակումբի աշխարհասփյուռ անդամները հավաքվում են Հայաստանում՝ հարգանքի տուրք մատուցելու սուրբ Թարգմանիչներին և իրենց համեստ ներդրումն ունենալու նրանց լուսավոր գործի շարունակականության ապահովման գործում: Հավաքներն անցնում են աշխատանքային, հանրային և համայնքաշինական միջոցառումների խիտ ծրագրով:

**2008 թ. հունիս**
«Այբ»-ի պատվիրակությունը ՀՀ նախագահին և կառավարությանը ներկայացրեց «Այբ»-ի տեսլականը երկրում կրթական բարեփոխումներ իրականացնելու հարցում և, մասնավորապես, «Այբ կրթական հանգույց» ծրագիրը: «Այբ»-ի բարերարները հաստատեցին իրենց ֆինանսական մասնակցությունը ծրագրի կայացման գործին և ստացան երկրի ղեկավարի պատրաստակամությունը՝ աջակցելու ծրագրի իրականացմանը:

**2009 թ. հուլիս**
«Այբ» ակումբը որոշում կայացրեց «Այբ կրթական հանգույց» ծրագրի փուլային իրականացման և «Այբ» ավագ դպրոցի շինարարության մեկնարկի մասին:

**2010 թ. հոկտեմբեր**
Երևանում՝ Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարանում, տեղի ունեցավ առաջին ֆոնդահայթայթման միջոցառումը՝ «Այբ» դպրոցի ծրագրի աջակիցների համայնքն ընդլայնելու նպատակով: Այն սկիզբ դրեց Հայաստանում և երկրից դուրս այդուհետ անցկացված մի շարք մեծ դրամահավաքային միջոցառումների:

2006 2007 2008 2009 2010 2011

**2011 թ. հոկտեմբեր**
«Այբ» ակումբի անդամների հերթական հավաքի շրջանակում հանդիսավոր կերպով բացվեց «Այբ» դպրոցը: Մեկնարկեց նաև «Այբ» ակումբի նոր նախաձեռնությունը՝ AybEF-ը կամ «Այբ» տնտեսական ֆորումը, որի նպատակն է նպաստել «Այբ» համայնքի անդամների միջև կապերի ամրապնդմանը, համատեղ գործարար ծրագրերի նախաձեռնմանն ու իրականացմանը, համայնքի շահերի և գաղափարների խթանմանը:

**2012 թ. նոյեմբեր**
Որոշում կայացվեց «Այբ» դպրոցներից երկրորդի՝ Դիլիջանի կենտրոնական դպրոցի բացման մասին՝ ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ: Այս դպրոցը գործում է Երևանի «Այբ» դպրոցի ծրագրով ու մեթոդաբանությամբ և «Այբ»-ի՝ արտաքին պատվերով ու ֆինանսավորմամբ իրականացրած առաջին դպրոցական ծրագիրն է:

**2013 թ. նոյեմբեր**
Սկիզբ դրվեց «Այբ» կրթական հիմնադրամի նոր, լայնածավալ ազդեցության տասնամյա նախաձեռնությանը՝ Կրթության գերազանցության ազգային ծրագրին (ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությամբ՝ ՀՀ կառավարության և «Այբ» կրթական հիմնադրամի համաֆինանսավորմամբ):

**2013 թ. հունիս**
Մեկնարկեց «Այբ»-ի մենտորական ծրագիրը «Այբ» ավագ դպրոցի առաջին շրջանավարտների մասնակցությամբ: 17 շրջանավարտ ձեռք բերեց ավագ ընկեր ու խորհրդատու՝ ի դեմս «Այբ» ակումբի անդամների, ովքեր նրանց կողքին կլինեն մինչև երիտասարդների 25-րդ տարին լրանալը:
Որոշվեց բացել «Այբ» տարրական դպրոցը: Հաստատվեց «Այբ կրթական հանգույց» ծրագրի գլխավոր հատակագիծը:

**2013 թ. դեկտեմբեր**
Հաստատվեց ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետ համագործակցությամբ երկու ֆաբլաբերի (մեկը՝ Երևանի «Այբ» դպրոցին և մյուսը՝ Դիլիջանի կենտրոնական դպրոցին կից) ստեղծման որոշումը:

**2015 թ. հունիս**
Ազգային պարարվեստի երախտավոր գործիչ Գագիկ Գինոսյանի հետ համատեղ՝ «Այբ»-ը հիմնեց «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը, որի առաքելությունն է՝ նպաստել ազգային ինքնագիտակցության բարձրացմանը և հանրայնացնել ազգային երգերն ու պարերը:

**2015 թ. հոկտեմբեր**
«Այբ» կրթական շարժման տասնամյակի շեմին որոշվեց վերանայել ու վերահաստատել «Այբ»-ի զարգացման ռազմավարությունը հաջորդ տասը տարիների համար:

2012 2013 2014 2015 2016 2017



# «Այբ» կրթական հիմնադրամ

2006-2015 թթ.

ԻՆՉՈՒ

# ՆՊԱՏԱԿ

«Այբ» կրթական հիմնադրամը ձգտում է Հայաստանում ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և համակարգված ներդրումներով աջակցել հայկական կրթության զարգացմանը:

«Այբ» կրթական շարժման գաղափարը մարդկային կյանքը և մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելն է: Իսկ դրան հասնելու երաշխավորված ձևը մեկն է՝ կերտել նոր՝ ուսյալ, առաջինի, սեփական ակունքներին հաղորդ և Հայաստանի ապագայի համար պատասխանատվություն ստանձնելու պատրաստ երիտասարդների սերունդ: «Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած ամեն մի ծրագիր կամ նախաձեռնություն ուղղված է այս վեհ նպատակի իրականացմանը:



ԻՆՉՊԵՍ

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

Իր իննամյա աշխատանքի ընթացքում «Այբ» հիմնադրամն իրականացրել է բազմաբնույթ գործունեություն հանրակրթության ոլորտում՝ մշակելով և իրագործելով կրթական բարեփոխումների ծրագրեր, նախագծելով և հիմնելով բարձրորակ օրինակելի կրթական միջավայրեր, որոնք խթան են ծառայում ամբողջ համակարգի զարգացման համար: «Այբ» հիմնադրամի ծրագրերը յուրօրինակ համադրություն են ազգային հարուստ կրթական ժառանգության և համաշխարհային առաջատար փորձի: «Այբ» հիմնադրամի ամեն ծրագիր օրինակելի է և կրթական այս կամ այն բաղադրիչի որակի նոր նշաձող է սահմանում: «Այբ»-ի ստեղծած օրինակները տեսնելով՝ հասարակությունը դառնում է կրթական արդի պահանջներին բավարարող նոր ու բարձրորակ միջավայրերի պահանջատեր և նույնպես ստեղծում նմանատիպ միջավայրեր՝ նպաստելով կրթական համակարգի համընդհանուր բարեփոխմանը:



ՈՎՔԵՐ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԹԻՄ

«Այբ» կրթական հիմնադրամի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որում հերթագայությամբ ընդգրկվում են «Այբ» ակումբի վեց անդամներ: Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է:

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի* անդամներն են՝

* Հոգաբարձուների խորհուրդն այս կազմով գործելու է մինչև 2017 թ. մայիսի 25-ը:




«Այբ» կրթական հիմնադրամն ունի մոտ 50 աշխատակից, որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է «Այբ»-ի այլ կառույցներում՝ «Այբ» դպրոցում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

Մենք ուրախ ենք, որ «Այբ»-ի հիմքում ընկած գաղափարները համախմբել են լավագույն որակներով օժտված նվիրյալների: «Այբ»-ի հաջողությունների գրավականը մարդիկ են: Ամեն «այբեցի» իր արժեքների, գիտելիքների, պատասխանատվության ամենօրյա ներդրմամբ ապահովում է համագործակցության այն հզոր ազդեցությունը, որի շնորհիվ անգամ անիրատեսական թվացող նպատակները դառնում են շոշափելի:

# ԾՐԱԳՐԵՐ

Սովորելու միջավայրի նախագծումը նրբագույն խնդիր է: Այն սկսվում է սովորելու գաղափարի վերաիմաստավորումից, սովորելու գործընթացի նախագծումից և եզրափակվում հասարակական գիտակցության մեջ սովորելու առաջինության ամրագրմամբ:

Իր գործունեության նախորդ ինը տարիների ընթացքում «Այբ» կրթական հիմնադրամի կյանքի կոչած ամեն ծրագիր նպատակ է ունեցել կրթական այս կամ այն բաղադրիչը փորձարկելու իրական ժամանակում, տեսնելու դրա ուժեղ ու թույլ կողմերը, լրամշակելու, դարձնելու կրթության որակի բարձրացմանը նպաստող գործուն միջոց, վերածելու այն կրթական նոր՝ բարձր, բայց և հասանելի նշաձողի: «Այբ»-ի ամեն ծրագրով պատասխաններ ենք փնտրել կրթության տարբեր ոլորտներին վերաբերող հարցերի՝ ինչպիսի՞ն պետք է լինի դասավանդման մեթոդաբանությունը, ի՞նչ ասել է՝ որակյալ դասագիրք, ինչպե՞ս ընտրել մանկավարժներին կամ գնահատել աշակերտներին, ինչպե՞ս կառավարել կրթական հաստատությունը կամ ինչպե՞ս նախագծել դպրոցի ճարտարապետությունը: Ամեն ծրագիր իրականացնելիս ձգտել ենք այն դարձնել օրինակելի, մոդելային, որը կտարածվի ի նպաստ ամբողջ կրթական համակարգի զարգացման: Միևնույն ժամանակ այդ առանձին ծրագրերում փորձարկված ու հաջողված լուծումները միավորել ենք մեկ ամբողջական համակարգում՝ «Այբ» դպրոցում: «Այբ» դպրոցի բացումից հետո դպրոցն իր հերթին դարձավ օրինակ, որից ծնունդ առան ու այսօր արդյունավետ գործում ու զարգանում են նոր դպրոցներ ու կրթական լայնածավալ նախագծեր:






*«Այբ»-ի յուրաքանչյուր ծրագիր նպատակային է և ինքնաբավ՝ միաժամանակ լինելով մեկ ամբողջական կրթական համակարգի կարևոր բաղադրիչ:*

# «ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

«Այբ» կրթական հանգույցը «Այբ» հիմնադրամի կարևորագույն և խոշորածավալ ծրագրերից է: Այն Հայաստանում առաջին դպրոցական ավանն է, որի յուրաքանչյուր տարր կրում է կրթության հետ կապված բովանդակություն և նպաստում ուսյալ, մրցունակ, առաքինի սերնդի ձևավորմանը: «Այբ» կրթական հանգույցը կրթվող համայնքի միջավայր է, ուր խաչաձևվում են մանկավարժությունը, գիտությունը, արվեստը, գործարարությունը և հասարակական կյանքի այլ ոլորտներ: Մենք ձգտում ենք իրական կապ ստեղծել կյանքի զարգացման առաջատար ուղղությունների ու կրթության միջև և ուսումնառության գործընթացը չսահմանափակել սոսկ գիտելիքների փոխանցմամբ:

*«Այբ» կրթական հանգույցում արտացոլված և միահյուսված են հասարակական կյանքի բոլոր դրսևորումները:*


Գիտության և տեխնոլոգիայի կենտրոն
Հանրակացարաններ և հյուրատուն
Արարատյան բակալավրիատի և «Այբ»-ի մասնաշենք
Մանկապարտեզ
Եկեղեցի և համայնքային կենտրոն
Սպորտային համալիր
Գլխավոր մուտք
«Այբ» դպրոց, Ա և Բ մասնաշենքեր
Ավագ դպրոցի նոր մասնաշենք
Ֆաբլաբ
«Այբ» դպրոց, Գ մասնաշենք
Հուշարձանային կառույց
Տարրական դպրոց

«Այբ» կրթական համալիրի ճարտարապետական յուրօրինակ լուծումները «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի պտուղ են: Ճարտարապետական նախագծում հաշվի



են առնվել դպրոցաշինության արդի զարգացումները և համաշխարհային փորձառությունը: «Այբ» համալիրը յուրատեսակ փոքրիկ ավան է՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, ֆաբլաբ, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ և այլն: Այն զբաղեցնում է 6,95 հա հողատարածք Երևանի Արաբկիր վարչական շրջանում, Թբիլիսյան խճ. 11/11 հասցեով:

# «ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ



## ԴՊՐՈՑ

Դպրոցում է ձևավորվում մարդը որպես հասարակության անդամ և որպես որոշակի ընդհանրական գիտակցության կրող, դպրոցը տվյալ ժողովրդի ժառանգության և համամարդկային ձեռքբերումների փոխանցման հանգույցն է:

## ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

«Այբ» կրթական ավանում եկեղեցու առկայությունը խորհրդանշում է ճանաչողության ու բարոյական արժեքների կապը: «Այբ» դպրոցն աշխարհիկ դպրոց է, և Սրբոց Թարգմանչաց եկեղեցին գործելու է ոչ թե դպրոցին կից, այլ լինելու է մեծ կրթական ավանի մի մասը:

## ՖԱԲԼԱԲ

Ֆաբլաբն արհեստանոց-լաբորատորիա է, որն աշակերտներին հնարավորություն է տալիս գիտահետազոտական և կիրառական աշխատանքներ կատարելու ռոբոտաշինության, ճարտարագիտության, տեխնոլոգիայի, մեքենաշինության և այլ ոլորտներում, ինչպես նաև ստեղծում է հետազոտությունների նոր հարթակ երիտասարդ հայ ստեղծագործողների համար:

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնը մի նոր հարթակ է, որը կխթանի երեխաների ու երիտասարդների շրջանում գիտության հանդեպ հետաքրքրությունը, փորձարարական գիտությունների ուսումնասիրման գործում փորձերի կատարումը, ուսուցիչների մասնագիտական զարգացումը:





## ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

Առողջ մարմնում՝ առողջ հոգի և առողջ միտք: «Այբ» կրթական ավանում գործող մեծ սպորտային համալիրը կբավարարի սպորտի պարտադիր առարկաների, առողջ ապրելակերպի և ակտիվության պահանջները:

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Նախադպրոցական տարիքի երեխաները նույնպես ներգրավվում են ամբողջական կրթության գործընթացում: Մանկապարտեզի նպատակն է բացահայտել և զարգացնել երեխաների ներուժը՝ ամրացնելով ճանաչողության նկատմամբ սերը:

## ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ

Նախատեսված են Հայաստանի մարզերից և արտերկրից աշակերտների, հրավիրյալ դասախոսների ու ուսուցիչների, ավանի հյուրերի համար:

## ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Կանաչապատ հատվածները շրջապատում են դպրոցը՝ ծառայելով որպես հանգստի գոտի, համայնքի հավաքատեղի, ինչպես նաև ուսման և առողջ ապրելակերպի համար բարենպաստ միջավայր:



3 222 923 000
**ՀՀ ԴՐԱՄ**
կամ
7 922 679
**ԱՄՆ ԴՈԼԱՐ**
*արդեն ներդրվել է «Այբ կրթական հանգույց» ծրագրի մեջ*
*(2010-2015 թթ. ընթացքում)*

7 **ՀԱ ՏԱՐԱԾՔ՝**
իր
8
**ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ՝**
*նախատեսված 800 աշակերտի համար*

Այսօր գործում են «Այբ» տարրական, միջին և ավագ դպրոցները (4304 քմ ընդհանուր մակերեսով)՝ հագեցած ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով ու լաբորատորիաներով, ուսումնառությանը տրամադրող գեղեցիկ ու հարմարավետ շենքային պայմաններով: «Այբ» կրթական հանգույցը մոտակա մի քանի տարիներին զարգանալու է նոր բաղադրիչների կառուցմամբ և գործարկմամբ: Արդեն հաստատված են ամբողջ կրթական ավանի ճարտարապետական նախագիծն ու գլխավոր հատակագիծը՝ «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի հեղինակությամբ: Մեկնարկել է դպրոցի նոր՝ չորրորդ մասնաշենքի շինարարությունը (4200 քմ մակերեսով), որն ավարտին կհասցվի 2017 թվականի աշնանը: Դպրոցին կից բացվել է ֆաբլաբ՝ ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ստեղծած արհեստանոց-լաբորատորիա, որտեղ աշակերտները տեսականը կիրառում են գործնականորեն: Շարունակվում է ավանի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու և համայնքային կենտրոնի շինարարությունը: Հաջորդ փուլով մեկնարկելու է նոր ավագ դպրոցի (մոտ 10.000 քմ մակերեսով) կառուցման ծրագիրը, որն ունենալու է ավելի հզոր կրթական, գիտական, սպորտային պայմաններ ու հնարավորություններ: Ապա գալու է նոր տարրական դպրոցի (մոտ 6000 քմ մակերեսով) շինարարության հերթը: Իսկ այսօրվա մասնաշենքերը ապագայում ծառայելու են միջին դպրոցին: Զուգահեռաբար ամբողջացվում և լրամշակվում է գիտության ու տեխնոլոգիայի կենտրոնի ծրագրի հայեցակարգը, ընթանում են բանակցություններ հովանավորների հետ:



«Այբ» կրթական հանգույցը («Այբ» դպրոցը) հոգաբարձուների խորհրդի կողմից ղեկավարվող հիմնադրամ է և հասարակական կառույց: «Այբ»-ը չունի սեփականատերեր և բաժնետերեր: «Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 70%-ը ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):

**190**
**ԲԱՐԵՐԱՐ**

**10**
**ԵՐԿՐԻՑ**
արդեն միացել է «Այբ»-ի դպրոցաշինության ծրագրին

**4304 քմ**
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ**
«Այբ» դպրոցի գործող երեք մասնաշենքում
(Ա, Բ և տարրական դպրոցի մասնաշենքեր)

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑ

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: Այն սովորելու մի նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման: «Այբ» դպրոցի նպատակն է դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի մոդել: «Այբ» դպրոցի առաքելությունն է՝ ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդ:

«Այբ» դպրոցը եռաստիճան է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) դպրոցներ: Դպրոցում սովորում է ընդհանուր 334 աշակերտ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ: Նախատեսվում է, որ մի քանի տարի անց այն իր տանիքի տակ կընդունի շուրջ 800 աշակերտ:

Դպրոցը մենք դիտում ենք որպես ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ փոխանցող հաստատություն, այլ հասարակական կյանքի ամենահիմնարար հասկացություն:



Դպրոցը ոչ միայն համայնք է ինքնին, այլ առավել լայն համայնքի՝ հասարակության, ժողովրդի կենսական գործունեության կենտրոն: Դպրոցական ակումբները կրթվող համայնքի զարկերակներն են: Դպրոցական թատրոնը, կինոթատրոնը, ցուցասրահները, գրադարանները, այգիները համայնքի մշակութային կյանքի կարևոր գործառույթներ ունեն:

*Դպրոցում է ձևավորվում մարդը՝ որպես հասարակության անդամ և որպես որոշակի ընդհանրական գիտակցության կրող, դպրոցը տվյալ ժողովրդի ժառանգության և համամարդկային ձեռքբերումների փոխանցման հանգույցն է:*







Երեխան գալիս է դպրոց ոչ թե ապագայում գործածվելիք գիտելիքներ ստանալու, այլ սովորելու այն, ինչ պետք է այսօր: Նա գալիս է ոչ թե անհաղորդ դիտորդ լինելու, այլ մասնակցելու, բացահայտելու իր ներուժը, ստեղծագործելու, ուրախանալու իր ստեղծածի արդյունքով: Միայն այդ դեպքում երեխան կզգա ուսման և կյանքի կապը, հետաքրքրված կլինի ճանաչելու և ստեղծագործելու: Ուսուցիչները նույնպես պետք է լինեն կրթվող համայնքի մասնիկը և դպրոց գան սովորելու նպատակով: Ուսուցիչները պետք է սովորեցնելով սովորեն և սովորելով սովորեցնեն: Ուսուցչի աշխատանքը պետք է սկսվի ու վերջանա դպրոցում: Միայն այս դեպքում առարկայի մատուցումը կունենա ջերմություն և անընդհատ կարտացոլի տվյալ առարկայի ոլորտում տեղի ունեցող զարգացումները:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

## ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

«Այբ» դպրոցի կրթական փիլիսոփայությունն ու գործունեության կազմակերպումը խարսխված են Արարատյան բակալավրիատի սկզբունքների վրա (տե՛ս էջ 202):





«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

«Այբ» դպրոցի կրթական գաղափարը խարխսված է հետևյալ դինամիկ սկզբունքի վրա` վերցնել լավագույն ծրագրերը լավագույն կրթական համակարգերից և համադրել մեկ ամբողջական պատկերի մեջ: Դպրոցի բացմանը նախորդող հինգ տարիների ընթացքում «Այբ»-ի մասնագետներն ուսումնասիրել և ծաղկաքաղ են արել աշխարհի առաջատար կրթական համակարգերից` ի մի բերելով և համատեղելով դրանց լավագույն բաղադրիչները մեկ եզակի համակարգում:

> *Մենք չենք ցանկացել պատճենել հաջողված կրթական համակարգերից որևէ մեկը, այլ, հետևելով դրանցից յուրաքանչյուրին, ստեղծել ենք մերը:*

## ԾՐԱԳՐԱՀԵՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

«Այբ» դպրոցի ուսուցման մեթոդաբանության հիմքում ընկած է ծրագրահեն ուսուցումը: Մենք ձգտում ենք ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ ցանկացած աշակերտ ներգրավված լինի առօրյա կյանքում իրականացվող տարբեր ծրագրերում կամ նախագծերում՝ գործնականորեն ստուգելով ու կիրառելով իր գիտելիքները, զարգացնելով իր հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտությունները, կողմնորոշվելով ապագա մասնագիտության ընտրության հարցում: Այդ նախագծերը ոչ միայն ունեն ուսումնական նպատակ, այլև տալիս են հասարակայնորեն կիրառելի և անհրաժեշտ արդյունքներ: Տարբեր ուսուցիչներ աշխատում են միմյանց հետ՝ հարմարեցնելու իրենց ծրագիրն այնպես, որ աշակերտները զինված լինեն մի քանի առարկաներից անհրաժեշտ գիտելիքներով՝ հետազոտական և ուսումնասիրական նախագծեր իրականացնելու համար:

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Այբ» ավագ դպրոցում ամեն աշակերտ ունի իր անհատական ուսումնական ծրագիրը, որը կազմված է հիմնական և ընտրովի առարկաներից: Հիմնական առարկաները դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով: «Այբ»-ը մշակել է արդյունավետ և համակողմանի կրթության կրեդիտային համակարգ, և յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր ընտրությունն ըստ մշակված կրեդիտային սկզբունքների:







## ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ ԵՎ ԳԵՂԵՑԻԿԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Սպորտի և արվեստի դասերն ու ակումբային աշխատանքները օգնում են «Այբ»-ի աշակերտին համակողմանի զարգանալու ոչ միայն մտքով, այլև հոգով ու մարմնով: «Այբ» դպրոցում ֆիզիկական պատրաստությունը և լողը պարտադիր առարկաներ են՝ որպես առողջության երաշխիք: Արվեստի տարբեր ոլորտներին առնչվող առարկաները և խմբակները նպատակ ունեն զարգացնելու աշակերտների՝ գեղեցիկը տեսնելու, լսելու և ճանաչելու կարողությունները, ինչպես նաև բեռնաթափելու ակադեմիական կրթության բավական ինտենսիվ գործընթացը:

## ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Այբ» դպրոցի բացմանը նախորդող հինգ տարիների ընթացքում հիմնադրամի մասնագետներն աշխատել են դպրոցի ներքին ճարտարապետության ու կրթական ծրագրի մշակման, փորձարկման ու կատարելագործման վրա: Դեռևս 2006 թվականից «Այբ» հիմնադրամի առաջին ծրագրի՝ «Առարկայական խորացված դասընթացների» շրջանակներում ծնունդ առավ «Այբ» դպրոցի կրթական հիմքը՝ այսօր արդեն «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) անունը ստա-

ցած կրթական ծրագիրը: ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ և խստապահանջ ուսումնական ծրագիր է՝ նախատեսված ժամանակակից պետական և մասնավոր կրթական հաստատությունների համար: ԱԲ ծրագրում համադրվում են մի շարք հիմնական և ընտրովի առարկաներ, այդ թվում՝ մաթեմատիկա, բնագիտական առարկաներ, պատմություն, հասարակագիտական առարկաներ, լեզուներ և արվեստ:

> *ԱԲ ծրագրի շնորհիվ հայ երեխաները, սովորելով հայկական դպրոցներում, հայերենով, ստանում են միջազգային բոլոր խստապահանջ չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն, որի ավարտական հավաստագիրն ընդունելի ու ճանաչելի կլինի թե՛ տեղական, թե՛ միջազգային բուհերի կողմից:*



«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

# ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: «Այբ» ավագ դպրոցում կիրառվում է կրթաթոշակային համակարգ՝ նպատակ ունենալով ապահովելու տաղանդավոր երեխաների անկախությունը ծնողների ֆինանսական հնարավորություններից և հավասար հնարավորություններ տալու բոլոր ընդունված աշակերտներին: «Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր՝ անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից ֆինանսական պատճառներով:


Константин Симонов
ГРИММ
ФАРАОН

> *«Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 70%-ը ամեն տարի «Այբ» հիմնադրամից ստանում է կրթաթոշակ (ուսման արժեքի փոխհատուցում):*

«Այբ» ավագ դպրոց ընդունվում են միայն ըստ քննությունների արդյունքների, և աշակերտի վճարունակությունն ընդունելության ընթացքում ոչ մի դեր չի խաղում: Դպրոցի ընդունող հանձնաժողովը գործում է ֆինանսական աջակցության հանձնաժողովից անկախ, և ընդունելության գործընթացում աշակերտի ֆինանսական միջոցների մասին ընդունող հանձնաժողովը տեղեկություն չունի: Միայն ընդունվելուց հետո է, որ աշակերտը կրթաթոշակի (ուսման արժեքի փոխհատուցման) համար կարող է դիմել «Այբ» կրթական հիմնադրամում գործող ֆինանսական աջակցության հանձնաժողովին` հիմնավորելով հայցը: «Այբ»-ի կրթաթոշակային համակարգը հավասար հնարավորություն է ընձեռում բոլոր ընդունված աշակերտներին` բավարարելով նրանցից յուրաքանչյուրի` կրթաթոշակ ստանալու հիմնավորված պահանջը:

70%+

**ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ**

*«Այբ» ավագ դպրոցը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է*

756 480 348

**ՀՀ ԴՐԱՄ**

կամ մոտ

1 756 410

**ԱՄՆ ԴՈԼԱՐ**

*կազմել է «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդը*

*2011-2016 ուստարիներին*



Ընդհանուր առմամբ «Այբ» ավագ դպրոցի 2011-2016 ուսումնական տարիների ընթացքում «Այբ» հիմնադրամը տրամադրել է 756.480.348 ՀՀ դրամ (կամ մոտ 1.756.410 ԱՄՆ դոլար) գումարի չափով կրթաթոշակ:

Կրթաթոշակային կամ սոցիալական բաղադրիչը չի տարածվում «Այբ» տարրական ու միջին դպրոցների վրա այն պարզ պատճառով, որ 6 կամ 10 տարեկան երեխայի համար բարերարից նվիրատվություն խնդրելը՝ խնդրանքը երեխայի տաղանդով, ուսումնական ձեռքբերումներով կամ կրթական ուղու շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ հիմնավորելով, դժվար է: Փոքր տարիքում բոլոր երեխաներն են տաղանդավոր, և եթե դպրոցն ունի որակյալ կրթություն ապահովող նախադրյալներ ու պայմաններ, ապա բոլոր երեխաներն էլ ունեն հավասար հնարավորություններ՝ դառնալու «աստղեր», որոնց մեջ ապագայում անհրաժեշտ է ներդրում կատարել: Այսօր «Այբ» միջին և տարրական դպրոցներում կան աշակերտներ, որոնց համար գտնվել են բարերարներ, պարզապես «Այբ» հիմնադրամն այս գործում մասնակցություն չի ունեցել: Այսպիսով՝ ինչպես «Այբ» ավագ, այնպես էլ միջին ու տարրական դպրոցներում կրթության մեկենասության գաղափարը նույնպես խթանվում է:



40
**ԱՌԱՐԿԱ ԵՎ ՆԱԽԱԳԻԾ**

8
**ԱՌԱՐԿԱՅԱԽՄԲՈՒՄ**

*դասավանդվում է «Այբ» ավագ դպրոցում,*
*38 և 23 առարկա և նախագիծ դասավանդվում են միջին ու տարրական դպրոցներում, համապատասխանաբար*

93
**ՈՒՍՈՒՑԻՉ**

*22-ը՝ գիտ. դոկտոր և թեկնածու,*
*1-ը՝ արվեստի վաստ. գործիչ,*
*6-ը՝ սպորտի վարպետ*
*2016 թ. հուլիսի դրությամբ*

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

# «ԱՅԲ»-Ի ՄԵՆՏՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Աճող սերնդի մասին հոգ տանելու գաղափարը եղել է «Այբ»-ի ամբողջ գաղափարախոսության հիմնարար հասկացություններից մեկը հիմնադրման օրվանից:

Մենտորությունը «Այբ» ակումբի յուրաքանչյուր անդամի առաքելությունն է: Անդամակցելով ակումբին՝ անձը կամավոր պարտավորություն է ստանձնում հանդես գալու որպես «Այբ» դպրոցի շրջանավարտների մենտոր մինչև նրանց 25-րդ տարին լրանալը:

«Այբ»-ի մենտորության ծրագրի առաքելությունն է՝

- կերտել բարոյական սկզբունքների տեր և կրթված մարդկանց, փոխանցել ապագայի տեսլականն ու կյանքի կարևորագույն արժեքները սերնդեսերունդ.
- ամրապնդել սերունդների միջև հոգևոր կապը՝ զարգացնելով «Այբ» համայնքին պատկանելու զգացումը, սեփական օրինակով, խոսքով և գործով դրսևորելով երիտասարդ սերնդի նկատմամբ հոգատարություն.



Նոր սերնդի հետ կիսել կյանքի փորձը, հոգու հարստությունը և բարձրագույն նպատակի գիտակցությունը:

2013 թ. հոկտեմբերին «Այբ» ակումբի կյանքում տեղի ունեցավ ուշագրավ իրադարձություն. «Այբ» հիմնադրամի առաջին ծրագրերից մեկի՝ Առարկայական խորացված դասընթացների շրջանավարտներից Արսեն Մամիկոնյանը, որն անցել էր «Այբ»-ի մենտորության ծրագրով, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտելուց և ծրագրավորման ոլորտում իր սեփական գործը սկսելուց հետո որոշում կայացրեց միանալ «Այբ» ակումբին: Այս որոշումով Արսենը հաստատեց սերունդների միջև կապի և փոխօգնության մեխանիզմի կենսականությունը, որն էլ «Այբ»-ի մենտորության ծրագրի հիմնական նպատակն էր: Արսենը դարձավ սերունդների փոխօգնության շնորհակալ գործի առաջին հունձքը:

36
**ՄԵՆՏՈՐ**

125
**ՇՐՋԱՆԱՎԱՐՏ**

*«Այբ» ակումբի յուրաքանչյուր անդամ մենտոր է «Այբ» դպրոցի մի քանի շրջանավարտի համար: Ամեն շրջանավարտ մինչև 25 տարեկանն ունենում է ավագ ընկեր կամ խորհրդատու՝ ի դեմս «Այբ» ակումբի անդամի, ով աջակցում է նրան ուսումնական և աշխատանքային կյանքի ճանապարհին:*



























«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

# ՖԱԲԼԱԲ

Ֆաբլաբը ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (ՄՏԻ, MIT) ստեղծած արհեստանոց-լաբորատորիա է՝ զինված հատուկ սարքավորումներով և նյութերով, որոնք հնարավորություն են տալիս նորարարական տեխնոլոգիաներ կիրառելու գիտական տարբեր ոլորտներում և արտադրելու գրեթե «ամեն ինչի» ձևանմուշ: Ֆաբլաբերում իրականացվող ծրագրերը վերաբերում են ինչպես տեխնոլոգիական նորարարություններին ու բարեփոխումներին, այնպես էլ գործարարական նոր մոտեցումներին ու զանազան հետազոտություններին արտա-դրության, ռոբոտաշինության, դիզայնի, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: 2015 թվականին «Այբ» հիմնադրամը բացեց Հայաստանում առաջին երկու ֆաբլաբերը՝ Երևանի «Այբ» դպրոցին և Դիլիջանի կենտրոնական դպրոցին կից: Բացման օրվանից ի վեր այս երկու ֆաբլաբերը հասանելի են ոչ միայն «Այբ» դպրոցի և Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտներին, այլև բաց են բոլոր կրթական հաստատությունների համար:

*Ֆաբլաբը Հայաստանում նորարարական «խելացի» լաբորատորիաների ներդրման բացառիկ, լայնածավալ ազդեցության ծրագիր է, որը թույլ է տալիս կրթությունը դարձնել կիրառական:*

Միանալով ֆաբլաբի ցանցին՝ Հայաստանը դառնում է աշխարհի լավագույն տեխնիկական բուհի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի միջազգային կրթական հսկա ցանցի անդամ և հնարավորություն ստանում օգտվելու այն հմտություններից, գիտելիքից և փորձից, որոնք ստեղծվել են ցանցի անդամ լաբորատորիաներում:

ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսավորմամբ` «Այբ» հիմնադրամը ՄՏԻ-ից ձեռք բերեց երկու ֆաբլաբի լիցենզիա, ինչպես նաև սարքավորումներ Դիլիջանի կենտրոնական դպրոցին կից ֆաբլաբի համար: Իսկ արդեն ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության հետ համատեղ ջանքերով և ֆինանսավորմամբ «Այբ» հիմնադրամը կառուցեց և համալրեց Երևանի «Այբ» դպրոցին կից ֆաբլաբը:

«Այբ» հիմնադրամը երկարատև բանակցային գործընթաց է վարել ՄՏԻ-ի հետ: Բանակցությունների ընթացքում

*Ֆաբլաբերը հնարավորություն են տալիս խթանելու գիտահետազոտական աշխատանքները ռոբոտաշինության, ֆիզիկայի, տեխնոլոգիայի, մեքենաշինության և այլ ոլորտներում, ինչպես նաև հետազոտությունների նոր հարթակ են ստեղծում երիտասարդ հայ գիտնականների համար:*

ձեռք է բերվել ֆաբլաբի սարքավորումային լիակատար փաթեթը, որն այս պահին ներառում է՝

- համակարգչային կարգավորմամբ լազերային կտրող սարքեր,
- թվային կարգավորմամբ մետաղահատ եռաչափ (ֆրեզային) հաստոց՝ մեծ չափի ձևանմուշներ ստանալու համար,
- ալեհավաքներ, տպագրական կաղապարներ, ճկուն սխեմաներ ստեղծող սարք,
- եռաչափ տպիչներ,
- ծրագրավորման արագագործ և փոքր ծախսատարությամբ միջոցներ,
- այլ սարքեր ու ծրագրեր:


ShopBot

«Այբ» կրթական հանգույցի ամբողջ ծրագրի գործարկումից հետո ֆաբլաբը միանալու է հանգույցում գործող գիտության և տեխնոլոգիայի կենտրոնին: Այսպիսով՝ ֆաբլաբը, լինելով ցանկացած կրթական ու գիտական հաստատության համար փորձարկումների ու գաղափարների իրականացման բաց տիրույթ, լիարժեքորեն համապատասխանում է կրթական հանգույցի գաղափարախոսությանը, այն է՝ դպրոցական ավանը դարձնել կյանքի ու հասարակության հիմնական ուղղությունների ու կարևոր հաստատությունների խաչմերուկ, որտեղ յուրաքանչյուրը ներկայացնում է իր փորձն ու սովորեցնելով սովորում:

Երևանի ֆաբլաբի ստեղծումը հնարավոր է դարձել Վիվա-Սել-ՄՏՍ ընկերության, իսկ Դիլիջանինը՝ ՀՀ Կենտրոնական բանկի աջակցությամբ:






565
**ՖԱԲԼԱԲ**

*գործում է աշխարհի մոտ 40 երկրում*
*Ֆաբլաբերն ակտիվորեն տարածվում ու ցանցավորվում են ամբողջ աշխարհով՝ հիմնականում կրթական կառույցներին կից*

մոտ
$500 000
**ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ**

2
**ՖԱԲԼԱԲ**

*«Այբ» հիմնադրամը գործարկել է Երևանում և Դիլիջանում*

320
**ՔՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄԱԿԵՐԵՍ՝**
*երկու ֆաբլաբերում*

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտության և տեխնոլոգիայի կենտրոնը «Այբ» կրթական հանգույցում ներդաշնակորեն կմիաձուլվի նորարար ու ստեղծագործ միջավայրին և կխթանի գիտության նկատմամբ համընդհանուր հետաքրքրության աճը:

Համաշխարհային գիտությանը համընթաց քայլելու նախանձախնդրությունն ու փորձարարական գիտությունների ուսումնասիրման գործում փորձերի կատարման խիստ անհրաժեշտությունը ծնեցին գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի գաղափարը: Սրա հիմնումը մեծապես կխթանի հայ պատանիների շրջանում գիտության հանդեպ հետաքրքրության առաջացումը: Միևնույն ժամանակ կենտրոնը կնպաստի ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և կլրացնի լաբորատորիաների՝ բազմաթիվ դպրոցների առաջ ծառացած խնդիրը: Կենտրոնը գիտությունը կդարձնի հանրամատչելի՝ տարբեր տարիքի անձանց համար: Գիտության



և տեխնոլոգիայի կենտրոնը բաղկացած է լինելու երեք գործառական գոտուց:

> *Գիտության և տեխնոլոգիայի կենտրոնը կենտրոնը կդառնա մի նորարարական մոդել, որի հարկի տակ կհամատեղվեն ուսումնառության գործընթացը, գիտական մտքի նորարարությունները և Հայաստանի զարգացման արդի լուծումները:*

**ԱՌԱՋԻՆ ԳՈՏԻՆ** նախատեսված է հիմնական ուսումնական գործընթացի իրականացման համար: Ներկայում հայաստանյան սակավաթիվ դպրոցներ են համալրված տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից առարկայական լաբորատորիաներով, որոնք աշակերտներին հնարավորություն են ընձեռում տեսական գիտելիքները գործնականորեն կիրառելու, փորձարկումներ և փոքրիկ հայտնագործություններ անելու: Իսկ մնացած դպրոցներում, նույնիսկ եթե առկա են լաբորատորիաներ, դրանց տարածքային հնարավորություններն ու մի շարք սանիտարական և հակահրդեհային սահմանափակումներ թույլ չեն տալիս աշակերտին բացահայտել իր ներուժն ամբողջությամբ և իրականացնել այն, ինչը հնարավոր չէ իրականացնել հիմնական դասընթացի ժամանակ: Գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի ուսումնական գործընթացների համար նախատեսված միջավայրը զինված կլինի համապատասխան սարքավորումներով և նյութերով, և աշակերտը կկարողանա իրականացնել զանազան փորձեր ու հետազոտություններ:

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՏԻՆ** ուղղված կլինի Հայաստանում գիտության ոլորտի զարգացմանը: Այն հագեցած կլինի համապատասխան փորձանմուշներով, նորարարական սարքավորումներով, որոնք հնարավորություն կտան զարգացնելու պատանիների գիտական մտածելակերպը, թույլ կտան բարձրանալ մի նոր հարթություն, ստեղծել այնպիսի խնդիրների լուծման նոր տարբերակներ, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի սեյսմիկ անվտանգության ապահովումը կամ այլընտրանքային էներգիայի ստացման ուղիների մշակումը:

**ԵՐՐՈՐԴ ԳՈՏՈՒՄ** նախատեսվում է ունենալ փոխներգործուն (ինտերակտիվ) ցուցասրահներ, որոնք նվիրված կլինեն գիտության տարբեր բնագավառների՝ բնական գիտություններ, մաթեմատիկա, նորագույն տեխնոլոգիաներ և այլն: Կենտրոնը հասանելի կլինի բոլոր հետաքրքրվողների համար:

«Այբ» կրթական հանգույցի տարածքում գիտության ու տեխնոլոգիայի կենտրոնի ստեղծման համար ընթանում են բանակցություններ հովանավորների հետ: Միաժամանակ ամբողջացվում և լրամշակվում է ծրագրի հայեցակարգը:

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

# ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑԻ

«Այբ» կրթական ավանում եկեղեցու առկայությունը խորհրդանշում է ճանաչողության ու բարոյական արժեքների կապը: Եկեղեցին երաշխիքն է ոչ միայն կրթված, այլև բարոյական սերնդի ձևավորման:

Մեր սուրբ Թարգմանիչների՝ սբ Մեսրոպի, սբ Սահակի և նրանց աշակերտների շարժումը «Այբ» համայնքի համար եղել է մեծագույն օրինակ և ներշնչանքի աղբյուր, և եկեղեցու կառույցը խորհրդանշում է այն մարդկանց, որոնց էական գրավոր ժառանգության վրա խարսխված են հայ ինքնությունը և հոգևոր գիտակցությունը:

*Դարեր շարունակ Հայ Եկեղեցին և Հայ Դպրոցը եղել են կողք կողքի՝ ապահովելով մեր ժողովրդի հոգևոր-ազգային միասնականությունը և ճանաչողական-արժեքային ներդաշնակությունը:*

Ե դարում սբ Մեսրոպի, սբ Սահակի և նրանց աշակերտների շնորհիվ ստեղծվեցին ազգային գիր, գրականություն, երաժշտություն, դպրոց: Այս հանճարեղ մարդկանց համագործակցությունը վերածվեց դարերով շարունակվող շարժ-



ման և ապահովեց հայ ժողովրդի շարունակականությունը մինչև մեր օրերը: Այս յուրահատուկ շարժման շնորհիվ հոգևոր արժեքները և կրթությունը դարձան հայերի ազգային ինքնագիտակցության հիմք:

Հայ ժողովուրդը նրանց անվանել է սուրբ Թարգմանիչներ և նվիրականացրել է թարգմանության գաղափարը: Հայ աստվածաբանական գրականության մեջ թարգմանությունը համարվում է աստվածային իմաստությունն արարչությանը հաղորդակից դարձնելու, երկնայինը երկրավորի մեջ բացահայտելու մեծագույն շնորհ: Բացի դրանից, թարգմանության ոգին ցուցանիշն է համամարդկայինին հաղորդակից լինելու, համամարդկայինը սեփականեցնելու, սեփական ինքնությունը մեծ պատկերի մեջ տեսնելու կարողության:

«Այբ»-ն այսօր յուրատեսակ շարունակությունն է սրբոց Թարգմանչաց շարժման: Միավորելով կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու պատրաստակամ մարդկանց՝ մենք համախմբում ենք նոր որակներ, գիտակցված արժեքներ, ապրված իրողություններ: Այսօր գաղափարակից մարդկանց փորձառությամբ, ջանքերով և ներդրումներով ստեղծվում ու մշակվում է հայ նոր դպրության ճարտարապետությունն իր բովանդակային, համակարգային, միջավայրային լուծումներով: «Այբ»-ի յուրաքանչյուր անդամ իր անցած ճանապարհով և գիտակից մասնակցությամբ հարստացնում ու հզորացնում է սրբոց Թարգմանչաց բազմադարյան շարժումը՝ ճանապարհ բացելով ապագա սերունդների համար:

«Այբ» ավանի եկեղեցին յուրօրինակ ճարտարապետական լուծումներով մի կառույց է: Այն կազմված է քարե գրքերից, որոնցից յուրաքանչյուրը խորհրդանշում է սբ Թարգմանիչներից մեկին: Եկեղեցու հիմնահարկում գործելու է աստվածաբանական գրադարան, որտեղ մարդը հնարավորություն է ունենալու կարդալու, ուսումնասիրելու





և հոգևոր իրողությունների մեջ խորանալու: 2012 թ. մարտին «Այբ» հիմնադրամն ամփոփեց «Այբ» կրթական ավանում կառուցվելիք Սրբոց Թարգմանչաց եկեղեցու ճարտարապետական հայեցակարգի նախապես հայտարարված բաց մրցույթի արդյունքները: Մրցույթի անցկացման համար հատուկ ստեղծված www.holytranslators.com կայքում գրանցվել էին 119 անհատ ճարտարապետ և կազմակերպություն Հայաստանից, Ռուսաստանից, Իսպանիայից, ԱՄՆ-ից: Մրցույթի արդյունքում ծնվեց եկեղեցու 50 ճարտարապետական հայեցակարգ: Իսկ որպես սուրբ Թարգմանիչների պատվին կառուցվող եկեղեցու վերջնական նախագիծ ընտրվեց ճարտարապետ Էրիկ Օհանյանի հեղինակած նախագիծը:

«Այբ» դպրոցը աշխարհիկ դպրոց է: Սրբոց Թարգմանչաց եկեղեցու առկայությունը չի անդրադառնում դպրոցի կրթական ծրագրի ու դասավանդման մեթոդաբանությունների վրա: Այն գործելու է ոչ թե դպրոցին կից, այլ լինելու է մեծ կրթական ավանի մի մասը:

*«Այբ» կրթական ավանը կազմված է չորս գոտիներից՝ ուսումնական (տարրական, միջին և ավագ դպրոց), սպորտային (մարզադահլիճներ, լողավազան, խաղահրապարակներ), հասարակական (ֆաբլաբ, գիտության և տեխնոլոգիայի կենտրոն, հանրակացարաններ, մանկապարտեզ), հոգևոր (եկեղեցի և համայնքային կենտրոն):*

Այս բոլոր գոտիները միմյանց են կապվում հանրային այգիներով ու կանաչ տարածքներով: «Այբ» կրթական ավանը համայնքի միկրոմոդել է, որտեղ բոլոր բաղադրիչները գործում են ինքնուրույն և փոխազդում են կրթության միջոցով: Այստեղ մարդիկ գալիս են սովորելու և սովորեցնելու: «Այբ» ավանը բաց է ուսանողների, գիտնականների, ստեղծագործողների և լայն հանրության համար: Սրբոց Թարգմանչաց եկեղեցին լինելու է հայ առաքելական և պատկանելու է Սուրբ Էջմիածնին և, ինչպես այլ եկեղեցիներ, ծառայելու է ինչպես Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր համայնքների բնակիչներին, այնպես և բոլոր հավատացյալներին:



119

**ԱՆՀԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

4

**ԵՐԿՐԻՑ**

*գրանցվել են Սրբոց Թարգմանչաց եկեղեցու ճարտարապետական հայեցակարգի բաց մրցույթին*

**ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է**

50

**ՆԱԽԱԳԻԾ,**

*ընտրվել է մեկը՝ որպես «Այբ» ավանի եկեղեցու վերջնական ճարտարապետական նախագիծ*

25

**ՔԱՐԵ ԳԻՐՔ՝**

25

**ՍԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՊԱՏՎԻՆ**

*«Այբ» ավանի եկեղեցին յուրօրինակ ճարտարապետական լուծումներով մի կառույց է*

# ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2013 թվականին «Այբ» կրթական հիմնադրամը, ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ, Դիլիջան քաղաքում բացեց Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որը պատկանում է «Այբ» դպրոցների ընտանիքին և «Այբ»-ի՝ արտաքին պատվերով և ֆինանսավորմամբ իրականացրած առաջին դպրոցական նախագիծն է: «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ ԿԲ-ի համագործակցության արդյունքում ստեղծվեց քաղաքային դպրոցի մոդել՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար: Ընդ որում դպրոցում ուսանելու պայմանները նույնն են բոլոր աշակերտների համար. ՀՀ ԿԲ-ն փոխհատուցում է բոլոր աշակերտների ուսման ծախսերը:

*Դիլիջանի կենտրոնական դպրոցը պատկանում է «Այբ» դպրոցների ընտանիքին և «Այբ» հիմնադրամի՝ արտաքին պատվերով ստեղծած առաջին դպրոցն է:*

Դիլիջանի կենտրոնական դպրոցը հիմնական դպրոց է՝ իր տարրական և միջին բաղադրիչներով: Դպրոցը 4200 քմ տարածք զբաղեցնող, մի քանի ցածրահարկ նորակառույց, տեխնիկապես համալրված մասնաշենքերից կազմված համալիր է: Դպրոցի գաղափարախոսությունը, ֆիզիկական միջավայրն ու կրթական բովանդակությունը (ուսում-



նական առարկայական ծրագրերը, հոգեբանի և լոգոպետի աշխատանքը, դասավանդման մեթոդաբանությունը, ուսուցիչների և աշակերտների ընդունելության քաղաքականությունը, գնահատման չափանիշները և այլն) նախագծված է «Այբ»-ի չափանիշներով: Դպրոցի առաքելությունն է դառնալ ամբողջական ու մրցունակ կրթություն ու դաստիարակություն ապահովող միջավայր՝ կերտելով մի սերունդ, որը կրթված է, ունի ամուր հոգևոր արժեքներ, առաքինություն, գեղագիտական բարձր ճաշակ և առողջ կենսակերպի ձգտում:

Դպրոցի կառավարման նպատակով ստեղծվել է «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամը, որի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է:

Իր գործունեության առաջին իսկ տարում Դիլիջանի կենտրոնական դպրոցն ազդեցություն ունեցավ մի քանի կապակցված ոլորտներում՝ կրթական, մշակութային, սոցիալական, համայնքաստեղծ: Դիլիջանյան միապաղաղ իրականությունը լցվեց բազմաթիվ հետաքրքիր կրթամշակութային և համայնքային միջոցառումներով՝ շնորհիվ դպրոցական համայնքի միասնական աշխատանքի: Դպրոցը պարբերաբար հանդես է գալիս Դիլիջանի այլ դպրոցների հետ համագործակցության և համայնքային զարգացմանն ուղղված նախաձեռնություններով:

*Դիլիջանի կենտրոնական դպրոցի ծնունդը և հաջող գործարկումը «Այբ» կրթական հիմնադրամի առաջին փորձն էր՝ տարածելու «Արարատյան բակալավրիատ» ամբողջական կրթական հարթակը, որը մշակվել և կատարելագործվել է «Այբ»-ի կրթական ծրագրերում:*




Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտների

73%-ը

**ԴԻԼԻՋԱՆՑԻ Է**

Աշակերտների ընդհանուր թվի 26%-ը Երևանից է, 1%-ը՝ Վանաձորից

120

**ԱՇԱԿԵՐՏ**

ուսանում է ԴԿԴ-ում
(1-9-րդ դասարաններում)

21/99

ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների և Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների հարաբերակցությունը

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ**

25%-ը

տեղափոխվել է Դիլիջան այլ քաղաքներից՝ ԴԿԴ-ում դասավանդելու նպատակով

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2014 թվականին «Այբ» կրթական հիմնադրամը, համագործակցելով Քեմբրիջի համալսարանի «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ, սկսեց տասնամյա լայնածավալ կրթական նախաձեռնություն, որի նպատակն է Հայաստանում ստեղծել միջազգայնորեն մրցունակ այլընտրանքային դպրոցական կրթական ծրագիր և բարձրացնել հասարակության մեջ ուսուցչի դերի կարևորությունն ու հեղինակությունը: Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱԾ) գաղափարը «Այբ» կրթական հիմնադրամինն է: Ծրագիրն իրականացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և «Այբ» հիմնադրամը: Ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ կառավարության և «Այբ» հիմնադրամի կողմից:



Հանրակրթական համակարգի բարելավումը համընդհանուր ու բարդ խնդիր է և պահանջում է բազմակողմանի մոտեցումներ: Համակարգի մրցունակությունը, երկարաժամկետ զարգացումն ու համընդհանուր առաջընթացն էականորեն պայմանավորված են համակարգի բոլոր բաղադրիչների բարելավմամբ: Այդ բաղադրիչների թվում են դասավանդման մեթոդաբանությունը, առարկայական ծրագրերը, առարկայական դասագրքերն ու դասագրքաստեղծման մեթոդաբանությունը, ուսուցիչների աշխատանքի գնահատումը, աշակերտների գնահատման մեթոդները և այլն: Միևնույն ժամանակ ուսուցիչների մասնագիտական աճի լայն հնարավորությունները, մրցունակ աշխատավարձը, հասարակական պահանջի ձևավորումը և հասարակության մեջ ուսուցչի դերի կարևորության բարձրացումը այն գործոններն են, որոնք առանցքային կարող են դառնալ Հայաստանի դպրոցական կրթության ողջ համակարգի կատարելագործման համար:

# ԿԳԱԾ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## 1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆ ՈՒՂՂԵԼ ԴՊՐՈՑ

Դարձնել ուսուցչի աշխատանքը պատվաբեր և ապահովել պատշաճ ու մրցունակ վարձատրություն:

## 2 ՁԵՎԱՎՈՐԵԼ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ստեղծել համաշխարհային դասավանդման լավագույն փորձով ու գիտելիքներով զինված ու մրցունակ ուսուցիչների համայնք:

## 3 ՆԵՐԴՆԵԼ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄՐՑՈՒՆԱԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարածել «Այբ» հիմնադրամի մշակած նոր՝ «Արարատյան բակալավրիատ» կոչվող մրցունակ, միջազգային չափանիշներին համապատասխան, հայալեզու կրթական ծրագիրը երկրով մեկ:

## 4 ԱՋԱԿՑԵԼ ԵՎ ԽԹԱՆԵԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ներդնել Արարատյան բակալավրիատը Հայաստանի և Արցախի բոլոր ավագ դպրոցներում հոսքային դասարաններով՝ այսպիսով հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր հայ աշակերտի՝ անվճար ստանալու լավագույն կրթություն:





ԿԳԱԾ-ի միջոցով մենք ձգտում ենք Հայաստանում ստեղծել համաշխարհային դասավանդման լավագույն փորձով ու գիտելիքներով զինված ուսուցիչների համայնք, որը որոշիչ դեր կխաղա երկրի հանրակրթության համակարգի մրցունակության բարձրացման, երկարաժամկետ զարգացման և համընդհանուր առաջընթացի գործում: Սրան «Այբ»-ը հասնում է ուսուցիչների կրիտիկական զանգվածի երկարատև ու համապարփակ վերապատրաստման միջոցով, որն իրականացնում են միջազգային գործընկեր կազմակերպությունների փորձագետները: Ապա արդեն վերապատրաստված ու հավաստագրված ուսուցիչներն իրենց հերթին դառնալու են հարյուրավոր ուսուցիչների վերապատրաստումն իրականացնող փորձագետներ: Այսպիսով՝ ԿԳԱԾ-ի տասնամյա գործի դրական արդյունքները կտարածվեն Հայաստանի այսօրվա ուսուցչական համայնքի լայն շրջանակների վրա:

*Դասավանդման համաշխարհային լավագույն փորձով ու գիտելիքներով զինված ուսուցիչներն առանցքային դեր են խաղում Հայաստանի կրթության համակարգի մրցունակության բարձրացման գործում:*



## ԿԳԱԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԻՔԸ **ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՆ** (ԱԲ) Է:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ և խստապահանջ ուսումնական ծրագիր է՝ նախատեսված ժամանակակից պետական և մասնավոր կրթական հաստատությունների համար: ԱԲ ծրագրում համադրվում են մի շարք հիմնական և ընտրովի առարկաներ, այդ թվում՝ մաթեմատիկա, բնագիտական առարկաներ, պատմություն, հասարակագիտական առարկաներ, լեզուներ և արվեստ: Շուրջ ութ տարի՝ նախքան «Արարատյան բակալավրիատ» անունը ստանալը, ծրագրի ամեն մի տարր մանրազնին կերպով մշակվել, փորձարկվել և կատարելագործվել է «Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած ծրագրերի շրջանակներում և «Այբ» դպրոցում:

ԱԲ-ը կգործի պետական հանրակրթական ծրագրին զուգահեռ*՝ տալով աշակերտներին ավագ դպրոցի կրթական ծրագրի ընտրության ավելի լայն հնարավորություն և ապահովելով կրթության որակի և ավարտական գնահատականների ու դիպլոմի և՛ տեղական, և՛ միջազգային ճանաչում:

Արարատյան բակալավրիատը նպատակ ունի նաև միջազգային ճանաչում ստանալու (GCE A Level, Advanced Placement, International Baccalaureate ծրագրերի նման), այսինքն՝ մեր երեխաները Հայաստանում կստանան հայալեզու, մի-

* Տպագրության պահին՝ 2017 թ. հունիսի 1-ի դրությամբ, Արարատյան բակալավրիատը ՀՀ կառավարության 2016 թ. որոշմամբ հաստատվել է որպես պետական հանրակրթական ծրագիր Հայաստանում:





ջազգային չափանիշներին համապատասխան կրթություն, որի ավարտական հավաստագիրն ու գնահատականներն առանց հավելյալ քննությունների ճանաչված կլինեն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Գործընթացի առաջին հաղթանակներն արդեն ունենք. Քեմբրիջի համալսարանը ճանաչել է Արարատյան բակալավրիատն իր GCE A Level խորացված մակարդակի դպրոցական որակավորմանը համազոր: Իսկ Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալությունը (UK NARIC)՝ միջազգային հավաստագրման ամենահեղինակավոր կառույցը, իր վերջնական եզրակացությունը ԱԲ-ի ճանաչման վերաբերյալ կտա 2016 թ. ամռանը*: Քեմբրիջից ու «UK NARIC»-ից հետո արդեն մյուս կառույցների ու համալսարանների կողմից ԱԲ-ի ճանաչումը ժամանակի հարց է:

ԱԲ-ը նպատակ ունի տարածվելու ամբողջ Հայաստանով մեկ. հետագա մի քանի տարիների ընթացքում, շնորհիվ ԿԳԱԾ-ի, ՀՀ մարզերում և Արցախում ԱԲ ծրագրով դասավանդումը հասանելի է լինելու ավագ բաղադրիչ ունեցող բոլոր հետաքրքրված դպրոցների համար: Արարատյան բակալավրիատ ծրագրով առաջին դասարանների բացումը մարզերի դպրոցներում ու կրթօջախներում ակնկալվում է 2018 թ. սեպտեմբերի 1-ին: Այսպիսով՝ ցանկացած հայ աշակերտ հնարավորություն կստանա իր մարզում անվճար սովորելու «Այբ»-ի կրթական ծրագրերով և մեթոդաբանություններով:

* Տպագրության պահի՝ 2017 թ. հունիսի 1-ի դրությամբ, Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության գործակալությունը տվել է սպասված եզրակացությունը, որով ճանաչում է Արարատյան բակալավրիատը համազոր բրիտանական GCE a Level և ամերիկյան Advanced Placement խորացված մակարդակի դպրոցական որակավորումներին: Եզրակացությունը տրվել է 2016 թ. օգոստոսին:

*Արարատյան բակալավրիատը ավագ դպրոցի ծրագիր է, միջազգայնորեն ճանաչված գերազանցության հարթակ՝ հասանելի Հայաստանի, Արցախի ու սփյուռքի դպրոցներին:*

Այսօր «Այբ» հիմնադրամը գտնվում է ԱԲ-ի ուսումնական ծրագրի միջազգային ճանաչման, ԱԲ-ով դասավանդող ուսուցիչների գնահատման ընթացակարգերի վերջնականացման, ուսուցիչների և վերապատրաստողների վերապատրաստման, ԱԲ համակարգի կառավարման ինստիտուցիոնալացման փուլում: Սա ջանատար գործընթաց է, որին «Այբ» հիմնադրամը տարիներ շարունակ պատրաստվել է և որի նպատակն է մատչելի դարձնել միջազգայնորեն ճանաչված ԱԲ ծրագիրն այլ դպրոցների համար նույնպես՝ խթանելով կրթության գերազանցությունը և հնարավորություն տալով հայկական դպրոցի աշակերտներին ստանալու մրցունակ կրթություն՝ առանց լքելու հարազատ դպրոցը կամ մարզը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## ԿԳԱԾ-Ի ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ

1 ԿԳԱԾ-ի **ԱՌԱՋԻՆ**՝ նախապատրաստական փուլում (2014-2016 թթ.) լրամշակվել է Արարատյան բակալավրիատի ուսումնական ծրագիրը՝ որպես հայալեզու, միջազգայնորեն ճանաչված գերազանցության կրթական համակարգ:







ԱԲ-ի ուսումնական ծրագրի և քննությունների լրամշակումը, ինչպես նաև ԱԲ-ի ավարտական քննական որակավորումների միջազգային ճանաչումն իրականացվել են Քեմբրիջի համալսարանի «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի հետ:

ԱԲ-ի առարկայական ծրագրերի լրամշակման նպատակով «Քեմբրիջի միջազգային քննություններ»-ի կողմից կատարվել է միջազգային համաքննում գերազանցության այլ հարթակների հետ: ԱԲ-ի ծրագրերը գնահատվել են որպես միջազգային նմանատիպ առաջատար ծրագրերի հետ (GCE A Level) հիմնականում համադրելի և մրցունակ, իսկ որոշ դեպքերում՝ անգամ գերազանցող:

Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ միասին մշակվել են ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը, գործողությունների պլանը և անհրաժեշտ կրթական նյութերը, որոնցով վերապատրաստվելու են ապագայում ԿԳԱԾ-ում ներգրավվելիք բոլոր ուսուցիչները:

**2** ԿԳԱԾ-ի **ԵՐԿՐՈՐԴ** փուլում (2017-2019 թթ.) ԱԲ-ը մեկ դասարանով ներդրվելու է այն դպրոցներում, որոնք տեղակայված են ՀՀ մարզերում և Ստեփանակերտում, ունեն ավագ դպրոցի բաղադրիչ (առանձին գործող ավագ դպրոցներ, միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ) և հատուկ կամ մասնագիտացված դպրոց չեն:

**3** ԿԳԱԾ-ի **ԵՐՐՈՐԴ** փուլում (2020-2023 թթ.) ԱԲ-ը ներդրվելու է Հայաստանի և Արցախի բոլոր այլ ավագ դպրոցներում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ դասարանով:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի շնորհիվ Հայաստանն առաջին անգամ համաշխարհային կրթական հարթակում իր ուրույն ու կարևոր տեղն է զբաղեցնում: Համաշխարհային լավագույն փորձի հետազոտությունը ցույց է տալիս, որ չկա միջազգայնորեն մրցունակ հանրակրթական մի մոդել, որը գերակա է մյուսների նկատմամբ կամ կարող է փոխարինել ազգային կրթական ծրագրերին: Փոխարենը յուրաքանչյուր պետություն մշակում է իր սեփական համակարգը՝ միջազգային լավագույն փորձի տարբեր համակարգերը փոփոխելով և հարմարեցնելով իր կարիքներին ու հանգամանքներին: «Այբ» հիմնադրամը ևս պետության աջակցությամբ հանձն է առել մերը ստեղծելու դժվարին, բայց Հայաստանի մրցունակության վրա էական ազդեցություն թողնող կրթական ծրագիր:



«ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ

*ծրագիրը ստեղծվել է «Այբ»-ի կողմից և լրամշակվել միջազգային ամենահեղինակավոր կառույցների հետ համագործակցությամբ*

*Արարատյան բակալավրիատը*

**ԿՆԵՐԴՐՎԻ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ**

*ավագ բաղադրիչ ունեցող պետական դպրոցներում արդեն*

**2018 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ**

*և անվճար կլինի բոլոր աշակերտների համար*

**UK NARIC**

*միջազգային հավաստագրման ամենահեղինակավոր կառույցը աշխարհում ԱԲ-ը ճանաչել է*

**ԱՆԳԼԻԱԿԱՆ GCE A LEVEL ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ADVANCED PLACEMENT**

*ծրագրերին համազոր*



Կրթության գերազանցության ազգային ծրագիրը պետական ծրագիր է, որը նպատակ ունի չսահմանափակվելու Հայաստանով, այլ դուրս գալու երկրի սահմաններից՝ տարածվելով բոլոր այն երկրներում, որտեղ կան հայկական համայնքներ ու դպրոցներ: Այս միջոցով մենք ոչ միայն հայաստանցի, այլև սփյուռքահայ երեխաներին հնարավորություն կընձեռենք ստանալու միջազգային չափանիշներին համապատասխան կրթություն՝ հայոց լեզվով: Այսպիսով՝ ԿԳԱԾ-ի շնորհիվ Հայաստանը կարող է դառնալ կրթություն արտահանող:

*Մենք ստեղծում ենք միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագիր, որը հիմնված կլինի մեր ազգային կրթական ժառանգության ու արժեքների վրա, որպեսզի մեր երեխաները ստանան մրցունակ, միջազգայնորեն ճանաչված, միջազգային կրթական չափորոշիչների հետ համադրելի, բայց հայալեզու կրթություն:*

100+
**ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**
*կներդրվի Արարատյան բակալավրիատը*

2000
**ՈՒՍՈՒՑԻՉ**
*վերապատրաստվելու և հավաստագրվելու է որպես դասավանդման համաշխարհային լավագույն փորձով ու գիտելիքներով զինված մասնագետ*

20 000
**ՈՒՍՈՒՑԻՉ**
*կհայտնվի ԿԳԱԾ-ի ազդեցության դաշտում*

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

*«Այբ» հիմնադրամի կազմակերպած դպրոցական մրցույթները Հայաստանում շատ արագ վերածվում են սիրված ու սպասված կրթական տոների:*

«Այբ» հիմնադրամը, ցանկանալով բարձրացնել աշակերտների լայն զանգվածների շրջանում հետաքրքրությունը ուսման հանդեպ և խթանել նրանց ակտիվ մասնակցությունը հետաքրքիր առարկայական մրցույթներին, 2008 թվականից Հայաստանում ու 2010 թվականից Արցախում կազմակերպում է մի շարք միջազգային սիրված դպրոցական մրցույթներ: Ավելին, հիմնվելով նշված մրցույթների ձևաչափերի, ինչպես նաև դրանց անցկացման հարուստ ու հաջողված փորձի վրա, «Այբ» հիմնադրամը ստեղծել և անցկացնում է նմանատիպ տեղական դպրոցական մրցույթներ ևս:



*Հայաստանի դպրոցահասակ երեխաների ավելի քան 15%-ը և բոլոր դպրոցների ավելի քան 65%-ը մասնակցում են «Այբ»-ի մրցույթներին:*

Այսօր «Այբ» հիմնադրամը ներքոհիշյալ մրցույթների բացառիկ պաշտոնական կազմակերպիչն է Հայաստանում և Արցախում:

- «ԿԵՆԳՈՒՐՈՒ. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ
- «ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՋՈՒԿ. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ
- ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ
- «ՄԵՂՈՒ. ՀԱՅԵՐԵՆԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ՏԵՂԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ
- ՌՈԲՈՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼ

Ամեն տարի տասնյակ հազարավոր հայ աշակերտներ մեծ ոգևորությամբ և հետևողականությամբ մասնակցում են միջազգային ու տեղական այս հետաքրքիր մրցույթներին՝ մասնակցության թվով ռեկորդային ցուցանիշներ գրանցելով անգամ միջազգային մակարդակով: Դպրոցական այս մրցույթների օգնությամբ «Այբ»-ը սկիզբ է դրել լայնածավալ մանկական կրթական շարժման:

*Մրցույթների կազմակերպման «Այբ»-ի տեխնոլոգիաները կիրառվում են կրթության ոլորտում:*

Ուսուցիչներն իրենց ուսումնական ծրագրում ներառում են մրցույթների առաջադրանքները՝ իրենց առարկան ավելի հետաքրքիր դարձնելու, նոր տեսանկյունից ներկայացնելու, երեխաներին տարվա ընթացքում մրցույթներին նախապատրաստելու նպատակով:


ԿԵՆԳՈՒՐՈՒ2015
2015
2016
www.kangaroo.am
kangaroo@ayb.am
Ayb Educational Foundation



ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

# «ԿԵՆԳՈՒՐՈՒ» ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթը տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրներ ներկայացնող, աշխարհում ամենազանգվածային և ամենասիրված դպրոցական մրցույթն է, որն ամեն տարի նույն օրը անցկացվում է մոտ 70 երկրում շուրջ 7 մլն երեխայի մասնակցությամբ: Հայաստանում և Արցախում, «Այբ» կրթական հիմնադրամի ջանքերով, «Կենգուրուի» շարքերը տարեցտարի համալրում են նոր հայ դպրոցականներ, ովքեր մեծ ոգևորությամբ ու հետաքրքրությամբ իրենց ուժերը փորձում են մրցույթում:



«ԿԵՆԳՈՒՐՈՒ» ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

## ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- մաթեմատիկան առավել գրավիչ ու սիրելի դարձնել երեխաների համար,
- նպաստել դպրոցական ծրագրերի յուրացմանը,
- քաջալերել աշակերտներին՝ ակտիվորեն մասնակցելու առարկայական մրցույթների և օլիմպիադաների:

*«Կենգուրու» մրցույթով «Այբ»-ը Հայաստանում նոր չափանիշներ սահմանեց զանգվածային մրցույթների անցկացման և թեստերի ստուգման գործում: «Կենգուրուն» մեծ ոգևորություն առաջացրեց ու շատ արագ վերածվեց ոչ միայն ամենասիրված մրցույթի, այլև իսկական մանկական մաթեմատիկական շարժման:*

«Կենգուրուն» տրամաբանական և հետաքրքրաշարժ խնդիրներ ներկայացնող մրցույթ է, որն անցկացվում է հենց դպրոցներում: Մասնակցության որևէ նախապայման չկա, և մրցույթին կարող են մասնակցել 3-12-րդ դասարանների բոլոր ցանկացող աշակերտները: Լավագույն արդյունքներ ցուցաբերած երեխաներին շնորհվում են պատվոգրեր ու մրցանակներ, իսկ հաղթողները ստանում են նաև գլխավոր մրցանակ՝ արժեքավոր նվեր կամ ամենամյա միջազգային ամառային ճամբարի ուղեգիր: «Այբ» հիմնադրամը, ցանկանալով խրախուսել ավելի մեծ թվով երեխաների մասնակցությունը, իր կողմից սահմանում է լրացուցիչ խրախուսական մրցանակներ, որպեսզի որևէ դպրոց առանց մրցանակակիրի չմնա:


www.kangaroo.am
ԿԵՆԳՈՒՐՈՒ
ԿԵՆԳՈՒՐՈՒ
2015
3-12-րդ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
www.kangaroo.am
ԿԵՆԳՈՒՐՈՒ
ՏԵՏՐ

## ՄԱՍՆԱԿԻՑ ԴՊՐՈՑՆԵՐ




## ՀԱՂԹՈՂՆԵՐ



4
**ՀԱՂԹՈՂ,**

1389
**ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ**
*«Կենգուրու 2015»-ում*

**ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
32
**ՔԱՂԱՔՈՒՄ**
*Հայաստանի բոլոր մարզերում*
*և Արցախում*



7
**ՄԻԼԻՈՆ ԱՇԱԿԵՐՏ**

67
**ԵՐԿՐԻՑ**
*ամեն տարի*
*մասնակցում է «Կենգուրուին»*

45 000
**ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏ**

1000+
**ԴՊՐՈՑԻՑ**
*մասնակցել է «Կենգուրու 2015»-ին*

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

# «ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՋՈՒԿ» ՌՈՒՍԵՐԵՆԻ ՄՐՑՈՒՅԹ

«Ռուսական արջուկ» մրցույթը համարվում է «Կենգուրու» միջազգային հանրաճանաչ մրցույթի «կրտսեր եղբայրը»: «Այբ» կրթական հիմնադրամը «Ռուսական արջուկ. լեզվաբանություն բոլորի համար» ռուսաց լեզվի միջազգային մրցույթի բացառիկ կազմակերպիչն է Հայաստանում (2010 թվականից) և Արցախում (2011 թվականից): Մրցույթի գլխավոր նպատակն է համընդհանուր հետաքրքրություն առաջացնել ռուսաց լեզվի հանդեպ, այն առավել գրավիչ դարձնել երեխաների համար՝ ցույց տալով ռուսաց լեզվի ողջ հմայքն ու հարստությունը:

*«Ռուսական արջուկը» նպաստում է լեզվամտածողության զարգացմանը և օտար լեզուների ուսումնասիրման խթանմանը:*

«Ռուսական արջուկը» օգնում է ռուսաց լեզվի տարածմանը Հայաստանում և նպաստում է երեխաների լեզվամտածողության զարգացմանն ու հղկմանը և աշակերտների շրջանում առաջացնում ցանկություն՝ ուսումնասիրելու նոր օտար լեզուներ՝ զուգահեռաբար խորացնելով մայրենիի գիտելիքները:



## ՄԱՍՆԱԿԻՑ ԴՊՐՈՑՆԵՐ








8500
ԱՇԱԿԵՐՏ

300+
ԴՊՐՈՑԻՑ
մասնակցում է «Ռուսական արջուկին» Հայաստանում և Արցախում

371
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԵՎ

1-ԻՆ
ՀԱՂԹՈՂԸ
«Ռուսական արջուկ-2015»-ում

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
32
ՔԱՂԱՔՈՒՄ
Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

# ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

Սա «Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնած թվով երրորդ դպրոցական մրցույթն է: 2010 թվականից «Այբ» հիմնադրամը Հայաստանում անցկացնում է Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը (ՊՔՀՄ)՝ նախատեսված քիմիայի սիրահար աշակերտների համար: Այն փոխներգործուն (ինտերակտիվ) խաղի սկզբունքով իրականացվող մրցույթ է, որում 9-12-րդ դասարանների աշակերտները լուծում են քիմիայի բարդ առաջադրանքներ, բանավիճում գիտական թեմաների շուրջ և ներկայացնում իրենց հետազոտությունների արդյունքները: Մրցույթը հնարավորություն է տալիս բարձր դասարանի աշակերտներին ամբողջ թիմով փնտրելու և գտնելու լուծումներ այնպիսի հարցադրումների, որոնք այս պահին գուցե դեռ լուծում չունեն:

*Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի մասնակիցները մինչ այժմ լուծում չունեցող քիմիական խնդիրներին լուծումներ են փնտրում՝ գիտական մակարդակով:*




Webster's





ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

# ՄՐՑԱՇԱՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## 1 ՆԵՐԳՐԱՎԵԼ

աշակերտներին գիտական գործունեության մեջ

## 2 ՆՊԱՍՏԵԼ

աշակերտների ստեղծագործական կարողությունների ու գիտական քննարկումներ վարելու հմտությունների զարգացմանը

## 3 ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

աշակերտներին խմբային աշխատանքի չափանիշներն ու ձևերը

## 4 ԽԹԱՆԵԼ

քիմիայի արտադասարանական աշխատանքները

## 5 ԶԱՐԳԱՑՆԵԼ

միջառարկայական կապերը

## 6 ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՆԵԼ

առաջատար գիտնականներին, ասպիրանտներին և ուսանողներին աշակերտների հետ աշխատանքին

## 7 ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը

Ահա մի քանի առաջադրանք, որ մեր դպրոցականները փորձում են գիտական մակարդակով լուծել մրցաշարի շրջանակներում:

## 1 ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Բնութագրեք ֆիզիկաքիմիական այն հիմնական գործընթացները, որոնք ընկած են կտավների, գրքերի և ձեռագիր մատյանների «ծերացման» հիմքում: Ինչպե՞ս կարելի է դանդաղեցնել այդ գործընթացը: Նկարագրեք կտավների վերականգնման հիմնական եղանակները և նշեք դրանց թերությունները:

## 2 ՕՐԳԱՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱՆՈԹ

Օրգանիզմը կարելի է դիտարկել որպես կատարյալ փորձանոթ, որտեղ կարգավորված մեխանիզմներով ընթանում են բազմաթիվ և բազմատեսակ ռեակցիաներ: Նկարագրեք որոշ փոխակերպումներ և դրանց խանգարման արդյունքները:

## 3 «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹԱՆԱՔ»

Առաջարկեք «անտեսանելի թանաքի» և որոշ գործոնների ազդեցությամբ «տեսանելիության» դարձելի փոփոխությամբ օժտված որևէ նյութ կամ նյութերի խառնուրդ: Գնահատեք այդպիսի թանաքի կիրառման հնարավորությունը:

| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014-2015 |
|---|---|---|---|---|---|
| ՄԱՍՆԱԿԻՑ ԴՊՐՈՑՆԵՐ | 8 | 17 | 18 | 19 | 33 |
| ՄԱՍՆԱԿԻՑ ԹԻՄԵՐ | 7 | 14 | 18 | 19 | 33 |
| ՄԱՍՆԱԿԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ | 35 | 70 | 89 | 92 | 150 |
| ՀԱՂԹՈՂ ԹԻՄԵՐ | «Էվրիկա» Վանաձոր | «Գիտունիկ» Երևան | «Էվրիկա» Վանաձոր<br>«Ալմաստ» Վաղարշապատ | «Ալմաստ» Վաղարշապատ | «Պրոտոն» Հրազդան |




Մրցույթին մասնակցած բնակավայրեր

170
ԱՇԱԿԵՐՏ

36
ԹԻՄՈՎ

ՀՀ տարբեր մարզերից մասնակցել է 2015-2016 թթ. Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարին

ԹԻՄԵՐ ՀՀ
10
ՔԱՂԱՔԻՑ՝

Աբովյան, Արարատ, Գյումրի, Երևան, Հրազդան, Մասիս, Ստեփանավան, Վաղարշապատ, Վանաձոր, Վարդենիս

ՎԱՆԱՁՈՐԻ «ԷՎՐԻԿԱՆ»՝ ԵՌԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ

2010, 2012, 2015-2016 թթ. մրցաշարերին



ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

# «ՄԵՂՈՒ» ՀԱՅԵՐԵՆԻ ՄՐՑՈՒՅԹ

Հիմնվելով «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթների անցկացման բազմամյա դրական փորձի վրա՝ «Այբ» հիմնադրամը ստեղծել և 2014 թվականից Հայաստանում և Արցախում անցկացնում է «Մեղու» հայերենի մրցույթը: «Մեղու»-ի նպատակները նույնն են, ինչ «Այբ»-ի կազմակերպած մյուս դպրոցական մրցույթներինը՝ սեր արթնացնել աշակերտների շրջանում դպրոցական առարկաների հանդեպ, խթանել դպրոցահասակ երեխաների մասնակցությունը ոգևորիչ ու հետաքրքրաշարժ մրցույթներին: «Մեղուն» չի զիջում «Կենգուրուին» աշակերտների մասնակցության բարձր ցուցանիշներով:

*«Մեղու» հայերենի մրցույթով «Այբ» հիմնադրամը ստեղծել է հայոց լեզվի զանգվածային մրցույթի որակյալ ու հաջողված բովանդակություն:*


ՄԵՂՈՒ
ՊԱՏՎՈԳԻՐ
ՄԵՂՈՒ2014
ՊԱՏՎՈԳԻՐ
ՄԵՂՈՒ2014

«ՄԵՂՈՒ» ՀԱՅԵՐԵՆԻ ՄՐՑՈՒՅԹ

## «ՄԵՂՈՒ»-Ի ՆՊԱՏԱԿՆ Է՝

- համընդհանուր հետաքրքրություն առաջացնել հայոց լեզվի հանդեպ,
- այն առավել գրավիչ դարձնել երեխաների համար,
- զարգացնել նրանց լեզվամտածողությունը և լեզվագիտական ունակությունները,
- օգնել աշակերտների ներուժի բացահայտմանը և ինքնադրսևորմանը,
- նպաստել հայոց լեզվի զարգացմանն ու տարածմանը:

Ի տարբերություն «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթների, որոնց դեպքում առաջադրանքները պատրաստի ուղարկվում են միջազգային կազմակերպությունների կողմից և ապա թարգմանվում բոլոր մասնակից երկրներում, «Մեղու»-ի պարագայում պետք էր ստեղծել նոր բովանդակություն: Մշակվեց և կյանքի կոչվեց առաջադրանքների ստեղծման մի այնպիսի համակարգ, որի շնորհիվ ունեցանք գրագետ, գրավիչ ու հետաքրքրաշարժ առաջադրանքներ, որոնք էլ դարձան մրցույթի հաջողության հիմքը: Մասնագետների մի ամբողջ խումբ առաջադրանքների ստեղծման վրա աշխատեց հստակ հանձնարարականով, կանոնավոր հանդիպումների ու քննարկումների ժամանակացույցով, ինչի արդյունքում ստեղծվեց տրամաբանական, հետաքրքրաշարժ, իրար չհակասող ու չկրկնող, զուտ հիշողության կամ հստակ կանոնների ու գիտելիքների վրա չհիմնված առաջադրանքների փաթեթ:


www.meghu.am
www.meghu.am
www.meghu.am

## ՄԱՍՆԱԿԻՑ ԴՊՐՈՑՆԵՐ




## ՀԱՂԹՈՂՆԵՐ



Ինչպես և «Կենգուրուի» դեպքում, «Մեղու»-ին մասնակցելու որևէ նախապայման չկա, և մրցույթին կարող են մասնակցել 3-12-րդ դասարանների բոլոր ցանկացող աշակերտները: Լավագույն արդյունքներ ցուցաբերած երեխաներին շնորհվում են պատվոգրեր ու մրցանակներ, իսկ հաղթողները ստանում են արժեքավոր նվերներ: «Այբ» հիմնադրամն իր կողմից սահմանում է լրացուցիչ խրախուսական մրցանակներ, որպեսզի որևէ դպրոց առանց մրցանակակրի չմնա:




45 000
**ԱՇԱԿԵՐՏ**

960+
**ԴՊՐՈՑԻՑ**
*մասնակցել է «Մեղու» մրցույթին առաջին իսկ տարում*

1
**ՀԱՂԹՈՂ ԵՎ**

1213
**ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ**
*«Մեղու 2015»-ում*

**ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
32
**ՔԱՂԱՔՈՒՄ**
*Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում*

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

# ՌՈԲՈՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2016 թվականից «Այբ» կրթական հիմնադրամը Հայաստանում անցկացնելու է ևս մեկ աշխարհահռչակ մրցույթ՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի (ՌՀՕ) (World Robot Olympiad, WRO) ազգային փուլը: ՌՀՕ-ն հիանալի հարթակ է 21-րդ դարում արդիական գիտելիքներն ու հմտությունները յուրացնելու համար: Այն գիտության, տեխնոլոգիայի և կրթության ոլորտներին առնչվող նախագիծ է: Այսօր ՌՀՕ-ի ազգային փուլերին մասնակցում է 55 երկրի ավելի քան 21.000 թիմ:

*Այս օլիմպիադայով «Այբ»-ը ձգտում է խթանել մեր դպրոցներում ռոբոտաշինության, ծրագրավորման ու ճարտարագիտության դասավանդումը և միջազգային հայտնի ու սիրված մրցույթներում ու օլիմպիադաներում հայ աշակերտների մասնակցությունը:*



ՌՈԲՈՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

# ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## 1 ՆԵՐԳՐԱՎԵԼ

աշակերտներին գործնական գիտական գործունեության մեջ

## 2 ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆԵԼ

հատկապես մաթեմատիկայի, ծրագրավորման, ֆիզիկայի նկատմամբ՝ նպաստելով միջառարկայական կապերի ընդլայնմանը

## 3 ԶԱՐԳԱՑՆԵԼ

աշակերտների տրամաբանությունը և ճարտարագիտական ունակությունները

## 4 ԽԹԱՆԵԼ

թիմային աշխատանքի հմտությունները

## 5 ՆՊԱՍՏԵԼ

տեսական գիտելիքների գործնական կիրառմանը

## 6 ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՈՒ ԽՈՐԱՑՆԵԼ

աշակերտների ստեղծագործական կարողությունները





Մրցույթին կարող են մասնակցել 10-19 տարեկան աշակերտները թիմերով: ՌՀՕ-ի ազգային փուլի առաջադրանքները նույնն են, ինչ միջազգային փուլինը: Ազգային փուլի հաղթող թիմ(եր)ի գլխավոր մրցանակը մասնակցությունն է տվյալ տարվա Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի միջազգային փուլին:




21 000
**ԹԻՄ**

55
**ԵՐԿՐԻՑ**

*մասնակցում է Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլերին*

1000+
**ԱՇԱԿԵՐՏ**

37
**ԵՐԿՐԻՑ**

*ամեն տարի մասնակցում է օլիմպիադայի միջազգային փուլին*

# «ԱՅԲ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ. AybEF

«Այբ» ակումբի՝ համայնքաշինական նշանակության կարևոր ծրագրերից է նաև «Այբ» տնտեսական ֆորումը (Ayb Economic Forum/AybEF)։ AybEF-ի նպատակն է նպաստել «Այբ» համայնքի անդամների միջև կապերի ամրապնդմանը, համատեղ գործարար ծրագրերի նախաձեռնմանն ու իրականացմանը, ինչպես նաև համայնքի շահերի և գաղափարների խթանմանը։

AybEF-ի մասնակիցներին ներկայացվում են նախագծեր տարբեր ոլորտներից՝ գործարարություն, տնտեսություն, մշակույթ, որոնք ենթադրում են համատեղ ներդրումներ և կարող են հետաքրքրել «Այբ» համայնքի անդամներին կամ պարզապես կարիք ունեն նրանց մասնագիտական գնահատականի։

AybEF-ն իրականացվում է նաև որպես միջավայրաստեղծ միջոցառում, որը ստեղծում է միասնական հարթակ՝ շփումների, գաղափարների փոխանակման, նոր գործարար և ընկերական կապերի ստեղծման համար, ինչպես նաև նպաստում է նոր ծրագրերի իրականացմանը։

AybEF-ի շրջանակում իրականացվել են մասնավորապես հետևյալ միջոցառումները։



AybEF-ի

5

ՆՍՏԱՇՐՋԱՆ

170+

ՄԱՍՆԱԿԻՑ

37

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

1 «iTea» ձևաչափով միջոցառում, որի նպատակն է ստեղծել անկաշկանդ մթնոլորտ, երբ մեկ գավաթ թեյի շուրջ հավաքվում են այս կամ այն ոլորտի մասնագետներ, ծավալում հագեցած քննարկումներ արդիական թեմաների շուրջ և հանդես գալիս ոլորտի կատարելագործմանն ու առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներով:

2 Կլոր սեղան՝ «Հայերի ցեղասպանության հարցի կարգավորման ռազմավարություն» թեմայով՝ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ժառանգ և Վուդրո Վիլսոնի ժառանգության հիմնադրամի նախագահ Դոնալդ Վիլսոն Բուշի և իսրայելցի հայտնի պատմաբան Յաիր Աուրոնի մասնակցությամբ:

3 Հայտնի գործարար և վենչուրային ներդրող Սերգեյ Բելոուսովի հետ հանդիպում, որին հրավիրված էր տեղեկատվական տեխնոլոգիաների և սկսնակ ձեռներեցության ոլորտից 130 մասնակից:

4 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի պատվիրակության այց, որի նպատակն էր կրթական համակարգերի ձևավորման և համապատասխան կրթական կառուցվածքների ստեղծման գործում «Այբ»-ի դրական փորձի փոխառումը:

**5** «ՏՏ-գագաթնաժողով 2015. ոլորտի առաջնորդների համար» համաժողով, որը ռուսական Համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների ընկերակցությունը (Ассоциация предприятий компьютерных и информационных технологий/АПКИТ) անցկացրեց Երևանում, և որը հնարավորություն ընձեռեց ռուսական բիզնեսին դիտարկելու Հայաստանի ձեռնարկատիրական համայնքի հետ համագործակցության ընդլայնումը:

**6** Սեմինար-գործնական դասընթաց՝ անցկացված Ռուսական վենչուրային ընկերության (Российская венчурная компания/РВК) հետ համատեղ՝ Հայաստանում սկսնակ ձեռներեցության խթանման նպատակով:

Այս և այլ միջոցառումների արդյունքում «Այբ» ակումբը նոր գործարար կապեր է հաստատել ռուս և հայ գործընկերների հետ, ինչպես նաև ձեռք բերել նոր ընկերներ և համախոհներ՝ ընդլայնելով «Այբ» համայնքը:

AybEF-ի շրջանակում՝

6
ՀԱՄԱՅՆՔԱՇԻՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

450+
ՄԱՍՆԱԿԻՑ

3
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԿՍՆԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

250
ՄԱՍՆԱԿԻՑ

5
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ազգային երգն ու պարը կենցաղ վերադարձնելու և ազգային ինքնագիտակցության զարգացումը խթանելու նպատակով «Այբ» կրթական հիմնադրամը և «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանը 2015 թվականի սեպտեմբերին համատեղ ստեղծեցին «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը, որի առաքելությունն է ուսումնասիրել, ուսուցանել ու հանրայնացնել ազգային երգերն ու պարերը՝ դրանք դարձնելով հայ ժողովրդի կենդանի մշակույթի մաս, և նպաստել ազգային ինքնագիտակցության բարձրացմանը։

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## 1 ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԸ ՄՏՑՆԵԼ ԴՊՐՈՑ

Երգ ու պարի ուսուցման միջոցով ազգային մշակույթը հասու դարձնել երեխաներին:

## 2 ՌԱԶՄԱՊԱՐԸ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԲԱՆԱԿՈՒՄ

Ռազմապարի դասավանդումը հայ երիտասարդների շրջանում հայկական ոգին արթնացնելու, գաղափարական մարդիկ կրթելու, ինչպես նաև համախմբվածություն առաջացնելու միջոց է:

## 3 ՀԱՆՐԱՅՆԱՑՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՆ ՈՒ ՊԱՐԸ ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ազգային երգ ու պարի բեմականացումը խթանելու միջոցով ժողովրդին ավելի ընկալելի դարձնել ազգային մշակույթը՝ նպաստելով դրա հանրայնացմանը:

## 4 ՍՏԵՂԾԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐԻ ԱՐԽԻՎ

Ազգային երգերի և պարերի հավաքման, ուսումնասիրման, գիտահետազոտական աշխատանքի կատարման, պարերի գրառման համակարգի մշակման և տարածման, տվյալների շտեմարանի ստեղծման միջոցով խթանել ազգային մշակույթի վերաբերյալ եղած նյութի պահպանումը:

*Երեխաների՝ ազգային ոգով դաստիարակությունը, նրանց կողմից հայկական ինքնության գիտակցումը կարևորագույն բաղադրիչն են սերնդակերտման առաքելության մեջ:*

Այս գաղափարը «Այբ» դպրոցում առաջին իսկ օրից իրագործվում է «պար» առարկայի միջոցով: Պարի դասերը մատուցում են «Կարին» ավանդական երգիպարի խմբի լավագույն պարուսույցները:

Ակադեմիան նախատեսում է գործունեության չորս ուղղություն՝ կրթական, ռազմապարային, մշակութային և գիտական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթաուղղությունները, որոնց շրջանակում իրականացվելու են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ մշակութային առարկաների համակարգում, ուսուցիչների և դասախոսների պատրաստում ու վերապատրաստում, մագիստրոսական ծրագրի ստեղծում, ռազմապարի ներդրում բանակում՝ որպես մարմնակրթության և հոգևոր դաստիարակության մաս, պարի գիտական հիմնավորում և այլն:





4
**ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ՝**
կրթական, ռազմապարային, մշակութային, գիտական

**ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (2016 Թ.)**

113
**ԴՊՐՈՑՈՒՄ՝**
63-ը՝ Երևանում, 50-ը՝ ՀՀ մարզերում, կդասավանդվի ազգային երգ ու պար առարկան

113
**ՈՒՍՈՒՑԻՉ**
կվերապատրաստվի 5-6-րդ դասարաններում դասավանդելու համար

# ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

2008-2015 թվականներին «Այբ» կրթական հիմնադրամը կրթաթոշակ է տրամադրել Հայաստանից և սփյուռքից 30 ուսանողի՝ աշխարհի առաջատար բուհերում նրանց ուսումնառության և կրթության շարունակականությունն ապահովելու համար: Կրթաթոշակները հայթայթվել են «Այբ» հիմնադրամի ջանքերով, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նպատակային նվիրատվությունների հաշվին: Հետագայում «Այբ»-ի կրթաթոշակների ծրագրին օգնելու եկավ «Լույս» հիմնադրամը, որի շնորհիվ աշխարհի լավագույն բուհեր ընդունված հայ երիտասարդներն ուսման ծախսերի հատուցում են ստանում: «Այբ»-ը լուրջ ներդրում է ունեցել «Լույսի» ստեղծման գործում և այսօր ներկայացված է հիմնադրամի խորհրդում:

*Կրթաթոշակների տրամադրման այս ծրագրով «Այբ» հիմնադրամը ներդրեց և փորձարկեց կրթության մեկենասության ինստիտուտ, որի տեխնոլոգիաները հետագայում կիրառվեցին «Այբ» ավագ դպրոցի սաների համար կրթաթոշակային ֆոնդի հայթայթման գործում:*



| ՈՒՍԱՆՈՂՆԵՐ | ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ | ԳՈՒՄԱՐ ՀՀ ԴՐԱՄ | | ԳՈՒՄԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|
| 30 | 18 | 240 164 000 | ≈ | 620 283 |

Ահա մի քանիսը այն համալսարաններից, որտեղ ուսանել կամ ուսանում են «Այբ»-ի կրթաթոշակառուները.





620 283
**ԱՄՆ ԴՈԼԱՐ**

*«Այբ» հիմնադրամը տրամադրել է հայ ուսանողների՝ աշխարհի լավագույն բուհերում ուսման ծախսերը հատուցելու նպատակով*
*(2008-2015 թվականների ընթացքում)*

30
**ՈՒՍԱՆՈՂ**

*ստացել է աշխարհի լավագույն համալսարաններում ուսանելու հնարավորություն՝ շնորհիվ «Այբ»-ի կրթաթոշակային ծրագրի*
*(2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)*

# «ԱՅԲԼԱԲ»

«Այբ» կրթական հիմնադրամի առաջին լայնածավալ ծրագրերից մեկը տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից առարկայական լաբորատորիաների՝ «ԱյբԼաբ»-երի ստեղծումն ու դրանցում դասավանդման մեթոդաբանությունների կատարելագործումն է: «ԱյբԼաբ»-երն ամբողջական լաբորատոր համալիրներ են՝ իրենց ուրույն տարածքային լուծումներով, կահավորանքի ու սարքավորումների համալրվածությամբ, հաղորդակցական և անվտանգության համակարգերով: «ԱյբԼաբ» ծրագրի նպատակն է՝ ստեղծել ուսումնական միջավայրեր, որտեղ երեխային համակում է սովորելու, նորը ճանաչելու և արարելու ցանկությունը, որտեղ նա հնարավորություն է ունենում բացահայտելու իր ներուժը, փորձարկումներ և փոքրիկ հայտնագործություններ անելու, իր ապագա հաջողության հիմքերը դնելու:

*«ԱյբԼաբ» նախագծի միջոցով ստեղծվեց ժամանակակից առարկայական լաբորատորիայի օրինակելի մոդել:*

«ԱյբԼաբ»-ը ոչ միայն լայն տարածում գտավ «Այբ» կրթական հիմնադրամի ջանքերով ու ֆինանսական մասնակցությամբ, այլև դարձավ Հայաստանի տարբեր դպրոցներում ներդրվող նոր առարկայական լաբորատորիաների համար նախատիպ:









ԱՅԲԼԱԲ

# «ԱՅԲԼԱԲ»-ԵՐԸ՝

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆ.

նախագծված են տեղական և արտասահմանյան լավագույն փորձի հիման վրա.

## ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ՀԱԳԵՑԱԾ ԵՆ.

համապատասխանում են արդի տեխնոլոգիական և մասնագիտական չափանիշներին.

## ԱՆՎՏԱՆԳ ԵՆ.

բավարարում են անվտանգության և էրգոնոմիկայի պահանջներին.

## ԻՐԱԿԱՆ ԵՆ ԵՎ ՎԻՐՏՈՒԱԼ.

տալիս են ինչպես իրական, այնպես էլ վիրտուալ փորձերի անցկացման հնարավորություն.

## ՆԱԽԱԳԾՎԱԾ ԵՆ «ՄԵԿ ՍԱՐՔ – ՄԵԿ ԴԱՍԱՍԵՂԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔՈՎ.

յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տրվում անձամբ փորձեր կատարելու.

## ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ.

ապահովում են թե՛ հանրակրթական, թե՛ խորացված ծրագրերով ուսուցման իրականացումը:

*«Այբ»-ի ցույց տված օրինակների շնորհիվ նմանատիպ սեփական լաբորատորիա ունենալը կարևոր է դարձել նաև այլ դպրոցների համար, որոնցում «ԱյբԼաբ»-եր բացելու նախաձեռնությունը եկել է հենց այդ դպրոցներից:*

Ժամանակին դպրոցների համար բարեփոխում կարող էր սահմանափակվել դասասենյակի վերանորոգմամբ կամ համակարգչային տեխնիկայի նվիրաբերությամբ: «ԱյբԼաբ» նախագծի շնորհիվ բարերարությունը դպրոցների համար դարձավ առավել համակարգային ու թիրախային: «ԱյբԼաբ» ծրագիրը նաև օրինակ ծառայեց դեպի դպրոց նոր ֆինանսական միջոցներ ուղղելու և դպրոցների ու առհասարակ կրթական ոլորտի զարգացման գործում երկարաժամկետ ներդրումներ անելու:











ԱՅԲԼԱԲ

# ԱՅԲԼԱԲԵՐ

## 2007 Թ.

Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

Բենիուր Փախչանյանի անվան **ֆիզիկայի «ԱյբԼաբ»**

Ծառայում է ֆիզիկա և աստղագիտություն առարկաների դասերի անցկացմանը:

## 2008 Թ.

Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

**Քիմիայի «ԱյբԼաբ»**

Ծառայում է քիմիա և կենսաբանություն առարկաների դասերի անցկացմանը:

## 2010 Թ.

Բերդի թիվ 1 միջնակարգ դպրոց, Բերդ (Տավուշի մարզ)

Հայկազ Մեժլումյանի անվան **ինֆորմատիկայի «ԱյբԼաբ»**

Ծառայում է ինֆորմատիկայի և համակարգչային տեխնիկայի կիրառություն պահանջող այլ առարկաների դասերի անցկացմանը:

> *Բերդի դպրոցի ինֆորմատիկայի «ԱյբԼաբ»-ը ստեղծվել է «Այբ»-ի համահիմնադիր Արթուր Բերդի հովանավորությամբ:*

## 2010 Թ.

Քաջարանի թիվ 1 և թիվ 4 դպրոցներ, Քաջարան (Սյունիքի մարզ),

Տարածաշրջանում **էկոլոգիայի առաջին «ԱյբԼաբ»**-եր

Ծառայում են «Քաջարան. բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի և «Էկոլոգիա» խմբակի դասերի անցկացմանը: Օգտագործվում են բնագիտության, աստղագիտության, աշխարհագրության և անգամ օտար լեզուների դասընթացներն արդիական պահանջների համաձայն կազմակերպելու նպատակով:

> *Էկոլոգիայի երկու «ԱյբԼաբ»-երը բացվել են Քաջարանի քաղաքապետարանի հովանավորությամբ:*

## 2011 Թ.

Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց, Վաղարշապատ (Արմավիրի մարզ)

**Ֆիզիկայի «ԱյբԼաբ»**

Ծառայում է ֆիզիկա առարկայի և բնագիտական այլ առարկաների դասերի անցկացմանը:

## 2012 Թ.

Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց, Վաղարշապատ (Արմավիրի մարզ)

**Կենսաբանության և քիմիայի մեկական «ԱյբԼաբ»**

> *Վաղարշապատի դպրոցի երեք լաբորատորիաների ստեղծումը ֆինանսավորվել է դպրոցի պահուստային ֆոնդից:*

# «ԱյբԼաբ»-եր

**4** ՄԱՐԴ

**5** ԴՊՐՈՑ

**8** ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

**12 000 000** ԴՐԱՄ

ծախսել է «Այբ» կրթական հիմնադրամը առաջին երկու «ԱյբԼաբ»-երի ստեղծման վրա

**≈35 000 000** ԴՐԱՄ

ուղղվել է դեպի դպրոցներ մնացած վեց «ԱյբԼաբ»-երի ֆինանսավորման նպատակով (դպրոցների ներքին ֆոնդերից կամ բարերարներից)



*Կան և ութ լաբորատորիաներ, որոնք ստեղծվել են «Այբ» դպրոցներում «ԱյբԼաբ»-երի հայեցակարգով ու տեխնոլոգիաներով: «Այբ» ավագ դպրոցում գործում են ֆիզիկայի, քիմիա-կենսաբանության և ռոբոտիկայի լաբորատորիաներ, որոնց կառուցումն ու համալրումը ֆինանսավորվել է «Այբ» հիմնադրամի կողմից՝ դպրոցաշինության ընդհանուր ծրագրի ֆինանսավորման շրջանակներում: Իսկ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսավորմամբ «Այբ» հիմնադրամի կողմից ստեղծված Դիլիջանի կենտրոնական դպրոցում գործում են գիտության, ատաղձագործության, տեխնոլոգիայի և ինֆորմատիկայի լաբորատորիաներ: Բոլոր «ԱյբԼաբ»-երը և «Այբ» դպրոցների լաբորատորիաները ապագայում կմիավորվեն մեկ ընդհանուր «ԱյբԼաբ» ցանցի մեջ, որի շնորհիվ ցանցում ընդգրկված դպրոցները հնարավորություն կստանան համատեղ օգտվելու ռեսուրսներից, ակտիվացնելու համագործակցությունը, փորձի և ինֆորմացիայի փոխանակումը, համատեղ նախագծերի իրականացումը:*



8

**ԱՅԲԼԱԲ**

Հայաստանի 4 մարզի 5 դպրոցում ստեղծվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից

2007-2012 թթ. ընթացքում

6

**ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ**

ծախսել է «Այբ» հիմնադրամը առաջին երկու «ԱյբԼաբ»-երից յուրաքանչյուրի ստեղծման վրա

6

**ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ**

X6

ուղղվել է մնացած վեց «ԱյբԼաբ»-երի ֆինանսավորման նպատակով

(դպրոցների ներքին ֆոնդերից կամ բարերարներից)

# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՈՐԱՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Սա «Այբ» կրթական հիմնադրամի առաջին ծրագրերից էր, որն «Այբ»-ն իրականացրել է 2006-2008 թվականներին բարձր դասարանցիների համար: Մասնակցությունը «Այբ»-ի կազմակերպած առարկայական խորացված դասընթացնե-րին մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և անգլերեն լեզու առար-կաներից երկու տասնյակ շնորհաշատ դպրոցականների հնարավորություն տվեց անվճար աջակցություն ստանալու գիտելիքների զարգացման և հետագա մասնագիտության ընտրության հարցում: Ծրագրի շրջանավարտներից շատե-րը, ովքեր այսօր սովորում են աշխարհի լավագույն բուհե-րում կամ արդեն ավարտել և աշխատում են իրենց երազած մասնագիտություններով, «Լույս» հիմնադրամի կրթաթոշա-կառուներ են, աշխատում ու ծրագրեր են իրականացնում թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում՝ ի նպաստ հայրենիքի զար-գացման:









ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՈՐԱՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՏՎԵՑ՝

## 1 ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ՝

մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և անգլերեն լեզու առարկաներից.

## 2 ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

և գրավոր խոսքի հմտությունների զարգացում.

## 3 ՈՒՍՈՒՑՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄՈՏ՝

փորձված մեթոդաբանությամբ.

## 4 ՈՒՍՈՒՑՈՒՄ «ԱՅԲԼԱԲ»-ԵՐՈՒՄ՝

«Այբ»-ի ստեղծած ժամանակակից ուսումնական լաբորատորիաներում.

## 5 «ԱՅԲ»-Ի ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ՝

հնարավորություն օգտվելու «Այբ»-ի ունեցած բոլոր կրթական ռեսուրսներից.

## 6 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

դիմելու կարգ, մասնագիտական պրոֆիլի մշակում և այլն.

## 7 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԵՍՏԵՐԻ՝

իրենց ընտրած բուհեր դիմելու համար.

## 8 ՄԵՆՏՈՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ինչպես հետագա կրթության, այնպես էլ կարիերայի խթանման հարցում:

Այսօր ծրագրի շրջանավարտները օրինակ են ծառայում իրենց քույր-եղբայրների, տարեկիցների համար և արդեն իրենք են իրենց գիտելիքներով, փորձով, կապերով աջակցում իրենց հետևորդներին՝ հարթելու ուղին դեպի կրթական բարձունքներ: Եվ այսօր արդեն ունենք առաջին քաղցր բերքը կրթության ոլորտում բարերարության սերմանումից: Մեր դասընթացների շրջանավարտներից մեկը՝ Արսեն Մամիկոնյանը, ժամանակին ստանալով անհրաժեշտ աջակցություն գիտելիքների զարգացման համար, տեսնելով «Այբ» համայնքի անդամների ու մասնագետների ջերմությունն ու նվիրվածությունը, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտելուց հետո որոշում կայացրեց միանալ «Այբ»-ին՝ դառնալով «Այբ» ակումբի անդամ՝ իր ժամանակային ու նյութական ռեսուրսների գիտակցված ներդրմամբ օգնելով Հայաստանի կրթական ոլորտի զարգացմանը:

*Հենց այս ծրագրի շրջանակներում է, որ ծնունդ է առել և փորձարկվել «Այբ» հիմնադրամի կողմից 2014 թվականին գործարկված Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱԾ) իրականացման գլխավոր գործիքը՝ «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրը:*



ԾՐԱԳՐԻ
20
ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ
12 -Ն

*ընդունվել է աշխարհի լավագույն բուհեր՝*
*Քեմբրիջի համալսարան, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ, Ստենֆորդի համալսարան, Տորոնտոյի, Քորնելի, Իլինոյսի համալսարաններ, Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ և այլն*

*Ծրագրի բոլոր 20 շրջանավարտները ընդունվել են*
3
ՏԵՂԱԿԱՆ ԵՎ
11
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՀ



**Աննա Սրապիոնյան**

- 2009-2013 ԵՊՀ, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
- 2013-2014 Չիկագոյի համալսարան, ֆինանսական մաթեմատիկա
- 2014-ից Քոռնելի համալսարան, կիրառական մաթեմատիկայի կենտրոն



**Արթուր Ասլանյան**

- 2011-2015 Տորոնտոյի համալսարան, կիրառական գիտության և ճարտարագիտության ֆակուլտետ



**Արթուր Գևորգյան**

- 2010-2014 ԵՊՀ, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ
- 2014-2016 ԵՊՀ, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ



**Արմինե Հովհաննիսյան**

- 2010-2014 ԵՊՀ, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ
- 2014-2016 ԵՊՀ, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ



**Արսեն Մամիկոնյան**

- 2008-2012 MIT, էլեկտրական ճարտարագիտություն և համակարգչային գիտություններ
- 2010-2011 Քեմբրիջի համալսարան, փորձարարական և տեսական ֆիզիկայի բաժին



**Դավիթ Սեյրանյան**

- 2009-2013 Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
- 2013-2015 Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ



**Լևոն Շտոյան**

- 2011-2015 Երևանի պետական բժշկական համալսարան, ընդհանուր բժշկության ֆակուլտետ



**Կարապետ Կոստանդյան**

- 2007-2011 Երևանի պետական համալսարան, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ
- 2011-2013 ԵՊՀ, ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի և Ռոստոկի համալսարանի համատեղ «Վիզուալ հաշվարկ» ծրագիր
- 2013-2014 Նույն կենտրոնի «Տեղեկատվական համակարգերի կառավարում» ծրագիր



**Կարեն Շարաֆյան**

- 2011-2015 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ֆակուլտետ



**Հայկ Հակոբյան**

- 2010-2014 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ֆակուլտետ
- 2014-2016 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, տեսական ֆիզիկայի բաժին



**Մենուա Գևորգյան**

- 2007-2011 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ֆակուլտետ
- 2011-2013 Նույն համալսարանի նույն ֆակուլտետ
- 2013-2017 Նույն համալսարանում՝ ասպիրանտուրա (լազերային ֆիզիկա)



**Մեսրոպ Վարդանյան**

- 2010-2014 ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան
- 2014-2016 Նույն համալսարանում՝ մագիստրոսի աստիճան (տնտեսագիտություն)



**Նարեկ Թովմասյան**

- 2009-2013 Ստենֆորդի համալսարան, մաթեմատիկայի ֆակուլտետ, համակարգչային գիտությունների ֆակուլտետ
- 2013-2015 Նույն համալսարանի համակարգչային գիտությունների ֆակուլտետ, մագիստրոսի աստիճան



**Ներսես Սրապիոնյան**

- 2010-2014 Երևանի պետական համալսարան, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
- 2014-2016 Նույն համալսարանի նույն ֆակուլտետ, մագիստրոսի աստիճան



**Սիմոն Էլմոյան**

- 2012-2017 Սանտա Բարբարայի համալսարան



**Վահան Հուրոյան**

- 2008-2012 ԵՊՀ, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
- 2010-2011 IREX փոխանակման ծրագրով՝ Մինեսոտայի համալսարան
- 2012-2017 Մինեսոտայի համալսարան, մաթեմատիկայի ֆակուլտետ



**Վարդան Վերդյան**

- 2009-2012 Յակոբսի համալսարան, մաթեմատիկայի ֆակուլտետ
- 2012-ից Քորնելի համալսարան, Կիրառական մաթեմատիկայի կենտրոն



**Տիգրան Իշխանյան**

- 2010-2014 Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, աերոֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների ֆակուլտետ



**Տիգրան Հակոբյան**

- 2008-2012 Երևանի պետական համալսարան, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
- 2012-ից Իլինոյսի համալսարան

# ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

«Այբ» կրթական հիմնադրամը, մեծապես կարևորելով մանկավարժների, ուսուցիչների, ուսանողների վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցը և ցանկանալով օգնել նրանց քայլելու ժամանակի գիտական ու տեխնոլոգիական զարգացումներին համընթաց, պարբերաբար կազմակերպում է վարպետության դասեր՝ տարբեր թեմաներով և ձևաչափերով: «Այբ» հիմնադրամի կազմակերպած վարպետության դասերը հնարավորություն են տալիս հայ մասնագետներին ու երիտասարդներին ունկնդրելու դասախոսություններ՝ հետաքրքիր ու արդիական թեմաներով: Աշխարհահռչակ ու հաջողակ մասնագետները լսարանին հաղորդակից են դարձնում իրենց անձնական փորձին և իրենց օրինակով ցույց տալիս, թե ինչպես կարելի է հաջողության հասնել այս կամ այն ոլորտում և թե որոնք են այդ հաջողության բաղադրիչ մասերն ու գաղտնիքները, օրինակ ծառայում երեխաների համար, սովորեցնում ուսանողներին, ոգևորում սկսնակ ձեռներեցներին և սեփական փորձը ներկայացնում մասնագետներին:


Այբ
կրթական
հիմնադրամ
acti TOUR
Корпоративные туры
Инсентив туры


TOUR

*«Այբ»-ի կազմակերպած վարպետության դասերը նախատեսված են տարբեր լսարանների համար՝ աշակերտներից ու ուսանողներից մինչև երիտասարդ մասնագետներ ու սկսնակ ձեռներեցներ:*

Առաջին վարպետության դասերն «Այբ»-ը կազմակերպեց 2009 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին՝ քիմիայի ուսուցիչների և նվիրյալների համար: Դասերը կազմակերպվեցին ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Երևանյան դասերն անցկացվում էին «Այբ-Լաբ»-երում: Դասերը վարում էին դասավանդման երկարամյա փորձ ունեցող մասնագետներ: Վարպետության դասերի այս շարքը նպատակ ուներ բարձրացնելու ուսուցիչների վարպետությունը՝ շնորհալի երեխաների հետ պարապելու և օլիմպիական ու ոչ ստանդարտ խնդիրների լուծման նոր հմտություններ նրանց փոխանցելու համար: 2011 թվականին «Այբ» դպրոցի բացումից հետո դպրոցը դարձավ ուսուցիչների վերապատրաստման լաբորատորիա, որտեղ քաղաքային ու գյուղական համայնքների ուսուցիչները հանդիպում են դասալսումների, փորձի փոխանակման, համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:




նոր մշակույթ
AMERICAN UNIVERSITY OF ARMENIA






«Այբ» հիմնադրամի տարբեր ծրագրերի ձևաչափերում հայաստանցի և արտասահմանցի հայտնի մասնագետներ հետաքրքիր ու արդիական թեմաներով տասնյակ վարպետության դասեր են անցկացրել հայ լսարանի համար: Դրանց մի մասն էլ իրականացվել է «Երևան» ամսագրի և «Ակտիտուր» ընկերության հետ համագործակցությամբ՝ «Հաջողության բանաձև» կոչվող նախագծի շրջանակներում: Բանախոսների շարքից արժե առանձնացնել հետևյալ անձանց՝

- ABBYY ընկերության հիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ **Դավիթ Յան**,
- ABBYY ընկերության փոխնախագահ **Արամ Փախչանյան**,
- «Ռոսգոսստրախ» ընկերության փոխնախագահ, բիզնեսի ռազմավարական զարգացման վարչության ղեկավար **Ռաֆայել Մինասբեկյան**,
- «Sberbank CIB» (նախկին «Тройка Диалог») ընկերության կառավարիչ, նախագահի աշխատակազմի ղեկավար **Գոռ Նահապետյան**,
- «Henderson» ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն **Ռուբեն Հարությունյան**,
- հայտնի ձեռնարկատեր և վենչուրային ներդրող **Սերգեյ Բելոուսով**,
- հայտնի ֆինանսիստ և Ուոլ Ստրիթում ղեկավար պաշտոններ զբաղեցրած **Արթուր Բերդ**:

*«Այբ»-ի կազմակերպած վարպետության դասերը նպատակ ունեն հաջողության տարբեր պատմությունների միջոցով երիտասարդներին հավատ ներշնչելու սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օգնելու խորհուրդներով ու չհորինված պատմությունների օրինակներով:*

«Այբ»-ի օգնությամբ Հայաստան են գալիս մարդիկ, որոնց գլխավոր հարստությունը անձնական փորձն ու անցած ճանապարհն է, և այն հասանելի է դառնում հայ հանրությանը:

«Այբ» դպրոցում բացման օրվանից մինչև օրս անցկացվում են հատուկ դպրոցականների համար մշակված «Անկեղծության պահեր» կոչվող վարպետության դասերը, երբ երեխաներին հյուր են գալիս կրթության շնորհիվ կյանքում հաջողության հասած և դրական ու ոգևորիչ օրինակ ծառայող մարդիկ, ովքեր անկաշկանդ ու անմիջական շփման միջոցով պատմում են, թե ինչպես են իրենք անցել իրենց հաջողության ուղին, ինչպես մտածել, ինչպես որոշումներ կայացրել, ինչով ոգեշնչվել և ինչն արժևորել: «Անկեղծության պահերի» ամենամեծ դերը դաստիարակչականն է, իսկ հիմնական նպատակը՝ կրթության քարոզը և երեխաներին կրթությամբ կյանքի ուղին հարթելու և բարձունքների հասնելու ճանապարհի ցույց տալը:






14
**ԲԱՆԱԽՈՍ,**

1400
**ՄԱՍՆԱԿԻՑ**

*«Այբ»-ի կազմակերպած վարպետության դասերին*

20
**ՀՅՈՒՐ,**

450
**ԱՇԱԿԵՐՏ**

*«Այբ» դպրոցի «Անկեղծության պահեր» նախագծի շրջանակներում*

100+
**ՈՒՍՈՒՑԻՉ**

*Երևանից և մարզերից «Այբ»-ի կազմակերպած առաջին վարպետության դասերին*

# ԱՄԱՌԱՅԻՆ ՄԵԴԻԱԴՊՐՈՑ

«Այբ» կրթական հիմնադրամը «Եվրասիա» հիմնադրամի դրամաշնորհային աջակցությամբ իրականացրեց «Ամառային մեդիադպրոց» ծրագիրը, որի նպատակն էր Երևանի և ՀՀ մարզերի բարձր դասարանների աշակերտներին փոխանցել գիտելիքներ և հմտություններ՝ լրատվական միջոցներում տարբեր ժանրերի և ձևաչափերի հրապարակումներով հանդես գալու համար: Դասընթացները և՛ տեսական էին, և՛ գործնական:

Ծրագրի արդյունքում աշակերտները սովորեցին քննադատորեն մոտենալ ԶԼՄ-ների մատուցած նյութերին, տարբերել ցածրակարգ ու բարձրակարգ լրատվամիջոցներն ու հաղորդումները, «դավեր» փնտրել յուրաքանչյուր հրատարակության մեջ, վերլուծել նյութը տվյալ ԶԼՄ-ի մյուս թողարկումների համատեքստում, փնտրել թեմայի շուրջ այլ նյութեր և համեմատության արդյունքում օբյեկտիվ պատկեր ստանալ:

*«Ամառային մեդիադպրոց» ծրագրի շնորհիվ երիտասարդները փորձեցին իրենց մեդիաարտադրանքի ստեղծողների դերում, հասկացան յուրաքանչյուր մեդիատեսակի առավելություններն ու թերությունները և ստեղծեցին սեփական տեսադասեր ու մեդիաարտադրանք:*



62
**ԱՇԱԿԵՐՏ**

*Հայաստանի տարբեր մարզերից մասնակցեց ամառային մեդիադպրոցին՝ անվճար հիմունքներով*

26
**ՏԵՍԱՆՅՈՒԹ**

*նկարահանվեց և մոնտաժվեց ծրագրի շրջանակում*

14
**ՏԵՍԱԴԱՍ**

*նկարահանվեց Հայաստանի տարբեր դպրոցներում*

4
**ՄԱՍՆԱԿԻՑ**

*որոշեց դառնալ ռեժիսոր*

# ԾԱՂԿՈՒՆՔԻ ԲԱՑ ԴՊՐՈՑ

2010-2015 թվականներին «Այբ» կրթական հիմնադրամը ներգրավված էր Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի դպրոցի կրթական ծրագրերի բարեփոխման և զարգացման գործընթացներում, որոնք իրականացվում էին «Դար» կրթամշակութային հիմնադրամի կողմից՝ Ծաղկունքի համայնքի զարգացմանն ուղղված լայնածավալ ծրագրերի շրջանակներում:

*Այս ծրագրի շնորհիվ «Այբ» հիմնադրամը հնարավորություն ստացավ տարածելու իր կրթական տեխնոլոգիաները նաև գյուղական դպրոցում և իրականացրեց ընդհանուր կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:*

«Այբ» հիմնադրամի դերը Ծաղկունքի դպրոցի զարգացման գործում, մասնավորապես, ուղղված էր կրթական ծրագրերի վերանայմանը և զարգացմանը, ուսուցիչների վերապատրաստմանը, ուսուցիչների և աշակերտների գնահատման ու շահադրդման համակարգերի մշակմանը: Ծաղկունքի դպրոցը ներգրավված էր «Այբ» համակարգի բոլոր ծրագրերում, միջոցառումներում, ուսուցչական համաժողովներում, փոխանակման ծրագրերում, սոցիալական և մշա-

կութային նախագծերում: Դպրոցում ստեղծված ծրագրային թիմերը դպրոցի տնօրենի հետ իրականացնում էին կրթական բովանդակության և համայնքի զարգացմանն ուղղված բազմաբնույթ ծրագրեր:

Ծաղկունքի դպրոցում փորձ արվեց ստեղծելու գյուղական դպրոցի մոդել, որն ապագայում իր տարածումը կարող է գտնել նաև հանրապետության այլ գյուղական համայնքներում: Գյուղական դպրոցի մոդելի գաղափարի մեջ կարևորվում է, անշուշտ, ընդհանուր կրթական ծրագրերում գյուղատնտեսական բաղադրիչի զարգացումը՝ ըստ տվյալ համայնքի ագրարային պահանջների (մեղվապահություն, բուսաբուծություն, անասնապահություն և այլն): Օրինակելի գյուղական դպրոցը ենթադրում է, սակայն, ոչ միայն ագրոկրթության բաղադրիչի ներդրում կրթական ծրագրում, այլև միևնույն ժամանակ ընդհանուր կրթական ծրագրերի բարձր որակի ապահովում:



# «MIT OPENCOURSEWARE» ՀԱՅԵԼԱՅԻՆ ԿԱՅՔ

2007 թվականին, երբ համացանցը Հայաստանում հասու էր քչերին, իսկ կապի որակը շատ ցածր էր, «Այբ» կրթական հիմնադրամն աշխարհի ամենահեղինակավոր բուհերից մեկի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (ՄՏԻ) բոլոր ուսումնական նյութերը հասանելի դարձրեց տեղական բուհերի համար՝ առանց համացանց մտնելու անհրաժեշտության: Ստեղծվեց ՄՏԻ-ի «OpenCourseWare» հայելային կայք: «OpenCourseWare»-ը ՄՏԻ-ի ծրագրերից է, որի շնորհիվ ինստիտուտի ուսումնական բոլոր նյութերը հասանելի են դառնում բոլորի համար առցանց տարբերակով, անվճար, աշխարհի ցանկացած վայրից: ՄՏԻ-ի «OpenCourseWare»-ը համարվում է համացանցային ամենամեծ հրատարակչություններից մեկը:

«Այբ» հիմնադրամը ՄՏԻ-ի OCW հայելային կայքի սպասարկիչը տեղադրեց Երևանի պետական համալսարանում և միացրեց բուհի ներքին ցանցին (մոտ 2500 համակարգիչ): Իսկ ավելի ուշ ցանցին միացավ նաև «Հայաստանի գիտահետազոտական և կրթական կոմպյուտերային ցանցերի ասոցիացիա» (ԱՐԵՆԱ) հիմնադրամը, որը միավորում էր հայաստանյան 32 բուհ: Այսպիսով՝ OCW հայելային կայքի նյութերը՝ ներառյալ դասախոսությունների տեսագ-




րությունները ու ձայնագրությունները, հրապարակումներ, հոդվածներ և այլն, հասանելի դարձան ավագ դպրոցի աշակերտների, դիմորդների, ուսանողների, երիտասարդ գիտնականների, դասախոսների համար՝ շրջանցելով համացանցը:

Ծրագիրը կորցրեց կարևորությունը մի քանի տարի անց, երբ համացանցի որակն ու գինը թույլ տվեցին հայաստանցիներին օգտվել «OpenCourseWare»-ի կայքից արդեն առցանց տարբերակով:

*MIT OCW հայելային կայքի օգնությամբ հազարավոր ուսումնական նյութեր հասանելի դարձան հայաստանյան 33 բուհերի ուսանողադասախոսական կազմի համար՝ շրջանցելով համացանցը:*

2260
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ**
*հասանելի է «OpenCourseWare»-ում*

175
**ՄԻԼԻՈՆ ԱՅՑԵԼՈՒ**
*ամբողջ աշխարհից*

ՀՀ
33
**ԲՈՒՀԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ**
*համար հասանելի դարձան ՄՏԻ-ի ուսումնական նյութերը*

# Ուշագրավ փաստեր և թվեր

## 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

«ԱՅԲ»-Ի
2
ԴՊՐՈՑ
8504 քմ ընդհանուր մակերեսով Երևանում և Դիլիջանում

2
ՖԱԲԼԱԲ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ստեղծած արհեստանոց-լաբորատորիաներ

455
ԱՇԱԿԵՐՏ
9
ԵՐԿՐԻՑ
ուսանում է «Այբ»-ի դպրոցներում

122
ՈՒՍՈՒՑԻՉ
5
ԵՐԿՐԻՑ
դասավանդում է «Այբ»-ի դպրոցներում

8
«ԱՅԲԼԱԲ»
ժամանակակից ուսումնական լաբորատորիաներ Հայաստանի 4 մարզի 5 դպրոցում

95 000
ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ԱՐՑԱԽԻՑ
«Այբ»-ի կազմակերպած դպրոցական մրցույթներին
միայն 2015 թ.-ին

30
ՈՒՍԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻՑ
ստացել է կրթաթոշակ «Այբ» հիմնադրամից աշխարհի լավագույն համալսարաններում ուսանելու համար

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ
«Այբ»-ի մշակած նոր կրթական ծրագիր՝ միջազգայնորեն ճանաչված և Հայաստանի ու սփյուռքի դպրոցներին հասանելի

100+
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
կառաջարկի Արարատյան բակալավրիատը հոսքային դասարաններով



**7 184 133 000**
**ՀՀ ԴՐԱՄ**
կամ
**17 110 645**
**ԱՄՆ ԴՈԼԱՐ**

**«Այբ» հիմնադրամն ուղղել է կրթական ծրագրերի իրականացմանը 2007-2015 թթ.**

**22+**
**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**իրականացվել է «Այբ» հիմնադրամի կողմից Հայաստանում և Արցախում 2007-2015 թթ.**

**216**
**ԲԱՐԵՐԱՐ**

**10**
**ԵՐԿՐԻՑ**

*աջակցում է «Այբ» հիմնադրամի տարբեր ծրագրերին*

**02/2006**
Հիմնադրվեց «Այբ» ակումբը: Այսօր այն միավորում է 36 անդամների՝ աշխարհի տարբեր անկյուններից:

**12/2006**
Հիմնվեց «Այբ» կրթական հիմնադրամը:

**12/2006**
Մեկնարկեց «Այբ»-ի առաջին ծրագիրը՝ «Առարկայական խորացված դասընթացները»: Այս ծրագրի շրջանակներում փորձարկվեցին «Այբ»-ի կրթական մեթոդաբանությունները և դրվեցին «Արարատյան բակալավրիատ» կրթական նոր ծրագրի հիմքերը:

**05/2007**
«Այբ»-ը Երևանի ֆիզմաթ դպրոցում հիմնեց առաջին առարկայական լաբորատորիան՝ ֆիզիկայի «ԱյբԼաբ»-ը: Այսօր Հայաստանում գործում է 16 «ԱյբԼաբ»:

**10/2007**
«Այբ»-ը Հայաստանի 33 բուհի համար հասանելի դարձրեց Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի «OpenCourse-Ware» ծրագրի հավաքրավոր ուսումնական նյութեր:

**05/2008**
«Այբ»-ը Հայաստանում անցկացրեց «Կենգուրու» մրցույթը: Այս իրադարձությամբ սկիզբ դրվեց «Այբ»-ի գործունեության կարևոր ուղղության՝ միջազգային դպրոցական մրցույթների ներկայացմանը Հայաստանում և Արցախում և ապա նաև տեղական նմանատիպ պանգվածային մրցույթների ստեղծմանը:

**06/2008**
«Այբ»-ը ՀՀ նախագահին և վարչապետին ներկայացրեց «Այբ կրթական հանգույց» ծրագիրը:

**08/2009**
«Այբ»-ը 16 հայ ուսանողի շնորհեց կրթաթոշակներ: Այսօր 30 ուսանող ՀՀ-ից և սփյուռքից ուսանում կամ ուսանել է աշխարհի լավագույն բուհերում՝ շնորհիվ «Այբ»-ի կրթության մեկենասության համակարգի:

**08/2009**
Մեկնարկեց «Այբ»-ի կայմակերպած վարպետության դասերի շարքը ուսուցիչների համար: Այս ծրագիրը հետագայում զարգացում գտավ այլ ձևաչափերով վարպետության դասերի տեսքով՝ պանպան լսարանների համար:

**01/2010**
ՀՀ կառավարությունը տարվա իր առաջին նիստին որոշում կայացրեց Երևանում Թբիլիսյան խճուղուն հարող 6,5 հա հողատարածքը հատկացնել «Այբ կրթական հանգույց» ծրագրի իրականացման համար:

**07/2010**
Հարվարդի համալսարանի ճարտարապետական ֆակուլտետը «Այբ կրթական հանգույց» ծրագրի համար մշակեց և «Այբ»-ին հանձնեց «Արձագանքող կրթական միջավայրեր» աշխատությունը:

**08/2010**
«Այբ»-ը ձեռք բերեց ավագ դպրոցի համար աշխարհի լավագույն դասագրքերի (բնագիտական առարկաներ և մաթեմատիկա) հայերեն թարգմանության և տպագրության հեղինակային իրավունքները:

**10/2010**
Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը՝ նախատեսված քիմիայի սիրահար աշակերտների համար: Այն դարձավ «Այբ»-ի ստեղծած առաջին հայաստանյան մրցույթը դպրոցականների համար:

**11/2010**
Հայաստանում առաջին անգամ պաշտոնապես անցկացվեց «Ռուսական արջուկ» մրցույթը: «Կենգուրուից» հետո սա երկրորդ միջազգային դպրոցական մրցույթն էր, որ «Այբ»-ը բերեց Հայաստան և Արցախ:

**11/2010**
Մեկնարկեց «Այբ» ավագ դպրոցի շինարարությունը:

# Կարևոր իրադարձություններ

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**10/2011**
Բացվեց «Այբ» ավագ դպրոցը:

**10/2012**
Բացվեց «Այբ» ավագ դպրոցի երկրորդ մասնաշենքը:

**07/2013**
Կնքվեց համագործակցության պայմանագիր ՀՀ Կենտրոնական բանկի և «Այբ» կրթական հիմնադրամի միջև՝ Դիլիջան քաղաքում «Այբ»-ի դպրոց բացելու մասին:

**09/2013**
Բացվեց «Այբ» տարրական դպրոցը:

**09/2013**
Սկսվեց Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաջին ուսումնական տարին՝ ժամանակավոր տարածքում: Մեկնարկեց դպրոցի հիմնական շենքի շինարարությունը:

**01/2014**
«Այբ» կրթական հիմնադրամը, համագործակցելով Քեմբրիջի համալսարանի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ, սկսեց լայնածավալ, պետական մակարդակի կրթական նախաձեռնություն՝ Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱԾ):

**09/2014**
Բացվեց «Այբ» միջին դպրոցը:

**11/2014**
Առաջին անգամ Հայաստանում և Արցախում անցկացվեց «Մեղու» հայերենի մրցույթը: Այն դարձավ մայրենի լեզվի առաջին կանգվածային մրցույթը Հայաստանում:

**09/2015**
Բացվեց Դիլիջանի կենտրոնական դպրոցի նոր շենքը:

**10/2015**
Երևանի և Դիլիջանի «Այբ» դպրոցներին կից բացվեց երկու ֆաբլաբ (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի նախագծած արհեստանոց-լաբորատորիա):

**12/2015**
Արարատյան բակալավրիատը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով պաշտոնապես ճանաչվեց որպես այլընտրանքային դպրոցական ծրագիր Հայաստանի Հանրապետությունում:

2012 2013 2014 2015 2016 2017



# «Այբ» դպրոց

2011-2015 թթ.

ԻՆՉՈՒ

# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը սովորելու մի նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման: «Այբ» դպրոցի առաքելությունն է՝ ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ, երիտասարդների, որոնց սրտում վառվում է բարձրագույնին հասնելու կրակը, և ովքեր պատրաստ են ընդմիշտ սովորելու՝ իրագործելու համար սեփական ներուժը և ստանձնելու իրենց, իրենց երկրի ու աշխարհի ապագայի համար պատասխանատվություն:




դպրոց




«Այբ» դպրոցը ծառայում է որպես յուրօրինակ լաբորատորիա՝ դասավանդման ու ուսումնառության լավագույն տեխնոլոգիաների, մեթոդաբանության ու փորձառության մշակման և կրթական համակարգերի ստեղծման համար: «Այբ»-ի փորձառությունը, շնորհիվ Կրթության գերազանցության ազգային ծրագրի, այսօր արդեն տարածվում է ամբողջ կրթական համակարգի վրա՝ մտնելով հանրակրթական այլ հաստատություններ ՀՀ-ում և Արցախում և միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան հայալեզու կրթությունը հասանելի դարձնելով ամեն հայ աշակերտի համար:

«Այբ» դպրոցը բացվել է 2011 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված տասնյակ բարերարների ֆինանսական աջակցությամբ: «Այբ» դպրոցը («Այբ կրթական հանգույց» հիմնադրամը) հոգաբարձուների խորհրդի կողմից ղեկավարվող հիմնադրամ է և հասարակական կառույց: «Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների 70%-ն ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում) «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

## ԻՆՉՊԵՍ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը եռաստիճան է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) դպրոցներ: Դպրոցում սովորում է ընդհանուր 334 աշակերտ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ: Նախատեսվում է, որ մի քանի տարի անց «Այբ» դպրոցն իր տանիքի տակ կընդունի շուրջ 800 աշակերտ:

«Այբ» դպրոցի փիլիսոփայությունն ամփոփված է դպրոցի նշանաբանի մեջ՝ **«Իմա և արա»**, գրաբարից թարգմանաբար՝ «ճանաչիր և արարիր»: Ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Դարերի խորքից եկող այս իմաստությունն առավել ևս կարևոր է 21-րդ դարում, երբ կրթությունը պետք է կազմակերպել գիտելիքի աննախա-



դեպ ծավալի և ստեղծարար ակտիվության պայմաններում: Այս երկու սկզբունքները խորապես փոխկապակցված են, այսինքն՝ չկա ճանաչողություն առանց իրագործման, ոչ էլ արարում՝ առանց իմացական ձեռքբերման: Ուրեմն՝ մենք ճանաչում և գործում ենք միաժամանակ կամ ճանաչելով ստեղծում և ստեղծելով ճանաչում:

«Այբ» դպրոցում ուսումնական ծրագիրն Արարատյան բակալավրիատն է:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Արարատյան բակալավրիատի (ԱԲ) փիլիսոփայությունը խարսխված է ութ սկզբունքների վրա, որոնք արտահայտում են ԱԲ-ի դպրոցների ինքնությունը և ապահովում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը, մարդկային փոխհարաբերությունների ներդաշնակությունը, սովորելու միջավայրի ներքին շունչը և համայնքաշինական արժեքների սերմանումը:

## 1 ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ն ամբողջական կրթության ծրագիր է: Համադրելով համաշխարհային կրթության առաջատար ձեռքբերումները և հայ դպրության լավագույն ավանդները, առաջնորդվելով լավագույնը վերցնելու սկզբունքով՝ մենք հնարավորություն ենք ընձեռում աշակերտներին՝ լիարժեքորեն իրագործելու սեփական ներուժը և մրցունակ լինելու համաշխարհային կրթական դաշտում: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ անհատների, ովքեր ջանում են հասնել սեփական մտածողության, ապրումների և գործերի ներդաշնակության, ովքեր հետամուտ են ամբողջական լուծումների և տեսնում են սեփական ճիգերի, ձեռքբերումների, բացահայտումների իմաստն ընդհանուր պատկերի մեջ: Մենք կարևորում ենք, որ վաղ հասակից երեխան ոչ միայն ճանաչի և մտածի, այլև զգա գեղեցիկը և առողջ ապրի:





## 2 ԽՈՐԱՑՈՒՄ

ԱԲ-ն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն՝ առանց կրթության համակողմանիության սկզբունքը խախտելու: Մենք ձգտում ենք առավել լայն բացելու մարդու ներուժը, օգնելու նրան դրսևորվելու, հասնելու օբյեկտիվ ինքնագնահատման և հաջողություններ արձանագրելու իր նախընտրած առարկաների մեջ: ԱԲ-ն առաջարկում է հիմնական առարկաների խորացված մակարդակներ, բազմաթիվ ընտրովի դասընթացներ և խմբակներ, որոնք օգնում են աշակերտներին՝ բացահայտելու և զարգացնելու սեփական նախասիրությունները: ԱԲ-ը՝ որպես ծրագրահեն ուսուցման հարթակ, համագործակցելով բազմաթիվ գիտական և մշակութային հաստատությունների հետ, աշակերտներին ընդգրկում է տարբեր ուսումնասիրական ծրագրերում՝ հնարավորություն տալով կատարելու սեփական հետազոտությունները և կողմնորոշվելու ապագա մասնագիտության ընտրության հարցում:

## 3 ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: Արարման ուրախությունը մարդուն դարձնում է ընդմիշտ սովորող: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայրեր, ուր սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում: Միավորելով գիտությունը, արվեստը և կրթությունը, դասավանդման պրոցեսում և այլ կրթական ծրագրերում ներգրավելով գիտնականների և արվեստագետների՝ մենք կրթական միջավայրը լցնում ենք ստեղծագործ էներգիայով, նորարարական մոտեցումներով և ոչ ստանդարտ լուծումներով:

## 4 ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

Բոլոր ժամանակներում աշխատանքը համարվել է մեծ արվեստ, իսկ կրթության գլխավոր նպատակներից մեկը եղել է աշխատասեր և ժամանակը գնահատող անհատի ձևավորումը: Աշխատասիրությունն ու եռանդը մարդուն դարձնում են վստահ և նախաձեռնող, իսկ կազմակերպվածությունն ու ժամանակի կառավարումը հնարավորություն են ընձեռում սեփական ուժերն ու ջանքերը արդյունավետ օգտագործելու: Ժամանակակից աշխարհին իր նոր հնարավորություններով և գիտելիքի ծավալի աննախադեպ կուտակումներով պահանջում է աշխատանքի նոր մշակույթ և սեփական ճիգերի գործածման առավել մեծ արդյունավետություն: ԱԲ-ի կրթական միջավայրն իր կրթական ռեսուրսներով, խորհրդատվական համակարգով, տեխնոլոգիական լուծումներով նպաստում և տրամադրում է աշխատանքի, ակտիվության և արդյունավետության:

## 5 ԱՐԺԵՔՆԵՐ

ԱԲ-ն արժեքներ գնահատող և սերմանող ծրագիր է: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև բարոյապես մաքուր, սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: Սեփական արժեքների գիտակցումը և բարոյական սկզբունքների ձևավորումը միակ գրավականն է մարդու իրագործման և անհատ-հասարակություն արդյունավետ փոխհարաբերության: Որպես հայկական կրթության մոդել՝ ԱԲ-ը փորձում է մեր օրերում վերակենսագործել Ե դարում սկզբնավորված սրբոց Թարգմանչաց գործը և երբեք չի առանձնացնում ազգային-հոգևոր արժեքները համամարդկային համատեքստից: Սրբոց Թարգմանչաց շարժման մեծագույն ավանդներից է համամարդկայինին հաղորդ լինելը, համամարդկայինը քոնը դարձնելը և քեզ մեծ պատկերի մեջ տեսնելը:





## 6 ՀԱՄԱՅՆՔ

ԱԲ-ը համայնքաշինական առաքելություն է: ԱԲ-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա շուրջ համախմբված մարդիկ են: ԱԲ-ը միավորում է կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց, ովքեր պատրաստ են պատասխանատվություն ստանձնելու՝ նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն տալու համար: Նրանց ներկայությունը դպրոցներում անգնահատելի կերպարային ազդեցություն է թողնում աշակերտների վրա և տալիս կրթությամբ կայանալու և բարձունքների հասնելու վստահություն: ԱԲ ծրագրին մասնակից մարդկանց այս բացառիկ ցանցն այսօր գործում է նաև որպես մենտորական հզոր համակարգ, ուր ամեն մեկը, օգտագործելով իր գիտելիքը, փորձն ու կապերը, նպաստում է նոր տաղանդի բացահայտմանն ու զարգացմանը՝ այն համոզմամբ, որ կյանքում կայանալուց հետո նա էլ ձեռք կմեկնի իրենից հետո եկողներին:

## 7 ՄԻՋԱՎԱՅՐ

Կրթական միջավայրի նախագծումը նրբագույն խնդիր է: «Նոր գինին նոր տիկի մեջ» ավետարանական սկզբունքն արտահայտված է մեր նախագծային մոտեցումներում: Մեր ճարտարապետական նախագծերն իրենց գեղագիտական լուծումներով և խելամիտ տեխնոլոգիաներով ըստ էության ներկայացնում են մեր կրթական փիլիսոփայության տարածական և ժամանակային սիմվոլիզմը: Մենք ձգտում ենք ստեղծելու այնպիսի գաղափարական միջավայրեր, որոնք համակում են ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու և արարելու:



## 8 ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԱԲ-ի դպրոցն արժևորման, հարգանքի և շնորհակալության միջավայր է: Յուրաքանչյուր սովորող պատասխանատու է իրեն տրված հնարավորությունների և վստահության համար: Նրա շնորհակալ վերաբերմունքը հիմքն է սերունդների միջև առողջ երկխոսության, ընդհանուր շահի գիտակցման և անհատ-հասարակություն ներդաշնակ փոխհարաբերության: ԱԲ-ը ձգտում է ձևավորելու պատասխանատու քաղաքացիներ, որոնք կարող են սեփական փորձով արձագանքել վստահությանը և հարստացնել ստացածը, օգտակար լինել միմյանց, հասարակությանը և աշխարհին: ԱԲ-ն աճեցնում է սովորողների պատասխանատվությունն ազատության, փոխադարձ հարգանքի, ժամանակին որոշումներ կայացնելու սկզբունքների հիման վրա:



# «ԱՅԲ» ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | Տարրական դպրոց | Միջին դպրոց | Ավագ դպրոց* |
|---|---|---|---|
| **Հայագիտական առարկաներ** | Մայրենի խոսքի մշակույթ | Հայոց լեզու<br>Գրականություն<br>Մայրենի | Հայոց լեզու<br>Գրականություն |
| **Օտար լեզուներ** | Անգլերեն<br>Ռուսերեն | Անգլերեն<br>Ռուսերեն<br>Ֆրանսերեն<br>Իսպաներեն<br>Գերմաներեն | Անգլերեն<br>Ռուսերեն<br>Ֆրանսերեն<br>Իսպաներեն<br>Գերմաներեն |
| **Ճշգրիտ գիտություններ** | Մաթեմատիկա<br>Համակարգչային գիտություն | Հանրահաշիվ<br>Երկրաչափություն<br>Մաթեմատիկա (5-րդ և 6-րդ դասարաններ)<br>ՏՀՏ<br>Ինֆորմատիկա | Հանրահաշիվ<br>Երկրաչափություն<br>ՏՀՏ |
| **Բնագիտական առարկաներ** | Գիտություն | Կենսաբանություն<br>Քիմիա<br>Ֆիզիկա<br>Աշխարհագրություն<br>Բնագիտություն | Կենսաբանություն<br>Քիմիա<br>Ֆիզիկա<br>Աշխարհագրություն |
| **Հասարակագիտական առարկաներ** | | Հայոց պատմություն<br>Համաշխարհային պատմություն | Հայոց պատմություն<br>Համաշխարհային պատմություն<br>Գործարարություն<br>Հասարակագիտություն<br>Մտածելու հմտություններ |

* «Այբ» ավագ դպրոցում մի շարք առարկաներ դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով:

| | | | |
|---|---|---|---|
| **Արվեստներ** | Կերպարվեստ<br>Երաժշտություն<br>Պարարվեստ | Պար<br>Երաժշտություն<br>Գծագրություն<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Բեմարվեստ<br>Երգչախումբ | Պար<br>Ռազմապար<br>Գծագրություն<br>Գրաֆիկական դիզայն<br>Նկարչություն<br>Նվագախումբ<br>Բեմարվեստ<br>Տղաների երգչախումբ<br>Աղջիկների երգչախումբ |
| **Ֆիզիկական պատրաստություն** | Մարմնակրթություն | Մարմնակրթություն | Մարմնակրթություն<br>Բասկետբոլ (խմբակ)<br>Լող (խմբակ) |
| **Այլ (խմբակներ)**<br>**Ծրագրահեն ուսուցում** | Շախմատ<br>Ռուսերենի խմբակ<br>Անգլերենի խմբակ<br>Ֆրանսերենի խմբակ<br>Խոսակցական ֆրանսերենի խմբակ<br>Զարգացնող խաղեր<br>Պարի խմբակ<br>Թատրոնի անգլերեն խմբակ<br>Ռոբոտիկայի խմբակ<br>«Հմուտ ձեռքեր» խմբակ<br>Սեղանի խաղերի խմբակ<br>Սպորտային խաղերի խմբակ<br>Լող<br>Դասապատրաստում | ՆԶՊ և առաջին բուժօգնություն<br>Շախմատ<br>Խոսակցական ֆրանսերենի խմբակ<br>Մեդիա ակումբ<br>Ռոբոտիկայի խմբակ<br>Գիտության խմբակ<br>Մյուզիքլ/Բեմի ձևավորում/ Թատերախումբ/ Պարարվեստ/ Երգչախումբ<br>Սպորտային խաղերի խմբակ<br>Լող<br>Բասկետբոլ<br>Դասապատրաստում | ՆԶՊ և առաջին բուժօգնություն<br>Ռոքեստր (նվագախումբ)<br>Մեդիալաբ (լրագրողություն)<br>Տեխնոշարժ (ծրագրավորում)<br>Կանաչ քիմիա (քիմիա)<br>F8 (լուսանկարչություն)<br>Գիտություն՝ փորձերով (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)<br>Արվեստանոց (կերպարվեստ)<br>Ֆաբլաբ (ռոբոտաշինություն) |

ՈՎՔԵՐ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

«Այբ» դպրոցի ղեկավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է։ «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհուրդն ունի տասնմեկ անդամ, և խորհրդի կազմը հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից։ Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է։ ՀԽ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ հասարակական ու մասնագիտական ոլորտների հայտնի ներկայացուցիչներ։

«Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներն են՝




«Այբ» դպրոցն ունի շուրջ 200 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է «Այբ»-ի այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

* Հոգաբարձուների խորհուրդն այս կազմով գործելու է մինչև 2017 թ. օգոստոսը:

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ

«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխվելու գաղափարն այսօր համախմբել է մարդկանց, ովքեր կյանքում կայացել են կրթության շնորհիվ և իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են հայկական կրթության զարգացման գործում: Այն, ինչ երեկ երազանք էր թվում, այսօր իրականություն է շնորհիվ այս մարդկանց ստեղծարար հավատի ու համագործակցության: «Այբ» դպրոցը, որը երկրի կրթական նորագույն զարգացումների ուղենիշ է, կյանքի է կոչվել բազմաթիվ գաղափարակիցների, բարերարների ու աջակիցների վստահության ու պտղաբեր ջանքերի շնորհիվ:







*Այսօր «Այբ»-ի դպրոցաշինության ծրագրին մասնակից մարդկանց այս ցանցը գործում է որպես մենտորական հզոր համակարգ, ուր ամեն մեկը, օգտագործելով իր գիտելիքը, փորձն ու կապերը, նպաստում է նոր տաղանդների բացահայտմանն ու զարգացմանը՝ այն համոզմամբ, որ վաղը կայանալուց հետո նրանք էլ ձեռք կմեկնեն իրենցից հետո եկողներին:*

Այս վառ անհատականություններից յուրաքանչյուրի ներդրումը «Այբ»-ի դպրոցաշինության ծրագրում անգին է:

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

«Այբ»-ի հաջողության գրավական են մեր ուսուցիչները: Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայրն առանց բարձրակարգ մասնագետների: Մենք ուրախ ենք, որ 21-րդ դարի հայկական կրթական միջավայր կերտելու

մեր կոչին միացել են բազմաթիվ հայտնի մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից:

«Այբ» դպրոցի ուսուցչական կազմը համալրելիս մենք մեր առջև խնդիր ենք դրել դպրոց բերել մարդկանց, ովքեր դպրոցին պետք են, սակայն գուցե չեն դիտարկում դպրոցը որպես գործատու, ովքեր հասարակական կարևոր ոլորտների ու հաստատությունների լավագույն մասնագետներ են և կարող են ոչ միայն իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել աշակերտին, այլև օրինակ դառնալ նրա համար, վառել նրա մեջ ուսման հանդեպ կրակը, սովորեցնել նրան սիրել առարկան: Կրթական հանգույցի ստեղծագործական ծրագրերի մեջ ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, արվեստագետներ, գործարարներ՝ ապահովելով դպրոցի կապը կյանքի և տեխնոլոգիաների նորագույն զարգացումների հետ:

«Այբ» դպրոցն այսօր ունի ուսուցչական ուժի գերհագեցում: Մեր ուսուցիչների կազմն ավելի մեծ է, քան պետք է այսօր դպրոցին: Եվ դա արված է մտածված. «Այբ» դպրոցն այսօր գործում է որպես ուսուցչական ու դասավանդման լավագույն տեխնոլոգիաների ու մեթոդաբանությունների ստեղծման ու փորձարկման լաբորատորիա, որտեղից, շնորհիվ «Այբ» հիմնադրամի ու ՀՀ կառավարության համատեղ իրականացվող տասնամյա համազգային ծրագրի, այդ փորձը տարածվելու է դեպի Հայաստանի ու Արցախի այլ դպրոցներ:

> *Այսօր «Այբ» դպրոցը գործում է որպես ուսուցիչների վերապատրաստման կենտրոն և դասավանդման լավագույն փորձի ստեղծման լաբորատորիա:*


42%
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ
2%
ՀԱՄԱՏԵՂՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ
56%
ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ
(ՆԵՐԱՌՅԱԼ ԼԱԲՈՐԱՆՏՆԵՐ, ՀՈԳԵԲԱՆՆԵՐ, ԼՈԳՈՊԵԴ, ԲԺՇԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ՃԱՇԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ)


Հայաստան
ԱՄՆ
Ռուսաստան
Լիբանան
Իրան
Սիրիա

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

«Այբ»-ի աշակերտին բնութագրում են Արարատյան բակալավրիատի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները, որոնք հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք: Այսպիսով՝ խոհականությունը մենք տրոհել ենք **ճանաչողության և ստեղծարարության**, արիությունը՝ **նախաձեռնողականության և հավասարակշռության**, իսկ ողջախոհությունը՝ **զգոնության և բացության**: Արդարությունը՝ որպես այս երեքի ամբողջացում, մարդկային կյանքի ներդաշնակությունն է կամ բարիքի իրագործման համընդհանուր սկզբունքը: Մարդը կարող է հասնել ներդաշնակության, եթե մտքերը, ապրումները և գործերը ուղղված են դեպի բարիքը: Բարիքը ճանաչելը և սեփական գործերով իրականացնելը հիմքն է անձնական երջանկության և մարդկանց միջև արդար փոխհարաբերությունների: Այլ կերպ ասած՝ մարդկային կյանքի արդարությունն իրագործվում է **բարեխոհությամբ և հոգատարությամբ**:

«Այբ» դպրոցի կրթական ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են հետևյալ հատկանիշները:



## 1 ՃԱՆԱՉՈՂ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ

Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Ճանաչողությունն ամրապնդվում է փորձառությամբ և պտղաբերում ստեղծագործումով: Իսկ յուրաքանչյուր գործ իմաստավորվում և ամբողջանում է այդ գործից ծնված փորձառական գիտելիքով: Գիտելիքն աղերսելով սեփական փորձին և կյանքին՝ մարդն իր կյանքը դարձնում է սովորելու ճամփորդություն և դառնում ընդմիշտ սովորող: Ուստի ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

## 2 ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ

Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողն անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի առնում ծրագրի բոլոր գործոնները և կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, մարդկանց ծառայում և առաջնորդում:



## 3 ՋԳՈՆ ԵՎ ԲԱՑ

Ջգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Ջգոնը նաև նա է, ով բարոյապես զգաստ է և պարկեշտ: Սեփական ապրումների հսկումը և բարոյական պատասխանատվության ստանձնումը արդյունավետ են, երբ մարդը բաց է, ազատ և հաղորդակից: Բաց մարդը զերծ է ներքին կապանքներից և սևեռումներից, հաղորդակից է մարդկանց և ունի իրականության զգացողություն: ԱԲ-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է` ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:



## 4 ԲԱՐԵԽՈՀ ԵՎ ՀՈԳԱՏԱՐ

ԱԲ-ի աշակերտը ոչ թե պետք է ձգտի պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերի մեջ՝ ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար: Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է և անտարբեր չի անցնում իրողությունների կողքով: Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և արարող» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:



Աշակերտներն ընդունվում են «Այբ» դպրոց՝ մի քանի փուլից (անհատական հանդիպումներ, թեստեր, հարցազրույց) բաղկացած ընդունելության գործընթացով անցնելուց հետո: Ընդունելության ընթացքում դպրոցը հավասարապես կարևորում է ապագա աշակերտի ինչպես գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այնպես էլ դաստիարակությունը, արժեհամակարգը և աշխարհընկալումը: Տարրական և միջին դպրոցների ընդունելության ժամանակ կարևորագույն խնդիրներից մեկն է նաև դիմորդի ընտանիքի հետ ծանոթությունը. մեզ համար կարևոր է վստահ լինել, որ դպրոցը և դիմորդի ընտանիքը կիսում են երեխայի դաստիարակության վերաբերյալ մոտեցումներն ու գաղափարները, և որ երեխայի հետ աշխատանքը թե՛ տանը և թե՛ դպրոցում կտարվի նույն ուղղությամբ:



«Այբ» դպրոցի աշակերտների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի




Աշակերտների բաշխվածությունն ըստ սեռի





## Աշակերտների բաշխվածությունն ըստ երկրների*

| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆ | 290 |
| ՌԴ | 17 |
| ԱՄՆ | 15 |
| ԻՐԱՆ | 4 |
| ԼԻԲԱՆԱՆ | 2 |
| ՍԻՐԻԱ | 1 |
| ՈՒԿՐԱԻՆԱ | 1 |
| ԲՈՒԼՂԱՐԻԱ | 1 |
| ԿԱՆԱԴԱ | 1 |
| ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ | 1 |
| ՖՐԱՆՍԻԱ | 1 |

* Աշակերտների բաշխվածությունը ներկայացված է ըստ քաղաքացիության երկրների:



# ԾՆՈՂՆԵՐ

Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Մենք դիտում ենք ծնողին որպես երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակցի: «Այբ» դպրոցն ակտիվորեն ներգրավում է ծնողներին երեխաների հետ աշխատանքում, մշակվել ու հաջողությամբ գործարկվում են հետաքրքիր ձևաչափեր, որոնց շնորհիվ դպրոց-ծնող համագործակցությունը տալիս է բարձր արդյունքներ: Օրինակ՝ սովորական «ծնողական ժողով» ասվածը «Այբ» դպրոցում անցկացվում է անհատական ծնող-երեխա-ուսուցիչ հանդիպման ձևաչափով. ոչ միայն քննարկվում են երեխայի հետ կապված հարցեր, այլև նախանշվում ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ամսական թեյախմությունների ձևաչափով քննարկումներն ընթացիկ և կարևոր հարցերի շուրջ պաշտոնական խորհրդակցություն են, որտեղ բարձրացված հարցերն ու դրանց հետքերով կայացված որոշումներն ու դրանց արդյունքները արձանագրվում ու տեղեկացվում են ծնողներին: Այս հարթակների ու ծնողի հետ անհատական շփումների

շնորհիվ ձևավորվել է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետ մշակույթ, որի արդյունքներն ակնառու են:

Գնահատելի է նաև, որ ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:

Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից են. նրանք նույնպես հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով: Դպրոցում խթանվում ու քարոզվում է բարեգործության ու փոխօգնության մշակույթը, և ծնողներն իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակն են երեխաների համար:

Եվ, վերջապես, մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունեցել ու շարունակում ունենալ «Այբ» դպրոցի ընդլայնման ու համալրման գործում՝ այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո դպրոց եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

## 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- «ԱրմՌոբոտիքս» մրցույթում «Այբ»-ի աշակերտները գրավեցին առաջին և երկրորդ տեղերը՝ գծին հետևող իրենց ռոբոտներով:
- Փոխօգնության և փորձի փոխանակման «Այբապատում» ծրագրի շրջանակում «Այբ»-ի աշակերտներն այցելեցին Հայաստանի սահմանամերձ գյուղեր և Արցախի քաղաքներ ու գյուղեր՝ փոխանցելու իրենց գիտելիքն ու հմտությունները տեղի երեխաներին: Նախագծին մասնակցեցին 30 այբեցի և 250 աշակերտ Արցախից և Արմավիրի մարզից:
- Առաջին իսկ տարում «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ընդհանուր թվի գրեթե 10%-ն անցավ առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլ: Այս ցուցանիշով «Այբ»-ն առաջինն էր ՀՀ բոլոր դպրոցների մեջ:
- «Այբ» դպրոցի թիմը դարձավ «Հայ ասպետ» կրթադաստիարակչական հեռուստանախագծի հաղթող:
- «Այբ» ավագ դպրոցի 20 աշակերտ որպես ուսուցիչ սկսեց աշխատել «Ջատիկ» մանկատան սաների հետ:
- «Այբ» դպրոցի 3 աշակերտ հանդես եկավ որպես խոսնակ TEDxKids@Yerevan-ում:









## 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- «Այբ» ավագ դպրոցի ռոբոտիկայի թիմը «Թրինիտի» քոլեջի (Կոնեկտիկուտ, ԱՄՆ) հրշեջ ռոբոտների միջազգային մրցույթում աշխարհի 7 երկիր ներկայացնող 130 թիմերի մեջ իր «AybStorm» ռոբոտով ճանաչվեց լավագույնը՝ տեսական լուծումների համար:
- «Այբ»-ի 3 աշակերտ մասնակցեց ՌԴ Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի կազմակերպած «Բարձր հարգ» («Высшая проба») միջազգային դպրոցական օլիմպիադային և 13.000 մասնակիցների շարքում արժանացավ 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների՝ մաթեմատիկայից և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից:
- ՀՀ նախագահի՝ ՏՏ բնագավառում ամենամյա կրթական պարգևին արժանացավ «Այբ» ավագ դպրոցի 3 աշակերտ:
- «Այբ»-ի աշակերտների ավելի քան 26%-ն անցավ առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլ՝ ապահովելով 38 տեղ և նվաճելով 27 դիպլոմ ու գովասանագիր՝ 10 առարկայից:
- «Այբ» ավագ դպրոցի 2 աշակերտ հանդես եկավ որպես խոսնակ TEDxKids@ Yerevan-ում:
- «Այբ» ավագ դպրոցի առաջին 17 շրջանավարտներից 2-ն արժանացան ոսկե մեդալի: Ամբողջ Հայաստանից այդ տարի ոսկե մեդալ ստացավ մոտ 45 աշակերտ:

## 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- «Այբ»-ի ռոբոտիկայի թիմը գրավեց առաջին պատվավոր տեղը «ԱրմՌոբոտիքս» բաց առաջնությունում:
- Գյումրու հանրապետական առարկայական օլիմպիադայի բնագիտամաթեմատիկական փուլում «Այբ»-ն ունեցավ 14 հաղթող՝ 4 առարկայից: Հումանիտար փուլում 21 այբեցի արժանացավ 1-3-րդ կարգի դիպլոմների:
- «Այբ» ավագ դպրոցի 12-րդ դասարանցի Անի Խաչատրյանը Տորոնտոյի համալսարանում կազմակերպվող կենսաբանության ամենամյա մրցույթում կիսեց 14-16-րդ հորիզոնականները 4161 մասնակիցների շարքում:
- Երևանում կայացած բնագիտամաթեմատիկական օլիմպիադայում «Այբ»-ի աշակերտները նվաճեցին 3 մրցանակային կարգ մաթեմատիկայից, ինֆորմատիկայից և կենսաբանությունից:
- ՌԴ Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի կազմակերպած «Բարձր հարգ» միջտարածաշրջանային դպրոցական օլիմպիադայում «Այբ» ավագ դպրոցի 4 աշակերտ դարձավ հաղթող և մրցանակակիր:
- Մոսկվայում կայացած ԱՊՀ անդամ և Բալթյան երկրների աշակերտների ռուսաց լեզվի օլիմպիադայում «Այբ»-ի աշակերտուհին ստացավ 2-րդ կարգի 2 դիպլոմ և հաղթող ճանաչվեց մի քանի անվանակարգում:
- Բալի կղզում կայացած կենսաբանության միջազգային օլիմպիադայում «Այբ» դպրոցի 11-րդ դասարանցի Հասմիկ Ավագյանը նվաճեց բրոնզե մեդալ: Թայվանում տեղի ունեցած ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայում «Այբ»-ի աշակերտ Սպարիկ Հայրապետյանը նույնպես նվաճեց բրոնզե մեդալ:





- «Այբ»-ի աշակերտների ստեղծած Autoschool բջջային հավելվածը երկու ամիս շարունակ գլխավորում էր Հայաստանից ամենաշատ ներբեռնվող հավելվածների ցուցակը (ավելի քան 50.000 ներբեռնում): Այսօր ներբեռնումների թիվը անցել է 100.000-ից:
- «Այբ» դպրոցի աշակերտ Էդուարդ Միհրանյանը դարձավ «Կենգուրու 2014» մրցույթի հաղթող:
- «Այբ»-ի 3 շրջանավարտ արժանացավ ոսկե մեդալի:
- «Այբ»-ի ռոբոտիկայի թիմը՝ իր 2 ռոբոտներով, «Թրինիտի» քոլեջի (Կոնեկտիկուտ, ԱՄՆ) հրշեջ ռոբոտների միջազգային մրցույթում հայտնվեց լավագույն հնգյակում: Մրցույթին մասնակցում էր 73 թիմ:
- «Այբ» ավագ դպրոցի՝ գերմաներեն ուսումնասիրող աշակերտների խումբը մասնակցեց «Աշակերտներն ուսուցանում են աշակերտներին» միջազգային նախագծին: Մեր գերմանախոսների պատրաստած տեսաֆիլմերը աշխարհի 18 երկրների 54 ֆիլմերի հետ միասին մասնակցեցին մրցույթին և արժանացան «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին:
- Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Այբ»-ի երգչախմբի անդրանիկ մենահամերգը՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 145-ամյակին:
- Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված շարադրանքի և նկարչության մրցույթում «Այբ»-ի աշակերտները գրավեցին առաջին հորիզոնականներ:
- «Գրանիշ» հայկական գրական ակումբի կայքում հրապարակվեց «Այբ»-ի աշակերտուհու «Ձեր թույլտվությամբ» հայերեն պատմվածքը:

- «Այբ» տարրական դպրոցի շախմատի ուսուցչուհի Շուշաննա Սարգսյանը դարձավ Հայաստանի կանանց շախմատի 69-րդ առաջնության հաղթող:
- Օլիմպիադաների հանրապետական փուլում «Այբ»-ի աշակերտները նվաճեցին 23 դիպլոմ ու գովասանագիր:
- «Այբապատում» ծրագրի շրջանակներում Արցախի Ծմակահող գյուղում հավաքված 5-9-րդ դասարանցի 40 աշակերտ ուսումնասիրեցին ինֆորմատիկա, Scratch և Linux՝ «Այբ» ավագ դպրոցի 3 աշակերտների և ինֆորմատիկայի ուսուցչի օգնությամբ:
- «Այբ»-ի աշակերտները դարձան «Վիքիպեդիա» առցանց հանրագիտարանի հայերեն հոդվածների ամենաակտիվ խմբագիրներն ու հոդվածագիրները: Մի քանի ամսվա ընթացքում նրանք խմբագրեցին և ստեղծեցին 3000-ից ավելի հոդված:
- TEDxKids@Yerevan-ում ելույթ ունեցավ «Այբ» ավագ դպրոցի 2 աշակերտ:



- «Այբ» ավագ դպրոցի 45 աշակերտների կեսից ավելին մասնակցեց միջազգային քննություններին՝ SAT, SAT առարկայական թեստեր, TOEFL: Մեր աշակերտների միջին միավորները կազմեցին SAT առարկայական թեստերից՝ 740 (800- ից), TOEFL-ից՝ 96 (120-ից):
- ՀՀ նախագահի՝ ՏՏ բնագավառում ամենամյա կրթական պարգևին «Այբ» դպրոցից արժանացավ 2 աշակերտ՝ վկայագրի հետ միասին ստանալով դրամական պարգև:
- «Այբ» ավագ դպրոցի 2014 թ. բոլոր շրջանավարտներն ընդունվեցին այնպիսի բուհեր, ինչպիսին են ՀԱՀ-ը, ԵՊՀ-ն, ԵՊԲՀ-ն, ՀՊՏՀ-ն, Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, Ռուսաստանի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» համալսարանը, Սանկտ Պետերբուրգի մանկաբուժության պետական համալսարանը, Ռուսաստանի Կինեմատոգրաֆիայի համամիութենական պետական ինստիտուտը, Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանը, Կոլումբիայի համալսարանը և այլն:



## 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- Երևան քաղաքի դպրոցականների շախմատի օլիմպիադայում «Այբ» դպրոցի թիմը զբաղեցրեց մրցանակային երրորդ տեղը:
- Գյումրիում կայացած հումանիտար և բնագիտական առարկաների հանրապետական օլիմպիադայում «Այբ»-ի հավաքականն ունեցավ 31 մրցանակակիր:
- «Այբ» դպրոցի 11-րդ դասարանցի Ստեֆանի Գևորգյանը Անապայում անցկացված Սև ծովի գավաթի 2014 թ. Վինդսերֆինգի Ռուսաստանի բաց առաջնությունում իր տարիքային խմբում գրավեց առաջին պատվավոր տեղը: Ստեֆանին Հայաստանի վինդսերֆինգ առագաստանավային սպորտաձևի բազմակի չեմպիոն է:
- «Այբ» ավագ դպրոցի 12-րդ դասարանցի 64 աշակերտների կեսից ավելին մասնակցեց միջազգային քննություններին՝ SAT-ին, SAT առարկայական թեստերին և TOEFL-ին: Մեր աշակերտների միջին միավորները գերազանցեցին նախորդ տարվա արդյունքները՝ կազմելով SAT առարկայական թեստերից՝ 746 (800-ից), TOEFL-ից՝ 98 (120-ից):
- «Այբ»-ի մեկ աշակերտ հանդես եկավ որպես խոսնակ TEDxKids@ Yerevan-ում:
- Փոխօգնության և փորձի փոխանակման «Այբապատում» նախագծի շրջանակում «Այբ» դպրոցի թիմը՝ 9 աշակերտ և 3 ուսուցիչ, ուղևորվեց Հայաստանի Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղ:
- Տորոնտոյի համալսարանի կողմից անցկացվող կենսաբանության ամենամյա միջազգային օլիմպիադայում «Այբ» դպրոցն ունեցավ 2 մրցանակակիր. 12-րդ դասարանի աշակերտներ Հասմիկ Ավագյանը և Մարի-Ալիս Մինասյանը զբաղեցրին 6-րդ հորիզոնականը՝ աշխարհի 289 դպրոցի 4122 աշակերտների թվում:



- Երևանի պետական համալսարանի անցկացրած ամենամյա առարկայական օլիմպիադայում (15 առարկա) «Այբ» ավագ դպրոցի 6 աշակերտ դարձավ մրցանակակիր:
- «Գրանիշ» հայկական գրական ակումբի կայքում հրապարակվեց «Այբ»-ի աշակերտի «Մատյան Հեգնության» հայերեն ստեղծագործությունը:
- Ռուսաստանի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի կազմակերպած «Բարձր հարգ» միջտարածաշրջանային դպրոցական օլիմպիադայում «Այբ» դպրոցն ունեցավ 4 մրցանակակիր: Մարտին Միրաքյանը Հայաստանում իր տարեկիցների մեջ միակն էր, ով այս օլիմպիադայում դիպլոմի արժանացավ ինֆորմատիկա առարկայից:
- Դպրոցականների առարկայական համապետական օլիմպիադայի քաղաքային փուլում «Այբ» դպրոցն արժանացավ 23 դիպլոմի (6-ը՝ 1-ին կարգի, 8-ը՝ 2-րդ կարգի, 9-ը՝ 3-րդ կարգի)՝ 10 առարկայից: Այս ցուցանիշով դպրոցն առաջատարների թվում էր:
- Դպրոցականների առարկայական համապետական օլիմպիադայի մրցանակակիրներ, 12-րդ դասարանցի Հասմիկ Ավագյանն ու Մարտին Միրաքյանն ընդգրկվեցին, համապատասխանաբար, կենսաբանության ու ինֆորմատիկայի միջազգային օլիմպիական թիմերում:
- ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը դպրոցում իրենց գործունեությամբ աչքի ընկած 2 աշակերտի, 4 ուսուցչի, ինչպես նաև դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Մեսրոպ քհն. Արամյանին պարգևատրեց տարբեր շքանշաններով:





- Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում «Այբ» դպրոցն ունեցավ 17 մրցանակակիր. մեկը ստացավ 1-ին կարգի դիպլոմ, 8-ը՝ 2-րդ կարգի, 2-ը՝ 3-րդ կարգի, և 6 հոգի ստացավ գովասանագիր:
- «Այբ» դպրոցի երգչախումբը ելույթով հանդես եկավ Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած համերգին՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: Ապա նույն համերգային ծրագրով «Այբ»-ի երգչախումբը ելույթներ ունեցավ նաև Ֆրանսիայի երեք քաղաքում:
- Դանիայի Օրհուս քաղաքում տեղի ունեցած Կենսաբանության միջազգային օլիմպիադայում «Այբ» դպրոցի աշակերտուհի Հասմիկ Ավագյանը նվաճեց արծաթե մեդալ՝ կենսաբանությունից հայաստանցի աշակերտների առաջին անգամ նվաճած երկու արծաթներից մեկը:
- «Այբ» ավագ դպրոցի շրջանավարտներն ընդունվեցին և ուսումը շարունակեցին ՀՀ և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ Կալիֆոռնիայի Բերկլիի, Սան Դիեգոյի, Դեյվիսի համալսարաններ (ԱՄՆ), Դալյանի տեխնոլոգիական համալսարան (Չինաստան), «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային գիտահետազոտական համալսարան (Ռուսաստան), Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ (Ռուսաստան), Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆրանսիական համալսարան, ԵՊՀ, ԵՊԲՀ, ՀՊՏՀ և այլն:

## 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

- «Այբ» դպրոցի կենսաբանության ավագ ուսուցիչ Մերի Հովսեփյանն արժանացավ ՀՀ նախագահի պարգևին: Նա պարգևատրվեց Մովսես Խորենացու մեդալով՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ներդրած ավանդի համար:
- ՀՀ մշակույթի նախարարությունը «Այբ» դպրոցի երաժշտության ուսուցչուհի Արուսյակ Մանթաշյանին շնորհեց նախարարության պատվոգիր և պարգևատրեց «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով:
- «Այբ» դպրոցի 2015 թ. շրջանավարտ Միքայել Հովակիմյանը և ավագ դպրոցի աշակերտ Աշոտ Մարգարյանն արժանացան ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևին՝ «Լավագույն աշակերտ ՏՏ ոլորտում» անվանակարգում:
- «Այբ» համայնքը «ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամի («Հայաստան Ծառատունկ Ծրագիր») հետ մեկնեց Արագածոտն մարզի Ուջան գյուղ՝ մասնակցելու գարնանային ծառատունկին: «Այբ»-ի աշակերտների ջանքով Ֆիդայիների պուրակում տնկվեց 160 ծառ ու թուփ:
- «Այբ» դպրոցի աշակերտներն «Այբապատում» ծրագրի շրջանակում այցելեցին Աչաջուր գյուղի միջնակարգ դպրոց:
- «Այբ» դպրոցի ռոբոտաշինության խմբակն ԱՄՆ-ում անցկացված հեղինակավոր «Ռոբոտիկայի ազգային մարտահրավեր» (National Robotics Challenge) մրցույթից տուն վերադարձավ արծաթե մեդալով և հեղինակավոր «Honda Innovation Award» մրցանակով: «Այբ»-ի երեխաներն իրենց սումո ռոբոտով մրցեցին ավելի քան 1300 մասնակցի և 400 ռոբոտի հետ:



- «Այբ» դպրոցի աշակերտները զբաղեցրին լավագույն տեղերը անգլերեն պոեզիայի ասմունքի մրցույթի մարզային փուլում՝ երկու 1-ին, երեք 2-րդ և մեկ 3-րդ կարգ: Մրցույթին մասնակցում էր մոտ 40 աշակերտ:
- ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում այբեցիները գրանցեցին լավագույն ցուցանիշներ՝ մեկ 1-ին, չորս 2-րդ, ութ 3-րդ կարգ և վեց գովասանագիր:
- Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացած անգլերեն պոեզիայի ասմունքի մրցույթի հանրապետական փուլում «Այբ» դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Սուսաննա Խառատյանը և 10-րդ դասարանի աշակերտ Արամ Ադամյանը ճանաչվեցին հաղթողներ՝ գրավելով 1-ին և 2-րդ տեղերը:
- «Այբ» դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սիմոն Ջոհրաբյանը հանդես եկավ TEDxKids@Yerevan-ում:
- «Այբ»-ի «The Battle of Evermore» երաժշտական խումբը տվեց իր առաջին երկժամյա համերգը «Այբ» դպրոցի «Հայաստան» դահլիճում:
- Հայաստանը 3 բրոնզե մեդալ նվաճեց Վիետնամի Հանոյ քաղաքում կայացած 2016 թ. Կենսաբանության միջազգային օլիմպիադայում: Մեդալներից մեկը նվաճեց «Այբ» դպրոցի 2016 թ. շրջանավարտ Տիգրան Աղաբեկյանը:
- Ինչպես միշտ, «Այբ» դպրոցի շրջանավարտները գրանցեցին հրաշալի արդյունքներ միջազգային քննություններից. միջին ցուցանիշները SAT Subject Tests քննություններից կազմեցին 753 (հնարավոր 800-ից), իսկ SAT General քննությունից՝ 2130 (հնարավոր 2400-ից):

«Այբ» դպրոցի 2015 և 2016 թթ. շրջանավարտներն ընդունվեցին ԱՄՆ-ի և Եվրոպայի առաջատար բուհեր, այդ թվում՝ Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարան (ԱՄՆ), Լյովենի կաթոլիկ համալսարան (Բելգիա), Լոնդոնի արվեստների համալսարան (Մեծ Բրիտանիա), Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլիանի համալսարան (Գերմանիայի), Ռոտերդամի Էրազմուս համալսարան (Հոլանդիա): Ուրախալի է, որ տարեցտարի ավելի մեծ թվով շրջանավարտներ իրենց ապագա մասնագիտությունն ընտրում են բնագիտական, մաթեմատիկական և ՏՏ ոլորտներից: Նաև երիտասարդներից շատերը հետագա ուսումը նախընտրում են ստանալ Հայաստանի առաջատար բուհերում:



# ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՂ

«Այբ» դպրոցն ի սկզբանե ստեղծվել ու գործարկվել է մի գերնպատակով՝ դառնալու համակարգային փոփոխությունների խթան՝ բազմապատկվելով ու իր հետևից տանելով ամբողջ կրթական համակարգը, բերելով ցանկալի և լայնածավալ փոփոխություններ, նպաստելով հայկական կրթության մրցունակության բարձրացմանը:

«Այբ» դպրոցն առաջինն էր, որ հանդգնեց կրթական նոր որակ ստեղծել սեփական ուժերով: Դպրոցի պատերի ներքո մշակված ու փորձարկված գերազանցության նոր հարթակը՝ Արարատյան բակալավրիատը, դարձավ հասանելի ոչ միայն մի քանի հարյուր հայ աշակերտի համար, այլև ընդունվեց որպես պետական ծրագիր, որը կներդրվի ՀՀ և Արցախի դպրոցներում: «Այբ» դպրոցն ապացուցեց, որ Հայաստանում հնարավոր է ստեղծել միջազգային այլ հայտնի կրթական ծրագրերին ոչնչով չզիջող առաջադեմ, հայալեզու, հայաշունչ կրթություն:



## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

«Այբ» դպրոցը ցույց տվեց, որ կրթությունը չի կարող սահմանափակվել լոկ գիտելիքներ փոխանցելով, որ դա չէ դպրոցի առաքելությունը: Կրթության՝ լայն իմաստով, և դպրոցի՝ նեղ իմաստով, առաքելությունն է՝ ձևավորել մարդկային նոր որակներ, դաստիարակել գիտելիքներով, հմտություններով ու արժեքներով զինված սերունդներ:

Այն բովանդակային նորամուծությունները, որ «Այբ» դպրոցը ցույց տվեց, ընդունելի ու ընդօրինակելի դարձան այլ դպրոցների համար: «Այբ»-ն առաջինն էր, որ մեծ շեշտ դրեց կրթության ամբողջականության վրա՝ ապահովելով աշակերտների ուսումն ու զարգացումը հավասարապես բոլոր ուղղություններով՝ գիտություն ու գիտելիքներ, արվեստ ու գեղեցիկի ճանաչողություն, սպորտ ու առողջ ապրելակերպ, հասարակական պատասխանատվություն և արժեքային հենք: «Այբ»-ի նորարարություններից էր նաև նախագծային ուսուցումը, երբ աշակերտն ուսումնառության գործընթացում պետք է պարտադիր ներգրավված լինի իրական նախագծերում ու ծրագրերում՝ ստեղծելու որևէ հանրօգուտ կամ նորարարական արդյունք, տեսնելու իր գիտելիքի պիտանելիությունն արդեն այսօր, դնելու իր հետագա մասնագիտացման հիմքերը:

## ՈՒՍՈՒՑՉԻ ՆՈՐ ՊԱՏԿԵՐ

«Այբ»-ը հանրության շրջանում ձևավորեց ուսուցչի նոր դիմագիծ՝ աշխարհի հանդեպ բաց, մշտապես սովորող, հետազոտող, դասավանդմանը զուգահեռ իր մասնագիտական գործունեությամբ զբաղվող մարդ, որի համար աշխատանքը դպրոցում առաքելություն է:







## ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Այբ» դպրոցն ազնվության և սկզբունքայնության միջավայր է: Համայնքը վստահում է դպրոցին, քանի որ վերջինս երբեք հետ չի կանգնում «Այբ» համայնքի սահմանած սկզբունքներից, չի անում բացառություններ: «Այբ» դպրոցում չկան արտոնյալներ, «Այբ»-ում բոլորը հավասար են՝ ընդունվելիս և ուսման ընթացքում: Դպրոցը հետևողական է ակադեմիական ազնվության հարցում:

## ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ

«Այբ» դպրոցը ձևավորեց դպրոցաշինության և ուսումնական միջավայրի նախագծման նոր մշակույթ՝ դուրս գալով ճանաչելի ստանդարտներից և դպրոցն իր ճարտարապետական ու համալրվածության լուծումներով դարձնելով ապագայի հասանելիությունը ցույց տվող մի վայր, ուր չկան երևակայության և ստեղծարարության սահմաններ, ուր ամեն բան տրամադրում է սովորելու և սովորեցնելու: Այժմ նոր կառուցվող դպրոցները (ոչ միայն Հայաստանում, այլև այլ երկրներում) վերցնում են «Այբ»-ի ինչպես գաղափարները, այնպես էլ պատրաստի լուծումները:

## ՀԱՄԱՅՆՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը դարձավ գաղափարի շուրջ մարդկանց համախմբելու օրինակ: «Այբ»-ի համայնքաստեղծ փորձը գրավիչ ու հետաքրքիր դարձավ ոչ միայն կրթության տեղական դերակատարների ու շահառուների համար. բազմաթիվ պատվիրակություններ այլ երկրներից գալիս են հասկանալու «Այբ»-ի «հրաշքը», փոխառելու համայնքաստեղծման, դպրոցի կայացման ու հզորացման գործում համայնքի դերի ազդեցության մեխանիզմներն ու հնարքները, համայնքի շնորհիվ դպրոց կայացնելու և շարունակաբար ընդլայնելու գաղտնիքները:

## ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ժամանակին դպրոցների համար բարերարություն անելը կարող էր սահմանափակվել դասասենյակի վերանորոգմամբ կամ համակարգչային տեխնիկայի նվիրաբերությամբ: «Այբ»-ի ցույց տված օրինակների շնորհիվ բարերարությունը դպրոցների համար դարձավ առավել համակարգային ու թիրախային՝ օրինակ ծառայելով դեպի դպրոց նոր ֆինանսական միջոցներ ուղղելու և դպրոցների ու առհասարակ կրթական ոլորտի զարգացման գործում երկարաժամկետ ներդրումներ անելու համար:

## ԱՊԱԳԱՅԻՆ ՄԻՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը ոչ այլ ինչ է, քան երկրի ապագային ծառայող, այդ ապագան այսօր կառուցող կառույց: Դպրոցը, նրա շուրջ հավաքված համայնքը, աշակերտներն ու շրջանավարտները կյանքում իրենց մարդկային որակներով, հմտություններով ու կրթությամբ կայանալու ձգտումներով, արդեն այսօր իրականացվող ծրագրերով ու տված արդյունքներով հավատ են ներշնչում ապագայի նկատմամբ՝ դառնալով երկրում երկարաժամկետ ներդրումների օրինակ:

## ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ

«Այբ» դպրոցում սովորում են Հայաստան վերադարձած տասնյակ ընտանիքների երեխաներ: Այստեղ դասավանդում են հայրենիք վերադարձած ուսուցիչներ: «Այբ» դպրոցն ընտանիքներ է հետ պահել արտագաղթից, քանի որ լուծում է տվել երեխաների կրթության խնդրին: Շնորհիվ միջավայրի, կրթական որակի և միջազգային ճանաչման՝ «Այբ» դպրոցը լավագույն ընտրությունն է այն ընտանիքների համար, որոնք երկարաժամկետ ծրագրեր են կապում Հայաստանի հետ, կարևորում են հայեցի դաստիարակությունը, սակայն նաև կրթության որակն ու այն միջավայրը, որում դաստիարակվում են նրանց զավակները:



# Ուշագրավ փաստեր և թվեր

## 2016 Թ. ՕԳՏՈՍՏՈՍԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

70%+
**ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ**
«Այբ» ավագ դպրոցը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է

756 480 348
**ՀՀ ԴՐԱՄ**
կամ մոտ
1 756 410
**ԱՄՆ ԴՈԼԱՐ**
կազմել է «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդը
2011-2016 ուստարիներին

40
**ԱՌԱՐԿԱ ԵՎ ՆԱԽԱԳԻԾ**

8
**ԱՌԱՐԿԱՅԱԽՄԲՈՒՄ**
դասավանդվում է «Այբ» ավագ դպրոցում,
38 և 23 առարկա և նախագիծ դասավանդվում են միջին ու տարրական դպրոցներում, համապատասխանաբար

93
**ՈՒՍՈՒՑԻՉ**
22-ը՝ գիտ. դոկտոր և թեկնածու,
1-ը՝ արվեստի վաստ. գործիչ,
6-ը՝ սպորտի վարպետ
2016 թ. հուլիսի դրությամբ

86
**ՄՐՑԱՆԱԿ**
հանրապետական օլիմպիադաներում

10
**ԱՌԱՐԿԱՅԻՑ**

**ԲՐՈՆԶԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼՆԵՐ**
միջազգային օլիմպիադաներում

**ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ ԵՎ «HONDA INNOVATION AWARD»**
ԱՄՆ-ի «National Robotics Challenge» մրցույթում

**SAT GENERAL**
2145/2400

**SAT SUBJECTS**
746/800

**TOEFL**
98/120

«Այբ»-ի աշակերտների միջին ցուցանիշները միջազգային քննություններից



# «Այբ» դպրոց

## ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2010 թ. հունվար**
ՀՀ կառավարությունը տարվա իր առաջին նիստին որոշում կայացրեց Երևանում Թբիլիսյան խճուղուն հարող 6,5 հա հողատարածքը հատկացնել «Այբ կրթական հանգույց» («Այբ» դպրոց) ծրագրի իրականացման համար:

**2010 թ. նոյեմբեր**
Մեկնարկեց «Այբ» ավագ դպրոցի շինարարությունը:
Հիմնվեց «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը: Տեղի ունեցավ հիմնադրամի ՀԽ-ի առաջին նիստը:

**2011 թ. հոկտեմբեր**
Բացվեց «Այբ» ավագ դպրոցն առաջին 72 աշակերտի համար:

**2012 թ. հուլիս**
Մեկնարկեց «Այբ մեդիա դպրոց» նախագիծը: Մեդիագրագիտության, տեսանկարահանման և տեսամոնտաժի դասընթացներին մասնակցեց Հայաստանի տարբեր մարզերի ավագ դպրոցների 62 աշակերտ:

**2012 թ. հուլիս**
Մեկնարկեց «Այբամառ» ծրագիրը, որի շրջանակում հայաստանցի և սփյուռքահայ երեխաները վարգացնում են գիտելիքներն ու հաղորդակից դառնում հայկական մշակույթին:

**2012 թ. հոկտեմբեր**
Բացվեց «Այբ» դպրոցի երկրորդ մասնաշենքը: Երկու մասնաշենքերը միասին ապահովեցին 3230 քմ ուսումնական մակերես՝ արդեն 152 աշակերտի համար:
Գործարկվեց «Այբ» դպրոցի կայքը՝ www.aybschool.am հասցեով:

**2013 թ. հունիս**
«Այբ» դպրոցը տվեց իր առաջին 17 շրջանավարտին: 2011-2016 ուստարիների ընթացքում դպրոցը մեծ կյանք է ճանապարհել 192 շրջանավարտի, ովքեր իրենց ուսումը շարունակում են ՀՀ և արտերկրի առաջատար բուհերում:

**2013 թ. սեպտեմբեր**
Բացվեց «Այբ» տարրական դպրոցն առաջին 53 աշակերտի համար:

**2013 թ. սեպտեմբեր**
«Այբ» ավագ դպրոցում բացվեց ռոբոտիկայի արդիական լաբորատորիա՝ դառնալով երրորդը դպրոցում գործող կենսաբանության ու քիմիայի և ֆիզիկայի ու աստղագիտության լաբորատորիաներից հետո:

**2013 թ. հոկտեմբեր**
Տեղի ունեցավ «Այբ» կրթական ավանում կառուցվելիք Սրբոց Թարգմանչաց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

2010 2011 2012 2013 2014

**2014 թ. սեպտեմբեր**
Բացվեց «Այբ» միջին դպրոցը: «Այբ» դպրոցի բոլոր երեք բաղադրիչներում այդ պահի դրությամբ ուսանում էր շուրջ 320 աշակերտ, իսկ Դիլիջանի կենտրոնական դպրոցի հետ միասին «Այբ»-ի ծրագրերով սովորում էր 416 աշակերտ:

**2015 թ. սեպտեմբեր**
Մեկնարկեց նախագծային ուսուցման ծրագիրը, որի հիմքում ընկած է «սովորել անելով» սկզբունքը: Ծրագրի շրջանակում ստեղծվեց 9 ակումբ, որոնք իրականացնում են 10 նախագիծ:

**2015 թ. հոկտեմբեր**
Տեղի ունեցավ «Այբ» դպրոցի երրորդ մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը: 180 աշակերտի համար նախատեսված 4200 քմ ընդհանուր մակերեսով այս քառահարկ շինությունը ներառելու է նոր ու ավելի շատ հնարավորություններ ուսումնառության համար:

**2015 թ. դեկտեմբեր**
Արարատյան բակալավրիատը Հայաստանում պաշտոնապես ճանաչվեց որպես այլընտրանքային կրթական ծրագիր:

2014 2015 2016 2017 2018

# Դիլիջանի կենտրոնական դպրոց

2013-2015 ուստարիներ

ԻՆՉՈՒ

# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցը պատկանում է «Այբ» դպրոցների ընտանիքին և «Այբ»-ի՝ արտաքին պատվերով և ֆինանսավորմամբ իրագործած առաջին դպրոցական նախագիծն է: «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում ստեղծվել է դպրոցի քաղաքային մոդել՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաքելությունը նույնն է, ինչ ցանկացած «Այբ» դպրոցի՝ կերտել կրթված, առաքինի, սեփական ակունքներին հաղորդ և մեր երկրի ու մեր աշխարհի ապագայի պատասխանատվություն ստանձնելու պատրաստ երիտասարդների սերունդներ:



## ԻՆՉՊԵՍ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցը (ԴԿԴ) հիմնական դպրոց է՝ տարրական և միջին բաղադրիչներով: Դպրոցը գործում է 2013 թվականից: Այն կառուցվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ որպես իր դիլիջանյան մասնաճյուղի աշխատակիցների երեխաների կրթությունն ապահովող կարևորագույն օղակ: Դպրոցում մեծ մասամբ, սակայն, սովորում են տեղացի երեխաներ, և այստեղ ուսանելու պայմանները նույնն են բոլոր աշակերտների համար: ՀՀ ԿԲ-ն ամբողջությամբ ֆինանսավորում է դպրոցի գործունեությունը: Դպրոցի բովանդակության մշակման ու գործարկման, դպրոցի կառավարման և «Այբ»-ի չափանիշներին համապատասխան ուսումնական բովանդակության վերահսկողության համար պատասխանատու է «Այբ» կրթական հիմնադրամը:

Դպրոցի կառավարման նպատակով ստեղծվել է «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամը, որի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Հոգաբարձուների խորհրդի կազմում են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ ՀՀ ԿԲ ներկայացուցիչներ:


EXIT



ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի կրթական փիլիսոփայությունը և ուսումնական բովանդակությունը խարսխված են մի շարք կարևոր սկզբունքների վրա, որոնք նույնն են «Այբ» կրթական համակարգի դպրոցների համար: Այդ սկզբունքներն ու մեթոդաբանությունները կարելի է խմբավորել հետևյալ մի քանի հիմնական կետերում:

## ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԴԿԴ-ն հնարավորություն է ընձեռում աշակերտներին՝ լիարժեքորեն իրագործելու սեփական ներուժը և մրցունակ լինելու համաշխարհային կրթական դաշտում: Մեր նպատակն է՝ ձևավորել համակողմանի զարգացած առողջ անհատների, ովքեր ջանում են հասնել սեփական մտածողության, հույզերի և գործերի ներդաշնակության, ովքեր տեսնում են սեփական ջանքերի, ձեռքբերումների, բացահայտումների իմաստն ընդհանուր պատկերի մեջ:




EXIT





## ԽՈՐԱՑՎԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու և ստեղծագործելու հնարավորություն՝ առանց ամբողջական կրթության սկզբունքը խախտելու: Աշակերտները հնարավորություն ունեն ներգրավվելու օլիմպիական խմբակներում, ստեղծագործական ակումբներում, իրականացնելու անհատական և խմբային նախագծեր՝ սկսած կրտսեր դպրոցից: Ընդ որում նախագծերի իրականացման գործում կարևոր մաս են կազմում նաև ծնողները: Տարվա ընթացքում քիչ չեն նաև համատեղ հետաքրքիր նախագծերը «Այբ» դպրոցի և Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտների միջև:

## ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԻՄՔ

Որպեսզի մեր աշակերտները լինեն ոչ միայն գիտելիքներով զինված, այլև բարոյապես մաքուր, համամարդկային արժեքներ կրող, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացիներ, ԴԿԴ-ում կազմակերպվում է հասարակական ծառայություն տարբեր ոլորտներում, երբ երեխայի ստեղծած արդյունքը հանրայնորեն կիրառելի ու պիտանի է և ծառայում է որևէ լավ նպատակի: Մենք ձգտում ենք նաև ներգրավել աշակերտներին Դիլիջան համայնքի զարգացման տարբեր ծրագրերում և նախաձեռնություններում՝ խրախուսելով նրանց կողմից հասարակական պատասխանատվության ստանձնումը:

## ՃԻՇՏ ՄԻՋԱՎԱՅՐ

Ինչպես Երևանի «Այբ» դպրոցում, այնպես էլ Դիլիջանում մենք մեծագույն պատասխանատվությամբ ենք մոտեցել կրթական միջավայրի նախագծմանը: «Այբ»-ի կրթական տարածությունը համակում է ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու և արարելու: «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի (storaket.com) նախագծային լուծումները վերջնական մարմնավորման ենթարկեցին Դիլիջանի կենտրոնական դպրոցի կրթական գաղափարը. դպրոցը ոչ միայն ուրույն ու տարբերվող ճարտարապետական կառույց է Հայաստանում, այլև մեր երկրից առաջին նախագիծն է, որ տեղ է գտել միջազգային հեղինակավոր ճարտարապետական archdaily.com հանդեսի էջերում, իսկ վերջերս էլ՝ ճարտարապետական ուշագրավ նախագծերի կանադական ca.archello.com կայքում: Դպրոցը զինված ու համալրված է ստեղծագործ գաղափարների իրականացմանն անհրաժեշտ տեխնոլոգիաներով, որպեսզի մեր աշակերտները համաքայլ ընթանան արագորեն զարգացող գիտությանը և իրական ժամանակում փորձարկեն ու բացահայտեն ստացած գիտելիքները:

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի կրթական բովանդակությունը աշխարհի լավագույն կրթական համակարգերից բացառիկ ծաղկաքաղ է, որը համադրվել է մեկ ամբողջական պատկերի մեջ և հարմարեցվել հայկական իրականությանը: Այսօր ԴԿԴ-ի կրթական ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, որն անցել է տարիների փորձարկում «Այբ» հիմնադրամի ծրագրերի շրջանակներում և «Այբ» դպրոցում, աշակերտներին տալիս է առաջատար և մրցունակ կրթություն՝ հասանելի իրենց հարազատ քաղաքում:







## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մենք ձգտում ենք ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ ցանկացած աշակերտ ներգրավված լինի առօրյա կյանքում իրականացվող տարբեր ծրագրերում կամ նախագծերում՝ գործնականորեն ստուգելով ու կիրառելով իր գիտելիքները, զարգացնելով իր հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտությունները, կողմնորոշվելով ապագա մասնագիտության ընտրության հարցում: Շնորհիվ ծրագրային ուսուցման՝ աշակերտն այսօր արդեն ստեղծում է ինչ-որ բան՝ կիրառելով իր գիտելիքը:







ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի տարրական բաղադրիչում մեր մանկավարժական մոտեցումն է՝ սովորեցնել երեխային փոքր տարիքից ինքնուրույն ուսումնասիրել շրջապատող աշխարհը, հետազոտել, հայտնագործել, ստեղծագործել: Երեխան պետք է հավատարիմ մնա իր բնույթին, ուստի ուսուցումը մեր դպրոցում կազմակերպվում է երեխայի տարիքին, հետաքրքրություններին համապատասխան: Երեխային պետք է թույլ տալ խաղալ և խաղալով սովորել. չէ՞ որ խաղը շատ լուրջ գործ է: Երեխային պետք է խրախուսել, ոգևորել: Դպրոցի կարևոր գործառույթներից մեկը հետազոտական, ստեղծագործական աշխատանքի խթանումն է: Իրականացվում է նաև տարբերակված ուսուցում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի հնարավորությունները, կարողությունները, հակումները:

Միջին դպրոցի ուսումնական ծրագրի նպատակն է աշակերտներին տալ ամբողջական և բարձրորակ կրթություն՝ շարունակելով նրանցում զարգացնել վերլուծական մտածողություն, կազմակերպչական հմտություններ, նախաձեռնողականություն, սեփական արարքների և գործերի հանդեպ պատասխանատվության գիտակցում, ամուր հոգևոր արժեքներ, գեղագիտական բարձր ճաշակ, առողջ կենսակերպի ձգտում:



Դպրոցում դասավանդումը աշակերտակենտրոն է: Մեծ կարևորություն է տրվում աշակերտների խմբային աշխատանքներին, որոնց ժամանակ ուսուցիչն ունի ուղղորդող դեր: Խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտին ոչ միայն իր կարծիքն արտահայտելու, այլև լսելու ուրիշներին, համագործակցելու և ներկայացնելու հիմնավորված խմբային կարծիք և մոտեցում: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի ընդլայնումը, երբ տարբեր ուսուցիչներ աշխատում են միմյանց հետ՝ հարմարեցնելու իրենց ծրագիրն այնպես, որ աշակերտները զինված լինեն մի քանի առարկաներից անհրաժեշտ գիտելիքներով՝ հետազոտական և ուսումնասիրական նախագծեր իրականացնելու համար:

Ուսումնական տարվա ընթացքում միջին դպրոցում ձևավորվում են օլիմպիական խմբակներ՝ տարբեր առարկաներից աշակերտների գիտելիքները խորացնելու և օլիմպիադաներին նրանց նախապատրաստելու համար:

Դպրոցում իր գործունեությամբ առանձնանում է մեդիա խումբը, որի նպատակն է զարգացնել աշակերտների մեդիա հմտությունները (լուսանկարչություն, տեսանկարահանում, մոնտաժ, նյութերի պատրաստում) և լուսաբանել տարատեսակ միջոցառումներն ու դպրոցական առօրյան: Մեդիա խումբն ակտիվ մասնակցություն է ունենում նաև տարբեր առարկայական նախագծերի ներկայացման գործում:

Դպրոցում գործում է նաև ռոբոտաշինության խմբակը, որում աշակերտները ստեղծում են տարբեր խնդիրներ լուծող ռոբոտներ՝ գործի դնելով իրենց տրամաբանությունը, զարգացնելով գիտելիքները ռոբոտաշինության, ֆիզիկայի, տեխնոլոգիայի, ճարտարագիտության ոլորտներում:

Աշակերտներն ակտիվորեն մասնակցում են տարբեր միջոցառումների, նախագծերի, որոնք զարգացնում են նրանց ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները և արժեքային համակարգը: Աշակերտները հաճախ հանդես են գալիս նմանատիպ միջոցառումների հիմնական կազմակերպիչների դերում: Աշակերտների ֆիզիկական զարգացման և առողջության պահպանման համար կազմակերպվում են ակտիվ միջոցառումներ՝ մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ, սպորտլանդիաներ: Զանազան մրցույթ–հարցախաղերը, ինտելեկտուալ խաղերը, ընթերցանության ժամերը նպաստում են երեխաների մտավոր և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

Փորձառու ուսուցիչներ, կրթական նոր մեթոդներ և մոտեցումներ, երեխայի բազմակողմանի զարգացումն ապահովող առարկայացանկ, լուսավոր և ընդարձակ լսարաններ՝ հագեցած ուսումնական տեխնիկայով և կահավորված հարմար, ակնահաճո կահույքով. այսպիսին է Դիլիջանի կենտրոնական դպրոցը:



# ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | Տարրական դպրոց | Միջին դպրոց |
|---|---|---|
| **Օտար լեզուներ** | Անգլերեն<br>Ռուսերեն | Անգլերեն<br>Ռուսերեն<br>Գերմաներեն<br>Իսպաներեն |
| **Ճշգրիտ գիտություններ** | Մաթեմատիկա<br>Հետաքրքրաշարժ մաթեմատիկա և տրամաբանական խաղեր | Մաթեմատիկա<br>Հանրահաշիվ<br>Երկրաչափություն<br>Տեղեկատվական տեխնոլոգիաներ |
| **Բնագիտական առարկաներ** | Գիտություն | Ֆիզիկա<br>Քիմիա<br>Կենսաբանություն<br>Բնագիտություն |
| **Հասարակագիտական առարկաներ** | | Հայոց պատմություն<br>Համաշխարհային պատմություն<br>Աշխարհագրություն |
| **Արվեստներ** | Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Պարարվեստ<br>Երգ-երաժշտություն | Պարարվեստ<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Երգ-երաժշտություն |
| **Ֆիզիկական պատրաստություն** | Ֆիզկուլտուրա<br>Լող | Ֆիզկուլտուրա<br>Լող |
| **Ծրագրահեն ուսուցում** | | Մեդիա ակումբ<br>Ռոբոտիկա |
| | Շախմատ | |
| | | ՆԶՊ և առաջին բուժօգնություն |
| **Հայագիտական առարկաներ** | Մայրենի խոսքի մշակույթ | Մայրենի<br>Հայոց լեզու<br>Հայ գրականություն |


super minds

ՈՎՔԵՐ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի կառավարման նպատակով «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ստեղծվել է «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամը, որի ղեկավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է։ ԴԿԴ-ի հոգաբարձուների խորհուրդն ունի վեց անդամ*, և խորհրդի կազմը հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից։ Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է։ ՀԽ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ ՀՀ ԿԲ ներկայացուցիչներ։

ԴԿԴ-ի հոգաբարձուների խորհրդի** անդամներն են՝

* ՀԽ վեցերորդ անդամի տեղը ժամանակավորապես թափուր է։
** Հոգաբարձուների խորհուրդն այս կազմով գործելու է մինչև 2018 թ. ապրիլը։




Դիլիջանի կենտրոնական դպրոցն ունի շուրջ 50 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է «Այբ»-ի այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և «Այբ» դպրոցում:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

# ԴԿԴ ՀԱՄԱՅՆՔ

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ*

Դիլիջանի կենտրոնական դպրոցում աշխատում են առաջատար մանկավարժներ ու արվեստագետներ: Դպրոցում աշխատում է 34 ուսուցիչ (2015-2016 ուստարի), որոնցից՝

- 1-ը՝ գիտությունների թեկնածու,
- 1-ը՝ սպորտի վարպետ,
- 6-ը՝ արտասահմանում վերապատրաստված կամ դասավանդման փորձառությամբ,
- 16-ը՝ 10 և ավելի տարիների մանկավարժական փորձառությամբ:

Մանկավարժական անձնակազմը ներառում է նաև դպրոցի հոգեբանին և լոգոպեդին, իսկ ադմինիստրատիվ անձնակազմը՝ բուժքույրին, ովքեր աջակցում են երեխաներին և ուսուցիչներին, հաճախ նաև ծնողներին՝ ուսման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման հարցում:

* Բոլոր տվյալները ներկայացված են 2016 թ. մայիսի 31-ի դրությամբ:

## ԴԿԴ աշխատակիցների բաշխվածությունը ըստ քաղաքների




## ԴԿԴ աշխատակազմի տոկոսային հարաբերությունն ըստ գործունեության ոլորտի



## ԱՇԱԿԵՐՏՆԵՐ*

Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտին բնութագրում են «Այբ» համակարգի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները: Մեր աշակերտները ճանաչող են և արարող, բարեխոհ ու հոգատար, նախաձեռնող և հավասարակշռված, զգոն և բաց:

Աշակերտներն ընդունվում են դպրոց՝ մի քանի փուլից (անհատական հանդիպումներ, թեստեր, հարցազրույց) բաղկացած ընդունելության գործընթացի միջով անցնելուց հետո: Ընդունելության ընթացքում դպրոցը հավասարապես կարևորում է ապագա աշակերտի ինչպես գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այնպես էլ դաստիարակությունը, արժեհամակարգը և աշխարհընկալումը: Տարրական և միջին դպրոցների ընդունելության ժամանակ կարևորագույն խնդիրներից մեկն է նաև դիմորդի ընտանիքի հետ ծանոթությունը. մեզ համար կարևոր է վստահ լինել, որ դպրոցը և դիմորդի ընտանիքը կիսում են երեխայի դաստիարակության վերաբերյալ մոտեցումներն ու գաղափարները, և որ երեխայի հետ աշխատանքը թե՛ տանը և թե՛ դպրոցում կտարվի նույն ուղղությամբ:

2015-2016 ուստարում աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 121:

* Բոլոր տվյալները ներկայացված են 2016 թ. մայիսի 31-ի դրությամբ:


45%
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
55%
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ


53%
ԱՂՋԻԿ
47%
ՏՂԱ


27%
ԵՐԵՎԱՆ
72%
ԴԻԼԻՋԱՆ
1%
ՎԱՆԱՁՈՐ







## ԾՆՈՂՆԵՐ

Կարևոր է նաև ծնողների ակտիվ ներգրավվածությունը դպրոցի կյանքում: Ծնողների հետ կազմակերպվում են շարունակական հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվում են դպրոցի ընդհանուր խնդիրները, ինչպես նաև ներկայացվում և ծրագրվում են հետագա անելիքները: Հանդիպումները նպատակ ունեն նաև ամրապնդելու ծնող-երեխա-դպրոց կապը, օգնելու ծնողներին լուծել երեխայի դաստիարակության հետ կապված խնդիրները: Ընտանիք-դպրոց համագործակցությունն ավելի սերտ դարձնելու համար տարբեր միջոցառումների կազմակերպման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև ծնողները:

Դպրոցի ծնողական խորհուրդը հրաշալի հարթակ է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետության բարձրացման համար: Խորհրդի նիստերի ընթացքում վեր են հանվում ծնողների ընդհանուր մտահոգությունները, քննարկվում են խնդիրների լուծման հիմնական ուղղությունները, ապա թե՛ ծնողները, թե՛ դպրոցը պատասխանատվություն են ստանձնում խնդիրները լուծելու և հնչեցված առաջարկները դպրոցի առօրյայում ներդնելու ուղղությամբ:

# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

Դիլիջանի կենտրոնական դպրոցը, կազմելով Դիլիջան համայնքի մի մասը, կարևորում է քաղաքի ու դիլիջանաբնակների կրթական և մշակութային զարգացումը և մշտապես հյուրընկալում տարաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստում են այդ զարգացմանը: Նախորդ տարիներին դպրոցի հարկի տակ անցկացվել են՝

- «Էկոտուրիզմի կազմակերպման հիմնախնդիրներն ու զարգացման միտումները» երիտասարդ գիտնականների դպրոցը, որը թույլ է տալիս զարգացնել մասնակիցների գիտելիքները էկոտուրիզմի բնագավառում.
- «Եվրոպական երիտասարդական պառլամենտ-Հայաստան»-ի (EYP Armenia) կազմակերպած ակադեմիական ֆորումը, որին մասնակցել են 30 երկրներից 120 երիտասարդներ.
- ներկայացումների դիտումներ, որոնց մասնակցել են աշակերտներ և ուսուցիչներ հարևան դպրոցներից.
- շրջայցեր ինչպես դիլիջանցիների համար, այնպես էլ քաղաքի բազմաթիվ հյուրերի:



Դպրոցն իր հարկի տակ արդեն ավանդաբար հյուրընկալում է ամենամյա Խնձորի փառատոնը, որին մասնակցում են քաղաքի բոլոր կրթական հաստատություններն իրենց թիմերով: Փառատոնն արդեն հասցրել է դառնալ դիլիջանյան աշնան յուրօրինակ խորհրդանիշներից:

Դպրոցն ակտիվորեն խրախուսում է աշակերտների մասնակցությունը տարբեր օլիմպիադաների, մրցույթների, կրթական նախագծերի, դասընթացների: Մեր սաները ակտիվորեն մասնակցում և նշանակալի հաջողություններ են ունենում՝

- առարկայական օլիմպիադաների քաղաքային, մարզային և հանրապետական փուլերում (ամենաբարձր միավորներ քաղաքային փուլում, լավագույն արդյունքներ հանրապետական փուլում),
- «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում (մշտապես մի քանի լավագույն արդյունք),
- «Մեղու» հայերենի մրցույթում («Մեղու-2016»-ում ԴԿԴ-ի աշակերտուհին դարձավ բացարձակ հաղթողը ՀՀ-ում և ԼՂՀ-ում),
- Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլում (միանգամից երեք մասնակից թիմ),
- «Պատանի մաթեմատիկոս» օլիմպիադայում (հանրապետական փուլում մեր աշակերտը միակ ներկայացուցիչն էր Տավուշից),
- ռուսաստանյան «Высшая проба» օլիմպիադայում (մեր աշակերտներն անցան եզրափակիչ փուլ, իսկ մեկը ստացավ գովասանագիր անգլերենից՝ միակը ամբողջ Հայաստանից),







- «Ամենախելացին» հեռուստանախագծում (4 աշակերտ, որը կազմում է 4%-ը ամբողջ ՀՀ-ից մասնակցող 96-ից):
- UWC միջազգային դպրոցի կողմից կազմակերպվող Գիտության փառատոնում,
- «Կարողությունների զարգացման» սեմինարներում՝ կազմակերպված «Դիլիջանի համայնքային կենտրոնի» կողմից:

Հարկ է անդրադառնալ նաև մեր ուսուցիչների ձեռքբերումներին:

- Բանահյուսության ուսուցչուհի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ազգագրագետ, բանահավաք Արուսյակ (Վեներա) Սահակյանը ազգային մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման գործում ունեցած նշանակալի ավանդի համար պարգևատրվել է մշակույթի նախարարության ոսկե մեդալով:
- Երաժշտության ուսուցչուհի Արուսյակ Մանթաշյանը, ով «Նախաբեմ» կրթամշակութային ասոցիացիայի փոխնախագահն է, «Նռան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնի շրջանակներն ընդլայնելու և երեխաների հետ տարվող լավագույն աշխատանքի համար մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է նախարարության պատվոգրով և «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով:
- Ֆիզկուլտուրայի ուսուցիչ Նվեր Ղարիբյանը Ուժային եռամարտի աշխարհի գավաթի առաջնությանը 100 կգ քաշային կարգում 250 կգ արդյունքով գրավել է 2-րդ տեղը:
- Ռուսերենի ուսուցչուհի Սվետլանա Ռասսկազովան դարձել է միջազգային երրորդ «Ռուսաց լեզվի արտասահմանյան լավագույն ուսուցիչ» մրցույթի դափնեկիր:

# ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի կենտրոնական դպրոցն ազդեցություն ունեցավ մի քանի կապակցված ոլորտներում՝ կրթական, մշակութային, սոցիալական, համայնքաստեղծ:

Դպրոցը խթան դարձավ մայրաքաղաք Երևանից, Հայաստանի տարբեր շրջաններից, անգամ արտերկրից ընտանիքների՝ մշտական բնակության նպատակով Դիլիջան տեղափոխության համար, որպեսզի նրանց երեխաները հնարավորություն ստանան սովորելու ԴԿԴ-ում: Դպրոցն իր շուրջ կարողացավ հավաքել իր սկզբունքներին և արժեքներին համապատասխանող, կրթության կարևորությունը գիտակցող մարդկանց՝ աշխատակիցների, ուսուցիչների, աշակերտների ու ծնողների, և ստեղծել կայուն ու միասնական կրթական համայնք: Դիլիջանյան միապաղաղ իրականությունը լցվեց բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներով՝ շնորհիվ դպրոցական համայնքի միասնական աշխատանքի:

Դպրոցը պարբերաբար բացում է իր դռները Դիլիջանի և շրջակա քաղաքների ու գյուղերի տարբեր դպրոցների առջև՝ խթանելով համատեղ աշակերտական նախագծերի իրականացումը և ուսուցիչների փորձի փոխանակումը: Թեև դպրոցը դեռ նոր է սկսում իր տարեգրությունը, սակայն արդեն ունի



ավանդույթ դարձած տոներ, որոնցից է Խնձորի փառատոնը: Ուսումնական առաջին իսկ տարում դրվեց ամենամյա սպորտլանդիայի ավանդույթը. այս միջոցառմանը սիրով մասնակցում է մեր ամբողջ համայնքը: Սպորտլանդիայի հիմնական նպատակն է՝ ամրապնդել դպրոց-ծնող կապը, խրախուսել աշակերտների և նրանց ծնողների առողջ ապրելակերպը և բարձրացնել նրանց մարզական ոգին:

Իր գործունեության երեք տարիների ընթացքում դպրոցը հասցրել է դառնալ նաև ազգային և քրիստոնեական տոները դիլիջանցիներին նոր շնչով ու շուքով մատուցող կառույց՝ գրագետ կերպով և, ինչու չէ, գվարճալի հնարքներով փոխանցելով դրանց խորհուրդը միջոցառումների մասնակիցներին: Դրանցից են Թարգմանչաց տոնը, Ամանորը, Սուրբ Ծնունդը, Բարեկենդանն ու Տյառնընդառաջը, Սուրբ Զատիկը և այլն:

Դպրոցը դարձել է նաև նոր աշխատատեղերի աղբյուր: Դպրոցի աշխատակիցների 23%-ը Երևանից Դիլիջան տեղափոխվել է ընտանիքով: Դպրոցում սովորելու հնարավորություն են ստացել նաև այդ ընտանիքների երեխաները:



Աշխատակիցների 23%-ը հենց Դիլիջան քաղաքից է, 20%-ը՝ այլ քաղաքներից, 34%-ը՝ Երևանից:

2015 թ. փետրվարի 2-ին նոր շենք տեղափոխվելուց հետո էականորեն բարձրացավ դպրոցի համայնքային դերը: Դիլիջանի և հարևան համայնքների մյուս դպրոցների աշակերտները և ուսուցիչները, ինչպես նաև Դիլիջանում գտնվող տարբեր անհատներ և կազմակերպությունների ներկայացուցիչներ պարբերաբար այցելում են մեզ: Կազմակերպվում են քննարկումներ համայնքի մյուս դպրոցների տնօրենների հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Իրականացվում են համատեղ դասերի շարքեր այլ դպրոցների հետ:

Դիլիջանի կենտրոնական դպրոցի և համայնքի մյուս դպրոցների համատեղ զարգացմանը նպաստում է նաև քաղաքում ստեղծված բոլոր կրթական հաստատությունների ներկայացուցիչներից բաղկացած նախաձեռնող խումբը, որը քննարկում է համատեղ կազմակերպվող միջոցառումները և գտնում համագործակցելու արդյունավետ ուղիներ:



# Ուշագրավ փաստեր և թվեր

## 2016 Թ. ՄԱՅԻՍԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտների

73%-Ը

**ԴԻԼԻՋԱՆՑԻ Է**

Աշակերտների ընդհանուր թվի 26%-ը Երևանից է, 1%-ը՝ Վանաձորից

118

**ԱՇԱԿԵՐՏ**

ուսանում է ԴԿԴ-ում
(1-9-րդ դասարաններում)

27/91

ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների և Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների հարաբերակցությունը

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ**

25%-Ը

տեղափոխվել է Դիլիջան այլ քաղաքներից՝ ԴԿԴ-ում դասավանդելու նպատակով

**ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

4200 քմ ընդհանուր մակերես, որը տրամադրում է սովորելու

**ՀԱՅԱՍՏԱՆԻ**

2-ՐԴ

**ՖԱԲԼԱԲԸ**

գործում է դպրոցին կից և ծառայելու է Դիլիջանի կրթական հաստատություններին

118

**ԱՇԱԿԵՐՏ**

5

**ՀՀ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ**

ուսանում է ԴԿԴ-ում

47

**ԱՇԽԱՏԱԿԻՑ**

5

**ՀՀ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ**

աշխատում է ԴԿԴ-ում



**ՄԵՂՈՒ. ՀԱՅԵՐԵՆԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ**

2015

*մրցույթի միակ և բացառիկ հաղթողը մեր դպրոցի աշակերտուհին է*

**ԽՆՁՈՐԻ ՓԱՌԱՏՈՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ**

*Անցկացվում է ամեն տարի՝ Դիլիջան քաղաքի բոլոր կրթական հաստատությունների աշակերտների մասնակցությամբ*

**ՊԱՏԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ**

2016-ի

**ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ**

*Տավուշի մարզի միակ ներկայացուցիչը մեր աշակերտն է*

**ՏԱՐԵԿԱՆ**

500+

**ՀՅՈՒՐ**

